

## ՌՈՒԲԷՆ Գ. (1175-1187)

### ԵՒ ԻՐ ԿՏԱԿԸ

ԵՐՈՒԱՆԴ Լ. ՔԱՍՈՒՆԻ

Կիլիկիոյ Հայկական Իշխանապետութեան զարտուղի, եւ սակայն յանդուգն քաղաքականութեան հեղինակ՝ Մլեհ Լեւոնի Ռուբինեանի (1170-1175 թթ.)՝ դաւադրարար սպանութենէն ետք, Հայ իշխաններ կը հրաւիրեն Մլեհի եղբոր՝ Ստեփանէի աւագ որդին՝ Ռուբէնը, որպէսզի իր հօրեղբոր գահը գրաւէ. «...եւ առաքեն ի Պապեոսն եւ կոչեն զաւագ որդին Ստեփանէի զՌուբէն՝ դնել յաթոռ նախնեաց իւրոց»<sup>1</sup>:

Հայ պատմագրութեան մէջ Ռուբէն Ստեփանէի Ռուբինեանը յիշատակուած է Ռուբէն Բ. եւ կամ՝ Ռուբէն Գ. անուններով: Սմբատ Սպարապետի համաձայն, երբ Թորոս (Բ.) Լեւոնի Ռուբինեան (1145-1169 թթ.) կը մեռնի, ան «դնէր զաստիարակ տղային իւրոյ Ռուբինի՝ զիշխանն թումաս, որ կալաւ զաշխարհն թորոսի զամ մի»<sup>2</sup>: Վերո-

\* Մլեհ Ռուբինեան կը մտայ Հայկական Կիլիկիոյ Իշխանապետութեան ամենէն յանդուգն քաղաքագէտներէն մէկը, որուն քաղաքական ուղեգիծին ու գործունէութեան հանդէպ մեր ունեցած հետաքրքրութիւնը՝ դեռ տասնամեակներ առաջ մղած էր մեզ անոր նուիրելու առանձին ուսումնասիրութիւն մը՝ Զարտուղի Քաղաքականութեան Մը Վախճանը եւ Լեւոն Ա- Թագաւոր եւ Անոր Ժառանգը (Պէյրուս, 1960), որ ցարզ կը մտայ ձեռագիր վիճակի մը մէջ: Վերոյիշեալ աշխատասիրութենէն հրատարակուած հատուածի մը համար տես՝ Երուանդ Լ. Քասունի, Մլեհի Նկարագիրը, «Զարթօնք» Բացառիկ, Պէյրուս, 1962, էջ 228-230:

1. Սմբատայ Սպարապետի Տարեգիրք, Վենետիկ, 1956, էջ 192: Նաեւ տես՝ Միխայէլ Ասորի, Ժամանակագրութիւն, Երուսաղէմ, 1871, էջ 476:

2. Սմբատ Սպարապետ, էջ 189:

իշեալ տողերը ենթադրել կու տան թէ Թորոս Բ-ի մահէն ետք Հայկական Կիլիկիոյ տէրը գործնականօրէն խնամակալ թո՛վմասն էր, մինչ Թորոսի որդի Ռուբէնը, որ ծնած էր շուրջ 1165 թ.ին<sup>3</sup>, հօրը մահուան օրերուն հազիւ թէ չորս կամ հինգ տարիքը բոլորած պիտի ըլլար, եւ ուրեմն՝ ոչ մէկ կերպ իր ներկայութիւնը կրնար պարտադրել արքունիքին կամ երկրին մէջ: Պարագայ մը, զոր Սմբատ կը հաստատէ իր յաջորդ տողերուն մէջ, երբ կը գրէ թէ Մլեհ՝ Հալէպի տիրոջ՝ Նուր էլ Տինի (1146-1174 թթ.) զինուորական օգնութեամբ մտաւ Կիլիկիա, եւ «տիրապետեաց իշխանութեան եղբօրն իւրոյ»<sup>4</sup>: Եթէ Թորոսի որդի Ռուբէնը իր ձեռքին մէջ ունեցած ըլլար իշխանութիւնը, —ինչ որ շատ հեռու է հաւանականութենէ ու տրամաբանութենէ, — Սմբատ պիտի ըսէր թէ Մլեհ իր եղբօրորդւոյն իշխանութիւնը գրաւեց:

Սամուէլ Անեցի չի յիշատակեր Թորոս Բ-ի որդի Ռուբէնը: Ան կը գրէ. «... գերծանի մեծն Թորոս ի գերութենէ եւ գայ տիրէ բոլոր Կիլիկիոյ՝ եւ մասինն Սօրիոյ՝ կացեալ Պարոն ամս ԺԴ [?] մեռանի... եւ նստի եղբայրն նորա չարասիրտն Մլեհ՝ Պարոն. ամս է: Եւ ապա Ռուբէն որդին Ստեֆանէի նստի Պարոն...»<sup>5</sup>:

Վահրամ Բարունի կը գրէ թէ Թորոս Բ. «մատաղ որդի» մը կը թողու ետին, որուն, ինչպէս եւ երկրին խնամակալութիւնը վստահելով իր աներոջ՝ Թովմասի: Սակայն Բարունի մոռացութեան կու տայ Թորոս Բ-ի զաւկին՝ Ռուբէնի անունը<sup>6</sup>:

Հեթում Պատմիչ իր՝ «Պատմութիւն Ազգին Ռովբինանց, Թէ Որպէս Տիրեցին Կիլիկիո» խորագրով փոքրածաւալ ժամանակագրութեան մէջ, ըստ երեւոյթին հետեւելով Բարունիի, կը յիշատակէ թէ Թորոս Բ. իր զաւկին խնամակալութիւնը, ինչպէս եւ երկրին «պայլութիւնը» կը վստահէ «յաներն իւր Թումաս»: Սակայն Հեթում Պատմիչ անակնկալի առջ կը գնէ ընթերցողը, երբ կը գրէ. «Եւ Թորոսի [Բ.] մնացեալ որդի մի Լեւոն...»<sup>7</sup>: «Մանր ժամանակագրութիւններ»ու խմբագիրը՝ Վազգէն Յակոբեան, տրամաբանական կը գտնէ Հեթում Պատմիչի վկայութիւնը, երբ կը գրէ. «... Հաւանաբար թիւրիմացութեան մէջ է Սըմ-

3. W. H. Rud-Collenberg, *The Rupenides, Hethumides and Lusignans (The Structure of The Armeno-Cilician Dynasties)*, Paris, 1963, Table I (Rup.).

4. Սմբատ Սպարապետ, էջ 189:

5. Սամուէլ Անեցի, *Հաւաքումն Ի Գրոց Պատմագրաց*, Վաղարշապատ, 1893, էջ 136:

6. Վահրամայ Բարունույ Ոսանաւոր Պատմութիւն Ռուբինեանց, Փարիզ, 1859, էջ 210:

7. Հեթում Պատմիչ, *Պատմութիւն Ազգին Ռովբինանց Թէ Որպէս Տիրեցին Կիլիկիոյ* (տես՝ Վ. Ա. Յակոբեան, *Մանր ժամանակագրութիւններ ԺԳ-ԺԸ Դարեր*, Բ. հար., Երևան, 1956), էջ 102:

բատը եթէ նկատի ունենանք, որ հայերը սովորաբար իրենց որդուն կոչում են մահացած հօր անունով, այս դէպքում կը լինի՝ Լեւոն [Ա.] - Թորոս [Բ.] - Լեւոն [?]<sup>8</sup>:

ԺԴ. դարու հեղինակ Ներսէս Պալիենցի, իր՝ «Իշխանութիւնք Եւթագաւորք Հայոց» խորագրով ժամանակագրութեան մէջ, Թորոս Բ.ի զաւկին՝ Ռուբէնի կը շնորհէ մէկ տարուան իշխանութիւն, ու զայն կը զետեղէ Կիլիկիոյ Հայկական Իշխանապետութեան գահակալներու շարքին: Ներսէս Պալիենցիի համաձայն.

«...»

Պարոն Թորոս, որդի Լեւոնի, ամս ԺԳ(13):

Պարոն Ռուբէն, որդի սոցա, ամս Ա(1):

Պարոն Մլեհ, եղբայր Թորոսի, ամս Է(7):

Պարոն Ռուբէն, որդի Ստեֆանէի, եղբոր Թորոսի...»<sup>9</sup>:

Սակայն ԺԷ. դարու Անանուն ժամանակագիր մը, իր՝ «Կարգ Թագաւորաց Ազգիս Հայոց Եւ Պարսից Թէ Ուստի Սերեալ Թագաւորեցին» փոքրածաւալ գործին մէջ, զանց ընելով Թորոս Բ.ի որդի Ռուբէնը, Ստեֆանէի որդի Ռուբէնը կը ճանչնայ իբր Ռուբէն Բ.: Ան կը գրէ.

«...»

... Թորոս երկրորդ, որ է անդրանիկ որդի Լեւոնի,

... Մլեհ, կրտսեր որդի Լեւոնի,

... Ռուբէն երկրորդ, որ է անդրանիկ որդի Ստեֆանէի եւ թոռն Լեւոնի...»<sup>10</sup>:

Ու այսպէս՝ շփոթը կը շարունակուի եւ հայ նոր պատմագրութեան մէջ, Հայր Միքայէլ Չամչեանցէն սկսած մինչեւ մեր օրերը: Ռուբէն Ստեֆանէի Ռուբինեանը իբր Ռուբէն Բ. կը ճանչնան Հայր Մ. Չամչեանց, Հայր Ղեւոնդ Ալիշան, Ստ. Պալասանեան, Բակուրան, Մաղաբիա Արք. Օրմանեան, Կ. Բասմաջեան, Հր. Աճառեան, Զ. Պտուկեան, Ս. Պ. Պողոսեան, Ա. Գ. Սուբիասեան եւ Վահան Քիւրքճեան<sup>11</sup>: Իսկ Ռուբինեան նոյն գահակալը Ռուբէն Գ. անունով կը

8. Նոյնը, էջ 112:

9. Ներսես Պալիենցի, *Իշխանութիւնք եւ Թագաւորք Հայոց* (տես՝ Վ. Ս. Յակոբեան, *Մանր ժամանակագրութիւններ*, Բ. հտր.), էջ 205:

10. Անանուն ժամանակագիր, *Կարգ Թագաւորաց Ազգիս Հայոց Եւ Պարսից Թէ Ուստի Սերեալ Թագաւորեցին* (տես՝ Վ. Ա. Յակոբեան, *Մանր ժամանակագրութիւններ ԺԳ-ԺԸ Դարեր*, Ա. հտր., Երեւան, 1951), էջ 257:

11. Տես՝ Միքայէլ վրդ. Չամչեանց, *Պատմութիւն Հայոց*, Գ. հտր., Վենետիկ, 1786, էջ 140: Հայր Ղեւոնդ Ալիշան, *Սրտուան*, Վենետիկ, 1885, էջ 57: Ստեֆաննոս Պալասանեան, *Պատմութիւն Հայոց*, Թիֆլիս, 1902, էջ 344: Բակուրան *Մի Տեսութիւն Կիլիկիոյ Հայկական Իշխանութեան Վրայ*, Պէյրութ, 1959, էջ 15 (Ա. սպագրութիւն՝ Նիկոսիա, Կիպրոս, 1904): Մաղաբիա Արք. Օրմանեան, *Ազգապատում*, Ա. հտր., Կ.

Ճանչնան Հայր Սահակ Տէր Մովսէսեան, Հրանդ Պաստրմաճեան, Տոբթ. Յ. Տէր Ղազարեան, Գ. Գ. Միքայէլեան, Սիրարփի Տէր Ներսէսեան, Մ. Կ. Զուլալեան եւ «Հայկական Սովետական Հանրագիտարանը»<sup>12</sup>:

Եթէ Մ. Կ. Զուլալեան՝ Ռուբէն Գ. կոչոււմը կ'արդարացնէ անով, որ ինք կ'ընդունի Թորոսի որդի Ռուբէնի միամեայ իշխանութիւնը, երբ կը գրէ. «Թորոս Բ. ին յաջորդեց իր փոքրահասակ որդի Ռուբէնը (1169-1170), որի խնամակալն էր Թովմաս Պայլը: Սակայն մի տարի անց գահին տիրացաւ Ռուբէնի [Բ.] հօրեղբայր Մլեհը»<sup>13</sup>, «Հանրագիտարան»ի «Կիլիկեան Հայաստան» յօդուածին հեղինակները՝ Ս. Պօղոսեան եւ Մ. Կատվալեան, յստակ կերպով արձանագրելէ ետք, թէ՛ «Թորոս Բ. ին յաջորդած Մլեհ իշխանը (1169-1175) բիւզանդացիներից եւ խաչակիրներից վերջնականապէս ազատագրեց երկրի ծովեզերեայ մի շարք շրջաններ»<sup>14</sup>, «Կիլիկեան Հայաստանի Մեծ Իշխանների Գահացանկ»ին մէջ կը յիշեն Թորոսի որդի Ռուբէնը՝ «Ռուբէն Բ. (1169)» անունով ու տարեթիւով<sup>15</sup>:

Ոչ-հայ ծանօթ հեղինակներ, որոնք Կիլիկիոյ Հայկական Պետութեան պատմութիւնը ուղղակի կամ անուղղակի կերպով իրենց ուշադիր սերտողութեան առարկան դարձուցած են, ընդհանրապէս, բա-

Պոլիս, 1912, սիւմ. 1453: Կ. Բամաջեան, Հայկական Ընդհանուր Դրամագիտութիւն եւ Հայաստանի Վերաբերեալ Դրամներ, Վեներտիկ, 1936, էջ 136: Հր. Անտոնեան, Հայ Անձնանունների Բառարան, Գ. հտր., Երևան, 1948, էջ 327: Զ. Պտուկեան, Ռուբինեան Իշխաններու Դրամները, «Հանդէս Ամսօրեայ», 1965, թիւ 4-6, սիւմ. 287: Ս. Պ. Պօղոսեան, Հայ Ժողովրդի Պատմութիւն, Բ. հտր., Երևան, 1965, էջ 123: Ա. Գ. Սուֆիասեան, Կիլիկիայի Հայկական Պետութեան եւ Իրաւունքի Պատմութիւն, Երևան, 1978, էջ 28: Vahan M. Kurkjian, *A History of Armenia*, New York, 1964, p. 228:

12. Տես՝ Հայր Սահակ Տէր-Մովսէսեան, Պատմութիւն Հայոց Սկիզբէն Մինչեւ Մեր Օրերը, Մասն Բ., Վեներտիկ, 1923, էջ 467: Հրանդ Պաստրմաճեան, Հայոց Պատմութիւն, Ա. հտր., (թրգ. Մ. Իշխան), Պէյրուս, 1954, էջ 252 (Ա. տպագրութիւն ֆրանսերէն-բնագիր, Բարիզ, 1949): Գ. Գ. Միքայէլեան, Կիլիկիայի Հայկական Պետութեան Պատմութիւն, Երևան, 1952, էջ 130 (նուսբէրն): Sirarpie Der Nersessian, *Kingdom of Cilician Armenia*, in: K. M. Setton, *A History of the Crusades*, Philadelphia, 1962, p. 643. Տոբթ. Յ. Տէր Ղազարեան, Հայկական Կիլիկիա, Անթիլիաս, 1966, էջ 268: Ս. Վ. Բոննագեան, Սոցիալ Տնտեսական Յարաբերութիւնները Կիլիկեան Հայկական Պետութիւնում, ԺԲ-ԺԴ. Դարերում, Երևան, 1973, էջ 149 (Տպագրուած է Ռուբէն Բ., սակայն «Նկատուած ուղղումներ եւ վրիպակներ» թղթիկով ուղղուած Ռուբէն Գ. ի): Մ. Կ. Զուլալեան, Հայկական Իշխանութեան Հիմնուած Կիլիկիայում (տես՝ Հայ Ժողովրդի Պատմութիւն, Գ. հտր., Հայկ. ՍՍՀ Գիտութիւնների Ակադեմիայի Հրատարակութիւն, Երևան, 1976, էջ 684: Հայկական Սովետական Հանրագիտարան, Ե. հտր., էջ 409:

13. Մ. Կ. Զուլալեան, Հայկական Իշխանութեան Հիմնուած Կիլիկիայում, էջ 683:

14. Հս. ական Սովետական Հանրագիտարան, Ե. հտր., էջ 408:

15. Ն. Ղ., էջ 412:

ցառութեամբ ժագ տը Մորկանի<sup>16</sup>, Ռուբէն Ստեփանէի Ռուբինեանը կը ճանչնաս: Ռուբէն Գ. անունով: Այսպէս՝ Ֆրետերիք Մաբլեր, Ռրնէ Կրուսէ, Սթիվըն Ռունսիման, Ռութ Գոլենպերկ, Թումանոֆ եւ Թ. Պոէյզ<sup>17</sup>:

Վերոյիշեալ հեղինակներուն մէջ առանձնապէս ծանր է կշիռը Գոլենպերկի, որուն աշխատասիրութիւնը՝ «Ռուբինեաններ, Հեթումեաններ եւ Լուսինեաններ-Հայ-Կիլիկեան Հարստութիւններու Կառոյցը» խորագրով, այժմ գլխաւոր ուղեցոյցն է Հայկական Կիլիկիոյ իշխող տուներու ժամանակագրութեան եւ անոնց տոհմածառերուն սերտողութեան:

Ինչ որ ալ եղած ըլլան Ռուբէն Բ. — Ռուբէն Գ. շփոթին տուն տուող պատճառները, հաւանաբար Հայկական Կիլիկիոյ ժամանակագրութեան հանդէպ արդարութիւն կատարած պիտի ըլլանք, Ռուբէն Ստեփանէի Ռուբինեանը ճանչնալով Ռուբէն Գ.: Պատմական իրողութիւն է թէ Մլեհ՝ գահը կը գրաւէր ոչ թէ իր եղբոր՝ Թորոս Բ.ի մահուան յաջորդօրը, հապա շուրջ տարի մը ետք, որու ընթացքին, եթէ Կիլիկիոյ տէրը գործնականօրէն Թովմաս Պայլն էր, Ռուբինեան գահին օրինական եւ իրաւական տէրը սակայն կը մնար Թորոս Բ.ի որդի՝ Ռուբէնը, որուն անունով միայն կարելի պիտի ըլլար պահել այդ գահին, ե՛ւ իշխանութեան օրինականութիւնը: Ու պատմական փաստ է նաեւ այն իրողութիւնը, որ երբ Մլեհ կը գրաւէ Կիլիկիոյ գահը, Թովմաս Պայլ եւ Թորոս Բ.ի որդի Ռուբէնը միաժամանակ կը հեռանան արքունիքէն. «Իսկ յորժամ տիրեաց Մլեհն իշխանութեան եղբորն իւրոյ, փախեալ Թումասն եւ գնաց յԱնտիոք: Եւ զտղայն Թորոսի առաքեցին ի հայրապետական աթոռն Հոռոմկլայն առ կաթողիկոսն, եւ անդ մեռաւ»<sup>18</sup>: Ուրեմն՝ չէ եղած նաեւ այնպէս որ Թովմաս Պայլը առանձին մնացած ըլլար Կիլիկիոյ գահին վրայ, ու անով՝ խախտած Ռուբինեան ժառանգականութեան օրինականութիւնը: Ահա թէ ինչու արդար պիտի ըլլար Թորոս Բ.ի որդին՝ Ռուբէնը, անուանել Ռուբէն Բ., եւ անոր շնորհել շուրջ մէկ տարուան Ռուբինեան գահին իրաւական տէրութեան իրաւունքը: Իսկ Ռուբէն Ստեփանէի Ռուբինեանը՝ Ռուբէն Գ.:

16. Jacques de Morgan, *The History of the Armenian People*, Boston, 1965, p. 211.

17. Frederic Maclair, *Armenia*, in: *The Cambridge Medieval History*, vol. 4, Cambridge, 1923, p. 171. Rene Grousset, *Histoire des Croisades*, tome 2, Paris, 1935, p. 683. Steven Runciman, *A History of the Crusades*, vol. 2, London, 1965, p. 419 (first publication, 1952). W. H. Rud-Collenberg, *The Rupinides...*, p. 16. C. Toumanoff, *Armenia and Georgia*, in: *The Cambridge Medieval History*, vol. 4, part 1, Cambridge, 1966, p. 629. T. S. R. Boase (ed.), *The Cilician Kingdom of Armenia*, New York, 1978, p. 14.

18. Սմբատ Սպարապետ, էջ 190:

Պատմագրութեան մէջ Ռուբէն Գ. նաեւ ծանօթ է Ռուբէն Լեոնցի անունով: Հեթում Պատմիչի «Ազգաբանութիւն Բրընձնոյն Անտիոքա» ժամանակագրութեան մէջ կը կարդանք. «Այս Ռեմունտս էառ կին զԱլիծ դուստր Ռուբէն Լէոնցոյն...»<sup>19</sup>: Ալիշան ինք եւս կ'օգտագործէ «Լեոնցի» կոչումը, երբ կը գրէ. «Անդ հանգեալ եւ եռանդուն երիտասարդն՝ Լեոնցի Պարոն Ռուբէն Բ., եղբայր Մեծին Լեւոնի»<sup>20</sup>: Ալիշան այլ առիթով մը կը յիշատակէ. «Իսկ զրիչ ոմն յամի 1217 առ Լեւոնին թագաւորաւ, զեղբայր նորին կոչէ Մեծն Ռուբէն»<sup>21</sup>: Իսկ ժամանակակից լատին հեղինակ՝ Ուիլիլմ Տիւրոսցի, Ռուբէնի մասին երբ կը գրէ, զայն կը ներկայացնէ իբր «հզօր հայ սաղբար մը»<sup>22</sup>:

Ռուբէն Գ. երեսուն տարեկան էր երբ կը գրաւէ իր հօրեղբոր՝ Մլեհի գահը: Սմբատ Սպարապետի վկայութեամբ՝ ան էր «բարեմիտ եւ առատաձեռն, տեսլեամբ գեղեցիկ», «ի զինուորութիւնս արիագոյն եւ աջողակ նետաձգութիւն»: Իշխանական գահին հետ՝ Ռուբէն նաեւ կը տիրանայ մեծ հարստութեան: Քեռին՝ Բակուրանը, Պապիրոնէն զինք ճամբու դրած ատեն «բազում գանձիւք ոսկւոյ եւ արծաթոյ» կը պարգեւատրէ, իսկ Սիս հասնելուն, ան ձեռք կը զնէ հօրեղբոր՝ Մլեհի զիւրած հարստութեան: Ռուբէն անտարբեր չի մնար զինք իշխանութեան հասցնողներուն հանդէպ: «Մեծագոյն պատիւս» կը մատուցանէ անոնց, «եւ շնորհակալեցաւ» այն բարիքին համար, զոր անոնք կատարեցին՝ «սպանին զհօրեղբայրն իւր եւ հաստատեցին զնա ի տեղի նախնեացն իւրոց»: Տակաւին՝ Ռուբէն կը սկսի իր հարստութիւնը «սփռել ի պէտս եւ յանպէտս» ու «առատապարգեւ սեղանով» բոլորին համարանքը շահիլ<sup>23</sup>:

Ռուբէն այստեղ կանգ չ'առնէր սակայն: Ան կը խոստանայ առաւելագոյնս պարգեւատրել զանոնք, որոնց ձեռքով սպաննուած էր Մլեհ: «Արք երկուք», մէկը՝ Ջահան անունով, իսկ երկրորդը՝ Ապլղարիպ անուն ներքինի մը, կը ներկայանան Ռուբէնի, թէ՛ «մեք սպանաք ձե-

19. Հեթում Պատմիչ, *Ազգաբանութիւն Բրընձնոյն Անտիոքա* (տես՝ վ. Ա. Յակոբեան, *Մանր ժամանակագրութիւններ*, Բ. հտր.), էջ 109: Ակնարկութիւնը՝ 1194 թ. ին, Լեւոն Բ. ի կողմէ Անտիոքի իսլամադարձութեան հետ խնամիական կապի ստեղծման մասին է: Լեւոն Բ. իր եղբոր՝ Ռուբէն Գ. ի դուստրը՝ Ալիծը կնութեան կուտայ Անտիոքի գահաժառանգ իշխանին՝ Ռէյմոնտի (տես՝ Սմբատ Սպարապետ, էջ 206-207):

20. Ալիշան, *Սիսուան*, էջ 232:

21. Նոյնը, էջ 58, ծան. 5:

22. William Archbishop of Tyre, *A History of Deeds Done Beyond the Sea*, vol. 2, New York, 1943, p. 491.

23. Սմբատ Սպարապետ, էջ 192:

ուովք մերովք զնա յաղագս սիրոյ քո»: Ռուբէն «յոյժ շնորհակալ» կ'ըլլայ Ջահանի եւ Ապլղարիպի, ապա՝ կը հրամայէ իւրաքանչիւրին վիզէն քար մը կապել ու «ծածկաբար» նետել գետը<sup>24</sup>:

Դժուար թէ Ջահան եւ Ապլղարիպ եղած ըլլային Մլեհի գէմ ոճիրը գործադրողները: Անոնց «խոստովանութիւնը», թէ՛ իրենք ըսպաննած էին Մլեհը, կրնար միայն ներշնչուած ըլլալ մարդկային ընչաքաղցութենէ:

Մլեհ բացայայտ կերպով գոհն էր իր վարած քաղաքականութեան: Բիւզանդիոն բնաւ պիտի չարտօնէր հայ-արաբ/խսլամական դաշնակցութիւն մը, ինչպիսին ստեղծուած էր Մլեհ-Նուր էլ Տին գինակցութեամբ: Բիւզանդիոն պիտի սպասէր պատեհ առիթին՝ չէզոքացընելու այդ գինակցութիւնը, եւ վերահաստատելու իր խախտած դիրքերը Կիլիկիոյ մէջ: Առիթը կը ստեղծուէր Նուր էլ Տինի մահով: Հայ իշխաններ ու գինուորականներ մեղսակից են դաւին: Սակայն եւ այնպէս հայ մատենագիրներ չեն յիշատակեր թէ ով գործադրեց ոճիրը<sup>25</sup>: Ուշագրաւ է սակայն Մաշտոցի անուան Մատենադարանի թիւ 7620 ձեռագրի (էջ 424ա) հաղորդած մանրամասնութիւնը, որ առաւել եւս կը հաստատէ բիւզանդական դաւին առկայութիւնը: Հոն կը կարդանք. «... ի մեռանել Նորըտնին, որ բարեկամ էր Մլեհին, իշխանքն նորա խորհեցան ըսպանանել զնայ, ըստ տիրայրսպան բարուց ազգիս եւ ըմբռնեալ կապեցին զնա եւ խնդրէին բանալին եւ զմատանին զանձուն: Եւ նա աղերսէր յիշէր զսէր եւ զաղուհաց, ոչ ըսպանանել, «Ձի այր մեղայոր եմ, թուլ տուք ապաշխարել, հանէք զաչս իմ», որժամ ետես ըսպանանեն, առ զմատանին ի բերանն, իսկ ոմն ներգնի ի զօրաց Հոմոնց (ընդգծումը մեզմէ, Ե. Հ. Ք.) փողոտեաց զնա, ածել զձեռն ի զենել տեղն հան զմատանին ի կոկորդէն եւ ըսպանեալ ընգեցին զնա եւ թաղեցաւ ի վանս իւր ի Մեծ Քարն...»<sup>26</sup>

24. Նոյնը: Միքայել Ասորիի համաձայն Ռուբէն վրէժխնդրական այս արարքին կը դիմէ, քանի որ Մլեհը սպաննողները անոր դիակը նետած էին շուներու առջ. «Եւ [Ռուբէն Գ.] չարչարեաց եւ սպան զսպանողսն հօր եղբոր իւրոյ, զի ասն քէ սպանին եւ արկին շանց. եւ վասն այսր նախատանաց ոչ կարաց ներել նոցա» (*Ժամանակագրութիւն*, էջ 476): Մլեհի նմանօրինակ վախճանի մասին կը խօսի նաեւ Ամանուն Եղեսացի (տես՝ Ամանուն Եղեսացի, *Ժամանակագրութիւն*, քարգմանութիւն բնագրից, առաջաբան եւ ծանօթագրութիւններ՝ Լ. Յ. Տէր Պետրոսեան, Երեւան, 1982, էջ 135): Հայր Սահակ Տէր Մովսէսեանի՝ «... Մլեհի դաւաճանները Ռուբէնէն վարձք պահանջելով (ընդգծումը մեզմէ, Ե. Հ. Ք.) նա զանոնք գետամոյլն ընել տուաւ՝ առաջին օրէն իր արդարակորով նկարագրին ապացոյցը տալով» (Հ. Ս. Տէր Մովսէսեան, *Պատմութիւն Հայոց*, էջ 468) տողերը իրենց մանրամասնութեան մէջ նշմարտութեան չեն համապատասխաներ:

25. Տես՝ Սամուէլ Անեցի, էջ 138: Սմբատ, էջ 191-192: Վահրամ Բարունի, էջ 211:

26. Տես՝ Վ. Ա. Յակոբեան, *Մանր Ժամանակագրութիւններ*, Բ. հտր., էջ 112,

Բայց ինչպէ՞ս բացատրել Ռուբէնի վրէժխնդրական արարքը: Դժուար թէ ինք իմացած չըլլար դէպքին մանրամասնութիւնները, եւ այն՝ որ Ջահան եւ Ապլղարիպ «խոստովանած» էին յանցանք մը, զոր իրենք չէին գործած: Տրամաբանական միակ բացատրութիւնը կը մնայ այն, որ Ռուբէն կը փորձէր յայտնել իր դժգոհութիւնը Մլեհի դէմ գործադրուած ոճիրին հանդէպ, եւ անով՝ իր անկախութիւնը հայ իշխաններէն ու Բիւզանդիոնէն, երկրին ճակատագիրը վարելու գործին մէջ: Ռուբէն տեւականօրէն շնորհակալ եւ համարատու չէր ուզեր մնալ անոնց, որոնք՝ Մլեհի սպանութենէն ետք, զինք հրաւիրած էին Ռուբինեան գահին տիրանալու: Հաշուեյարդարի ենթարկելով «ոճրագործները», ան կը հաստատէր թէ ինք Հայկական Կիլիկիոյ իշխանական գահին հասած էր ժառանգական իրաւունքով, եւ ոչ թէ հայ իշխաններուն կամ Բիւզանդիոնի շնորհքով ու բարեացակամութեամբ:

Ռուբէն անտարբեր չէր մնար հանդէպ իր Մլեհ հօրեղբոր կնոջ, որ Գրիգոր Դ. Տղայ Կաթողիկոսի (1173-1193 թթ.) քոյրն էր: Անանուն Եղեսացի պատմիչին վկայութեամբ. «Երբ Մլեհն սպանուեց, եւ իշխանութեան գլուխ անցաւ Ռուբէնը, կաթողիկոսը գնաց այնտեղ եւ, վերցընելով քրոջը, բերեց Հոռմկլա: Ռուբէնը վերջինիս երեք բերդ տուեց Կիլիկիոյ երկրում, մէկը կոչուում էր Քեֆա դ- Սարնուդ, միւսը՝ Սիման, իսկ երրորդը՝ Բանբին»<sup>27</sup>:

Ռուբէն Գ. ի իշխանութեան աւելի քան տասը տարիները կը յատկանշուին Միջին Արեւելքի մէջ արձանագրուած շարք մը կարեւոր անցուղարձեւումով, որոնցմէ ոմանք բախտորոշ նշանակութիւն ունին ամբողջ շրջանին, եւ ուրեմն՝ Կիլիկիոյ քաղաքական ճակատագրին վրայ: Ռուբէն ինք ալ երբեմն մասնակից է այդ անցուղարձեւումն, առանց որ սակայն այդ մասնակցութիւնը ունենայ քաղաքական մնայուն ուղեգիծ մը:

1175 թ.ին, երբ Ռուբէն Գ. իշխանութեան կը բարձրանար Հայկական Կիլիկիոյ մէջ, արաբ-իսլամական աշխարհը տէր կը փոխէր:

Նուր էլ Տին Ջենկի, Հալէպի տէրը, որ իր իշխանութիւնը տարա-

ծան. 21: Մաշտոցի անուան Մատենադարանի թիւ 7620 ձեռագրի նկարագրութեան ու բովանդակութեան համար տես՝ *Յուլիան Զեռագրաց Մաշտոցի Անուան Մատենադարանի*, Բ. հտր., Երեւան, 1970, սիւն. 572: Ձեռագիրը՝ *Գրիգոր Տաթևացի, Քարոզգիրք*, մասի կը բովանդակէ *Ժամանակագրութիւնք Դիպուածոց Ի Կիլիկիայ, ԺԲ-ԺԳ. զդ.* խորագրով բաժին մը:

27. Անանուն Եղեսացի, էջ 135: Յիշեալ երեք բերդերն են, ըստ Մ. Հնահիրենեանի բանաւոր կարծիքին՝ Սարվանդիքարը, Սիմանակլան եւ Վանաւերը (տես՝ նոյնը, էջ 230, ծան. 420):

ծած էր Սուրիոյ, Միջագետքի ու Տիարպեքիւրի վրայ, որուն հովանաւորութեամբ ու բանակներով Սալահ էլ Տին Այյուպի գրաւած էր Եգիպտոսը, եւ որուն ռազմական ու զիւանագիտական նուաճումներուն զիմաց Միջին Արեւելքի խաչակիր-լատին իշխանութիւնները կձկուած էին իրենց սահմաններուն մէջ, անակնկալօրէն կը մեռնէր 1174 թ.ի Մայիսի 15-ին:

Նուր էլ Տինի մահով ոչ միայն արար-խաւամական աշխարհը կը կորսնցնէր իր ամենէն իմաստուն ու սիրուած առաջնորդներէն մէկը, այլեւ, Մլեհի Հայկական Կիլիկիան՝ իր ամենէն վստահելի զինակիցը:

Սալահ էլ Տին Այյուպի (1174-1193 թթ.), որ վերջին մէկ քանի տարիներուն հազիւ յաջողած էր յարաբերութիւնները բնականոնի սահմաններուն մէջ պահել Նուր էլ Տինի հետ, դէպքերու նոր հոլովոյթէն թելադրուած՝ կը վերցնէ նախաձեռնութիւնը՝ այս վերջինին թողուցած պետութեան սահմաններուն մէջ իր մենատիրութիւնը հաստատելու: Որոշում մը, որուն գործադրութիւնը սակայն տարիներ պիտի խլէր իրմէ:

Սալահ էլ Տին անմիջապէս դեսպանութիւն մը կը ղրկէ Դամասկոս, Նուր էլ Տինի տղուն եւ յաջորդին՝ տասնամեայ Մելիք էլ Սալիհին, անոր խոստանալով իր հաւատարմութիւնը, ու միաժամանակ հրահանգելով որ Սալիհի անունը յիշուի Ուրբաթի աղօթքի ընթացքին, եւ զրոշմուի Եգիպտոսի մէջ հատանուելիք նոր դրամներուն վրայ: Սակայն էլ Սալիհի հովանաւորութեան հարցը անմիջապէս կը դրսեւորէր Սուրիոյ մէջ ներքին լուրջ պայքարի մը առկայութիւնը, ուր Սալահ էլ Տին կասկածելի դրսեցին էր՝ ե՛ւ Դամասկոսի, ե՛ւ Հալէպի տէրերուն համար: Մայրաքաղաքի իշխող շրջանակները՝ համախորհուրդ Հալէպի իրաւ տէրերուն, ու յատկապէս Նուր էլ Տինի վստահելի՝ Կիւմիշթագինի հետ, 1174 թ.ի Յուլիսի 25-ին Սալիհը կը տեղափոխեն Հալէպ<sup>28</sup>:

Սալահ էլ Տին անտարբեր չէր մնար: Ան միաժամանակ կը ձեռնարկէր իր քարոզչական, զիւանագիտական ու ռազմագիտական պայքարին, իր մականին տակ միաւորելու համար Սուրիան, որուն միասնականութիւնը առաջնահերթ նշանակութիւն ունէր խաչակիր-լատին իշխանութիւններուն դէմ մղուելիք ճակատամարտերու ընթացքին:

1174 թ.ի Հոկտ.ի 24-ին Սալահ էլ Տին կը մտնէ Դամասկոս, ուր կը զիմաւորուի իբրեւ Մելիք էլ Սալիհի «պաշտպան»ը: Ապա՝ ան կ'ամուսնանայ Նուր էլ Տինի այրիին՝ Էսմաթ էլ Տինի հետ. «ընդունուած սովորութիւն մը, եւ քաղաքականօրէն նպաստաւոր՝ նմանօրինակ պա-

28. Stanley Lane-Poole, *Saladin and the Fall of the Kingdom of Jerusalem*, Beirut, 1964, p. 135. Andrew S. Ehrenkreutz, *Saladin*, New York, 1972, pp. 121-122.

րագաներու մէջ»։ Իր եղբոր՝ Տուղտագինի վստահելէ ետք Դամասկոսը, Սալահ էլ Տին կը շարժի դէպի հիւսիս, յաջորդաբար դիմագրաւելու համար յաճախ հակադիր, բայց հիմա համատեղ իր դէմ ելած Հալէպի, Իսմայէլացիներու (Ասասիներ), Թրիփոլիի (խաչակիր) եւ հուսկ ապա՝ Հալէպի ու Մուսուլի միացեալ բանակները։ Յաղթարշաւը կ'աւարտի 1175 թ.ի Ապրիլին։ Այլուպի հիմա բացարձակ տէրն էր Սուրիոյ։ Ան կը հրահանգէ ջնջել էլ Սալիհի անուան ընթերցումը Ուրբաթի աղօթքի ընթացքին, ու կ'արգելէ անոր դրոշմուիլը նոր դրամներու վրայ։ Նուր էլ Տինի ժառանգորդին կը շնորհուի Հալէպի իշխանութիւնը միայն։ Սալահ էլ Տինի անունը տեղ կը գրաւէ Պաղատտի խալիֆ էլ Մուսթատիի (1170-1180 թթ.) անուան անմիջապէս կողքին։ Այլուպիի պահանջին ընդառաջելով, խալիֆը անոր կը շնորհէ պաշտօնաբաշխութեան վկայագիր մը, որ կը հաստատէր Սալահ էլ Տինի իշխանութիւնը Եգիպտոսի, Նուպիայի (ժամանակակից Սուտան), Մադրեպի, Արեւմտեան Արաբիոյ, Պաղեստինի ու Կեղրոնական Սուրիոյ վրայ<sup>29</sup>։

էլ Մալեք էլ Նասր Սալահ էլ Տին Եուսուֆ Իպն Այյուպ Մերձաւոր Արեւելքի արար-իսլամական աշխարհին թիւ մէկ առաջնորդն էր հիմա։

Ռուբէն Գ.ի իշխանութեան գահ բարձրանալէն տարի մը ետք, 1176 թ.ին, Փոքր Ասիոյ մէջ՝ Բիւզանդիոնի Մանուէլ Ա. Կոմնենոս (1143-1180 թթ.) կայսեր եւ Իկոնիոյ Գլըճ Արսլան Բ. (1156-1188 թթ.) սուլթանին միջեւ մղուած Միրիոքեֆալոնի ճակատամարտին ելքը իր տեւական գրոշմը պիտի թողուր ամբողջ շրջանին, եւ ուրեմն՝ Հայկական Կիլիկիոյ պատմութեան ընթացքին վրայ։

Բիւզանդիոնի Յովհաննէս Բ. Կոմնենոս (1118-1143 թթ.) կայսեր՝ Կիլիկիոյ լեռներուն մէջ որսի մը ընթացքին թունաւոր նետով մը սպաննուելէն ետք, կայսերական գահը կը ժառանգէր անոր կրտսեր որդին՝ Մանուէլ Ա., որուն իշխանութեան օրով Բիւզանդիոնի արտաքին քաղաքականութիւնը արմատական փոփոխութեան կ'ենթարկուէր։ Եթէ Յովհաննէս Բ. Կոմնենոս իր ուշադրութիւնը մասնաւորաբար կեղրոնացուցած էր Արեւելքի վրայ<sup>30</sup>, Մանուէլ կը գառնայ դէպի Ա-

29. Միխայէլ Ասորի, էջ 476-478։ Անանուց Եղեազի, էջ 136-137։ Gregory Abul Faraj Bar Hebraeus, *The Chronography, Being the First Part of His Political History of the World*, tr. from Syriac by Ernest A. Wallis Budge, vol. 1, English translation, London, 1932, p. 307. Philip K. Hitti, *Makers of Arab History*, London, 1969, pp. 124-125.

30. Արեւելքի մէջ, ու յատկապէս Կիլիկիոյ եւ Անտիոքի հանդէպ Յովհաննէս Բ. Կոմնենոսի վարած քաղաքականութեան համար տես՝ Երուանդ Հ. Քասունի, *Կիլիկիոյ Հայկական Իշխանապետութիւնը Մերձավոր Արեւելքի Քաղաքական Հոլովոյթին Մէջ* (1180-1137), Պէյրուք, 1974, էջ 202-215։

րեւմուտք, ձեռնամուխ ըլլալով քաղաքականութեան մը, որ իր աղիտալի հետեւանքը պիտի ունենար Կայսրութեան համար<sup>31</sup>: Մանուէլ, «որ ինքզինք Օգոստոսի, Կոստանդիանոսի եւ Յուստինիանոսի ժառանգորդը կը նկատէր, տարուած՝ [Հռովմէական] Կայսրութեան միութիւնը վերահաստատելու երազով, եւ ուժգնօրէն հակուած դէպի արեւմտեան ճաշակները, սովորութիւններն ու կենցաղը<sup>32</sup>, իր հնարաւորութիւնները առաւելագոյնս պիտի ծախսէր Արեւմուտքի դէմ, միայն պատահական հետաքրքրութիւն ցուցաբերելով Արեւելքի հանդէպ:

Բիւզանդական Կայսրութեան արեւելեան սահմաններուն խաղաղութիւնը ապահովելու համար Մանուէլ շարք մը ամրոցներ կը բարձրացնէ յատկապէս այն վայրերուն վրայ, ուրկէ թշնամին յաճախակի ներխուժումներ կատարած էր<sup>33</sup>: Բիւզանդիոնի հետեւողական քաղաքականութիւններէն մէկը եղած էր Փոքր Ասիոյ իսլամական տուններուն հակամարտութեանց հրահրումը: ԺԲ. դարուն՝ էլ Ղազի Դանիշմենտ եւ Ռումի Սելճուք տուները կը հանդիսանային հակամարտ երկու գլխաւոր ուժերը: Դանիշմենտները, որոնք «հին աւանդութեան մը համաձայն հայկական ծագում ունին»<sup>34</sup>, իրենց իշխանութիւնը տարածած էին Կապադովկիոյ վրայ, ամրապնդուելով Սերաստիոյ, Կեսարիոյ ու Մելիտինէի մէջ<sup>35</sup>: Մինչ Ռումի սելճուքները, որոնք կը սերէին սելճուք Քուիթուլուշի որդի Սուլէյմանէ, եւ միայն ԺԲ. դարու կէսերուն յաջողած էին հաստատուիլ Իկոնիոյ շրջակայքը, հրաժարելէ ետք Իսլամական Հին Աշխարհին մէջ ղեկավարի դեր մը ստանձնելու

31. A. A. Vasiliev, *History of the Byzantine Empire*, vol. 2, Madison and Milwaukee, 1964, p. 417.

32. Նոյնը, էջ 431:

33. Նոյնը, էջ 417:

34. Paul Wittek, *The Rise of the Ottoman Empire*, London, 1963, p. 20: Տանիշմենտներու հայկական ծագման մասին կը խօսին հայկական սկզբնաղբիւրները: Մ. Ուտհայեցի կը գրէ. «Յայսմ ամի (1104 թ., Ե.Ղ.Ք.) մեռաւ Դամիշմանն (Դանիշման, Ե.Ղ.Ք.) մեծ ամիրայն Հոռոմոց աշխարհին, որ լեւալ էր յազգէն Հայոց, այր բարի եւ շինող աշխարհի եւ էր յոյժ ողորմած ի վերայ հաւատացելոցն Քրիստոսի . . .» (Մատթէոս Ուտհայեցի, *Ժամանակագրութիւն*, Վաղարշապատ, 1898, էջ 297): Իսկ Վարդանի համաձայն. «Ի հինգ հարիւր քառասուն եւ ինն թուին (1100 թ., Ե.Ղ.Ք.) Դանիշմանն տեր Սերաստիոյ, գորմէ ասն յազգէն Հայոց, եկեալ ի վերայ Մելիտնոյ . . .» (Վարդանայ Վարդապետի *Հաւաքումն Պատմութեան*, Վենետիկ, 1862, էջ 112): Արդի հայ պատմագրութեան մէջ հարցին ստեղծած հետաքրքրութեան համար տես՝ Կոմմագենացի (Վերնդիա Ս. Քասունի), *Փիլարտոս Հայր*, Հալէպ, 1930, ծանօթութիւն 27 եւ 35: Ա. Ալպոյանեան, *Դանիշմանդեանց Մագումը*, «Ակոս» (Պէյրութ), 1946, ժԶ գիրք, էջ 111-116: Հ. Պէրպլեքեան, *Թանիշմանտներու Մագումը*, «Ակոս», Ե. Տարի, 1948, բիւ 4, էջ 102-108:

35. Stanley Lane-Poole, *The Mohammadan Dynasties*, Beirut, 1966, p. 156.

իրենց երազէն, կը բաւարարուին Փոքր Ասիոյ մէջ իրենց բաժին ինկածով ու կը սկսին մաս կազմել շրջանի պատմութեան հոլովոյթին: Ու միայն ասկէ ետք է որ անոնք կը ստանան Ռուսի Սելճուքներ անունը<sup>36</sup>: Վերոյիշեալ երկու տուներուն «պայքարը Փոքր Ասիոյ տիրապետութեան համար, պայքարն էր հիմնապէս տարրեր երկու քաղաքական ու մշակութային աւանդութիւններու»<sup>37</sup>:

Իր իշխանութեան առաջին տարիներուն, Մանուէլ զինակցած էր զանիշմենտներուն՝ ընդդէմ Ռուսի սելճուքներուն<sup>38</sup>: Աւելի ուշ, ան բարեկամական կապեր հաստատած էր Իկոնիոյ Գլըճ Արսլան Բ. ի հետ, որուն պետութեան սահմանները հիմա միայն 300 քիլոմետր հեռու էին Կ. Պոլսէն<sup>39</sup>: Այս վերջինը՝ 1161-1162 թթ. ուն, Կ. Պոլսոյ մէջ՝ ամբողջ ութսուն օրեր պաշտօնական հիւրը եղած էր Մանուէլ կայսեր: Ուստի յետոյ շարունակող՝ Գրիգոր Երէցի վկայութեամբ. «Յայսմ ամի գնաց սուլտանն իլիճ-Ասլան առ թագաւորն Յունաց Կիւռ-Մանիլն... եւ դարձաւ անտի բազում ընծայիւք, եղեալ առ իրեար դաշինս երդմամբ՝ կալ ի հնազանդութիւն թագաւորին մինչեւ յօր մահուան իւրիոյ. առեալ ի նմանէ բազում գանձս ոսկւոյ եւ արծաթոյ, եւ եկեալ ի քաղաքն իւր»<sup>40</sup>: Յուցարեւոտած եզակի ընդունելութիւնը սակայն անպայմանօրէն ակնկալուած արդիւնքը չէր պարզեւեր: Ստորագրուած դաշինքով Գլըճ Արսլան կը խոստանար զինուորական օգնութիւն տալ կայսեր. բայց մէկ քանի տարիներ ետք սուլթանը կը յայտարարէր. «Որքան աւելի ծանր վնասներու ենթարկեմ [Բիւզանդական] կայսրութիւնը, այնքան աւելի թանկագին նուէրներ կը ստանամ կայսրէն»<sup>41</sup>:

Արեւմուտքի մէջ՝ եւրոպական պետութիւնները բաժնուած էին երկու ճակատներու: Բիւզանդիոն, Գերմանիա եւ Վենետիկ զիրքորոշուած էին Ֆրանսայի, Հունգարիոյ, Սերպիոյ եւ Նորմաններու դէմ: Սակայն երբ Գերմանիոյ Գոնրատ Գ. կայսրը (1138-1152 թթ.) կը մեռնի, Մանուէլ չի յաջողիր անոր յաջորդին՝ Ֆրետերիք Պարպարոսայի (1152-1190 թթ.) հետ նոյն համագործակցութիւնը ստեղծել: Ֆրետերիք՝ Մանուէլի նման, ինք եւս տէրն էր տիեզերական կայսրութեան մտապատկերի մը: Պարագայ մը, որ հակոտնեայ զիրքերու վրայ

36. P. Wittek, *The Rise of the Ottoman Empire*, p. 21.

37. Նոյնը:

38. A. A. Vasiliev, *History of the Byzantine Empire*, vol. 2, p. 417.

39. John Bagot Glubb, *The Lost Centuries*, London, 1967, p. 87.

40. Գրիգոր Երէց, *Ժամանակագրութիւն* (տնս՝ Մ. Ուռհայեցիի *Ժամանակագրութեան* շարունակութիւնը, Մ. Ուռհայեցի, Վաղարշապատ, 1898), էջ 428:

41. George Ostrogorsky, *History of the Byzantine State*, Rutgers Univ. Press, 1969, p. 390. A. A. Vasiliev, *History of the Byzantine Empire*, vol. 2, p. 428.

կը դնէր երկու վեհապետները: Մանուէլ նաեւ կը ձախողէր ապահովել Ալեքսանդր Գ. Պապի (1159–1181 թթ.) կամեցողութիւնը՝ զինք Արեւմտաքի կայսր օծելու, հակառակ իր խոստումին որ ինք պատրաստ է Արեւելքի եւ Արեւմտաքի եկեղեցիներու միութիւնը իրականացնել: «Այս անգամ կայսրը իսկապէս այդ կամենում էր լրջօրէն. . . բայց այդ խնդրում օրթոդոքս հոգեւորականութիւնը՝ գլխաւորապէս պատրիարքը անընկճելի էր: Պապն էլ չհամաձայնուեց կայսեր օծումը. նրա շահը չէր անդառնալի բաժանուել գերմանական տէրութիւնից. նա մինչեւ անգամ չէր էլ կարող վստահանալ»: 1173 թ. էն սկսած՝ Ֆրետերիք նաեւ յարաբերութեան մէջ կը մտնէր Գլըճ Արսլանի հետ: Այս վերջինը՝ հակառակ Մանուէլի հետ ունեցած 1162 թ. ի դաշինքին, ամէն առիթ օգտագործած էր իր դիրքը ամրապնդելու Փոքր Ասիոյ մէջ՝ ի վնաս Բիւզանդիոնի: Գերմանիոյ կայսեր ցուցաբերած աջակցութիւնը սուլթանին, առաւել անկախ եւ հակաբիւզանդական դիրքերու կը մղէր այս վերջինը, ինչ որ 1175 թ. ին պատճառ կ'ըլլար Բիւզանդիոնի եւ Իկոնիոյ յարաբերութեանց խզումին<sup>42</sup>:

Մանուէլ Կոմնենոս, 1176 թ. ին ոտքի կը հանէ մեծ բանակ մը՝ գլխաւորաբար կազմուած Ուզ եւ Ֆրանգ վարձկաններէ, ու կը քալէ Ռումի սելճուքներուն դէմ, անոնց մայրաքաղաքը գրաւելու ու Գլըճ Արսլանը ձերբակալելու որոշումով: Կայսերական զօրքերը երբ կը հասնին սահմանէն ոչ հեռու գտնուող Միրիոքեֆալոնի լքուած ամրոցը, Գլըճ Արսլանի կողմէ զրկուած պատուիրակութիւն մը կը ժամանէ այնտեղ, իր հետ բերելով սուլթանին խաղաղութեան առաջարկը: Մանուէլ արհամարհանքով կը մերժէ զայն: Յաջորդ առաւօտ՝ 1176 թ. ի Սեպտ. ի 17-ին, հակառակ իր զօրավարներուն թելադրութեան, կայսրը իր բանակները կ'առաջնորդէ Փոլիգիոյ լեռնային կիրճերէն ներս, ուր սելճուք զօրքերը, որոնք նահանջ մը ձեւացուցած էին, եւ արտօնած կայսեր բանակներուն յառաջխաղացքը, անակնկալօրէն կը դառնան ներխուժողներուն դէմ: Ճակատին վրայ խուճապի մատնուող առաջին անձը կ'ըլլայ կայսրը, որ կը դիմէ փախուստի: Մանուէլի բանակները՝ իրենց շարքերուն կարգապահութիւնը կորսնցուցած, չեն յաջողիր կանոնաւոր նահանջ մը կազմակերպել: Մինչեւ օրը մթննալը, սելճուքները կը բնաջնջեն խուճապահար բիւզանդացիները: Գլըճ Արսլան չի փորձեր իր տարած յաղթանակին ամբողջական արդիւնքը քաղել: Ինքն է խաղաղութիւն առաջարկողը կրկին, պայմանով որ Մանուէլ քակէ

42. G. Ostrogorsky, *History of the Byzantine State*, pp. 383-384, 390. Հ. Գեյցեր, *Համառոտութիւն Բիւզանդական Կայսրների Պատմութեան*, (գերմաներէնէ թրգ. Մեսրոպ վրդ. Տէր Մովսիսեան), Վաղարշապատ, 1901, էջ 352-353:

Սուլայիուսի եւ Տորիլիուսի նորակառոյց ամրոցները, եւ որպէս պատերազմական տուգանք վճարէ 200,000 կտոր ոսկի եւ արծաթ, ձիեր ու թանկագին հագուստներ: Կայսրը սիրալոթար կ'ընդունի առաջարկը, ու կը քաշուի Կ. Պոլիս<sup>43</sup>:

Բիւզանդիոնի համար՝ Միրիոքեֆալոնի ճակատամարտով, դարձը ետք կը կրկնուէր 1071 թ-ի Մանազկերտի ողբերգութիւնը:

«1176 թ-ի Միրիոքեֆալոնի ճակատամարտը վերջնականապէս քանդեց Բիւզանդիոնի վերջին յոյսը՝ թուրքերը Փոքր Ասիայէն դուրս վտարելու: Ատկէ ետք՝ Կայսրութիւնը պիտի չկարենար որեւէ յատկանշական ազդու քաղաքականութիւն մը վարել Արեւելքի մէջ»<sup>44</sup>:

«Միրիոքեֆալոնը վերջին փորձն էր՝ զինուորական մեծ արշաւանքներով անհրաժեշտ սահմանային փոփոխութիւններ մտցնելու»<sup>45</sup>:

Միրիոքեֆալոնի ճակատամարտը իր ծանր թաթը դրաւ նաեւ Մանուէլ Կոմնենոսի վրայ: Ժամանակակից Տիրոսցի, որ 1179 թ-ին Կ. Պոլիս գտնուած էր, կը գրէ. «Տեւական յուշը այդ պարտութեան այնքան ճնշած էր զինք, որ ան այլեւս բնաւ չվայելեց մտքի խղաղութիւնը եւ կամ սովորական հանդարտութիւնը իր հոգիին»<sup>46</sup>:

Կիլիկիոյ սահմաններէն դուրս՝ Ռուբէնի առաջին զինուորական գործունէութիւնը տեղի կ'ունենայ 1177 թ-ին, երբ ան կը մասնակցի խաչակիր-լատին իշխաններուն կողմէ՝ Անտիոքէն 12 քլմ. հիւսիս արեւելք գտնուող Հարիմ ամրոցին դէմ կազմակերպուած արշաւանքին:

Հարիմ ամրոցը, որ կը գտնուէր Հալէպի սուլթանութեան սահմաններուն մէջ, նուր էլ Տինի կենդանութեան, եւ անոր իսկ կողմէ յանձնուած էր Կիւմիշթագին անունով «նշանաւոր ներքինի»ին, որուն «խելքի եւ հաւատարմութեան համար» նուր էլ Տին զայն նշանակած էր նաեւ «իր փոքր որդու՝ Մելիք Սալիհի դայեակ ու դաստիարակ»: Նուր էլ Տինի մահէն ետք «ան խելամտութեամբ դիմակալոււմ էր ինչպէս թուրքերին, այնպէս էլ ֆրանկներին՝ իր ձեռքում պահելով բոլոր քա-

43. Միրիոքեֆալոնի ճակատամարտի մանրամասնութեանց համար տես՝ Անուոն Եղիսացի, էջ 141-142: Միքայէլ Ասորի, էջ 479-482: Սմբատ Սպարապետ, էջ 193: Bar Hebraeus, pp. 306-307. William of Tyre, vol. 2, pp.414-415. A. A. Vasiliev, *History of the Byzantine...*, vol. 2, pp. 428-429. S. Runciman, *A History of the Crusades*, vol. 2, pp. 412-413. Ian Heath, *Armies and Enemies of the Crusades 1096-1291*, A Wargames Research Group Publication, 1978, p. 53.

44. A. A. Vasiliev, *History of the Byzantine Empire*, vol. 2, p. 429

45. P. Wittek, *The Rise of the Ottoman Empire*, p. 23.

46. William of Tyre, vol. 2, p. 415.

ղաքների, բերդերի, ամրոցների ու գիւղերի կառավարումն ու տնօրինումը»: Սակայն Կիւմիշթագինի համբաւը ըստ երեւոյթին կ'անհանգըստացնէ իր շուրջընտր գտնուող մարդիկը, որոնք «նախանձից խորհուրդ տուին, աւելի ճիշդ՝ մուրեցրին Նուր էլ Տինի պատանի որդուն, որը ձերբակալեց եւ սպանեց Կիւմիշթագին ներքինուն: Երբ վերջինս սպանուեց, Խարիմի բերդում գտնուող զինուորները ապստամբեցին Մելիք Սալիհի դէմ եւ բերդը չյանձնեցին նրան»<sup>47</sup>:

Վերոյիշեալ մանրամասնութեան մէջ՝ «Խարիմի բերդում գտնուող զինուորները ապստամբեցին Մելիք Սալիհի դէմ եւ բերդը նրան չյանձնեցին» տողերը կը յուշեն թէ սովորական նախանձի ու բամբասանքի հարցէն աւելի՝ ներքին պայքար մը սկսած էր Մելիք Սալիհի եւ Կիւմիշթագինի միջեւ, եւ թէ՛ Հարիմի բերդին ճակատագրուած բախտը պիտի որոշէր մէկուն կամ միւսին գերակայութիւնը Հալէպի սուլթանութեան մէջ: Պարագայ մը, որ Իպն Խալիքանի մօտ աւելի շուտ կը բացայայտուի: «Գալով Հալէպի տիրոջ՝ էլ Մելիք էս Սալիհի, — կը գրէ Իպն Խալիքան, — ասոր գործերը ձախող ընթացան: Ան ձերբակալեց Կիւմիշթագինը, որ իր պետութեան վարիչն էր, եւ պահանջեց որ իրեն յանձնէ էլ Հարիմը (բերդը): Տրուած մերժումին վրայ սպաննեց զայն»<sup>48</sup>:

Կիւմիշթագինի սպանութենէն ետք ստեղծուած անորոշ կացութեան հետեւանքով՝ խաչակիր-լատին իշխաններ ասպարէզը բաց կը գտնեն դէպի Հարիմ: Սակայն Անանուն Եղեսացի եւ Իպն Խալիքան տարբեր վկայութիւններ ունին տալիք: Առաջինին համաձայն, Հարիմի բերդին մէջ գտնուող զինուորները «լուր ուղարկելով, օգնութիւն խնդրեցին Ֆրանկներից եւ ընդունեցին նրանց զիրիշխանութիւնը: Ֆրանկները սիրալիր ընդունելութիւն ցոյց տուին եւ վստահութիւն ներշնչեցին նրանց՝ երդուելով խաչով ու Աւետարանով»<sup>49</sup>: Սակայն ըստ Իպն Խալիքանի. «[Կիւմիշթագինի] սպանութեան լուրը առնելով՝ Ֆրանկները Հարիմի վրայ յարձակեցան վերոյիշեալ տարուան (1177 թ. Ե. Հ. Ք.) ձումատա էլ Ախրայի ընթացքին մէջ՝ բերդը գրաւելու ցանկութեամբ»<sup>50</sup>:

Վերոյիշեալ երկու վկայութիւններէն աւելի շատ ճշմարտութեան կը համապատասխանէ Իպն Խալիքանի վկայութիւնը, քանի որ Անանուն Եղեսացի ինք ալ երբ կը նկարագրէ դէպքերու զարգացումը,

47. Անանուն Եղեսացի, էջ 145-146:

48. Իպն Խալիքան, Վէֆայաթ էլ Աւեան (Անհետացած Երեւելիներ), (արաբերէն քննարկէն քարգմանեց՝ Գեորգ Մըսրիբան), Գահիրէ, 1935, էջ 272:

49. Անանուն Եղեսացի, էջ 146:

50. Իպն Խալիքան, էջ 272:

կը գրէ: «... Ֆրանկները թափով առաջ շարժուեցին եւ եկան պաշարեցին այդ քաղաքը, այսինքն՝ Խարիմի բերդը, մնալով այնտեղ Դեկտեմբերի սկզբից մինչեւ Մարտի վերջը: Նրանք նեղ դրութեան մէջ դրին այդ երկրի եւ ողջ լեռան, ինչպէս նաեւ Իմմ եւ Արթախ գաւառների գիւղացիներին»<sup>51</sup>:

Հարիմի դէմ արշաւող խաչակիր-լատին բանակները դրուած էին Ֆլանտրըզի կոմս՝ Ֆիլիբի առաջնորդութեան ներքեւ: Տակաւին 1169 թ.ին, Երուսաղէմէն՝ պաշտօնական պատուիրակութիւն մը կ'երթար Եւրոպա, Սուրիա-Եգիպտոս սպառնացող վտանգին դէմ գինուորական աջակցութիւն մը ապահովելու: Պատուիրակութիւնը կը գիմէ ժամանակի վեհապետներուն եւ ազնուականներուն, որոնց շարքին՝ նաեւ Ֆլանտրըզի կոմս՝ Ֆիլիբի<sup>52</sup>: Ֆիլիբ Աքրա կը հասնի միայն 1177 թ.ի Օգոստոսի 2-ին: Երուսաղէմի թագաւորը՝ Պոլտուին Դ. (1173-1185 թթ.), ծանր հիւանդ, պատգարակով կը տեղափոխուի Աքրա, պատշաճօրէն դիմաւորելու Ֆիլիբը, որուն այնքան յոյսեր կապած էին: Միատեղ Երուսաղէմ դարձին, բոլոր ակնկալութիւնները ի դերեւ կ'ելլեն սակայն: Ֆիլիբ կը մերժէ ձեռք առնել Երուսաղէմի թագաւորութեան ղեկը, որ իրեն կը հրամցուէր «առանց որեւէ կաշկանդումի» եւ «ամբողջական իրաւասութեամբ»: Ան նաեւ կը մերժէ առաջնորդել Եգիպտոսի դէմ կազմակերպուելիք արշաւանք մը, որուն համար Բիւզանդիոնի եւ Երուսաղէմի միջեւ նախապէս համաձայնութիւն մը գոյացած էր, ու այդ նպատակով, նոյն օրերուն՝ Կ. Պոլսէն Երուսաղէմ եկած էր բարձրաստիճան պատուիրակութիւն մը, մինչ բիւզանդական նաւատորմ մը, բաղկացած եօթանասուն ցովանաւերէ, հանգրուանած էր Աքրայի ծովեզրը: Տագնապի եւ յուսախաբութեան այդ օրերուն, Ֆիլիբ, յայտարարելէ ետք թէ ինք պարզապէս իբր ուխտաւոր եկած է Երուսաղէն, եւ թէ՛ առանձինն նման պատասխանատուութիւններ չի կրնար ստանձնել, ի վերջոյ կը բացայայտէ Երուսաղէմ գալուն իր շարժառիթը: Ան կը փափաքէր իր հաւատարիմ վասալին՝ Պեթինի Ռոպէրթին երկու մանչ զաւակներուն հարսնացնել իր երկու զարմուհիները՝ Երուսաղէմի Ամօրի թագաւորին (1162-1174 թթ.) աղջիկները՝ իշխանուհիներ Սիպիլին ու Իզապէլը, որոնցմէ առաջինը նոր այրիացած էր, եւ՝ յղի, իսկ երկրորդը՝ հազիւ հասած էր ամուսնութեան տարիքին: Բայց տակաւին բանակցութիւնները կը շարունակուէին կոմսին հետ, զայն համոզելու որ անպայման մասնակցի «անհաւատներու» դէմ կազմակերպուելիք արշաւանքի մը: Ֆիլիբ եւ իր ընկերակիցները, որոնք

51. Անանուն Եղիսացի, էջ 146:

52. William of Tyre, vol. 2, p. 360.

Երուսաղէմէն Ռամալա անցած էին, ի վերջոյ կ'որոշեն Թրիփոլիի եւ Անտիոքի սահմանները մտնել, ուր «հաւանական կը նկատուէր բան մը իրազործել՝ իրենց պատուին եւ Քրիստոնէութեան յառաջդիմութեան համար»: Պոլտուին Դ. կը համակերպի մինչեւ իսկ Ֆիլիբի այս ծրագրին, ու անոր կը խոստանայ կարելի օգնութիւնը, թէեւ՝ կասկածներ կը սկսին շրջիլ թէ Անտիոքի իշխանը՝ Պոհեմոնտ Գ. (1163-1201 թթ.) եւ Թրիփոլիի կոմսը՝ Ռէյմոնտ Գ. (1164-1187 թթ.) չեղած էին Ֆիլիբի ուշադրութիւնը Եզիպոսէն, եւ զայն հրապուրած դէպի հիւսիս, անոր աջակցութեամբ իրենց սահմանները կարենալ ընդարձակելու համար: Պոլտուին Դ. Ֆիլիբի կը տրամադրէ հարիւր ձիաւոր ասպետներ եւ երկու հարիւր հետեւակ զինուոր: Հոկտեմբերի սկիզբին, Ֆիլիբ՝ Ռէյմոնտ Գ.ի, Հիւրընկալներու մեծաւորին ու բազմաթիւ Տաճարական ասպետներու հետ կը շարժի դէպի Թրիփոլի<sup>53</sup>:

Ֆիլիբ՝ Ռէյմոնտ Գ.ի հետ բանակները կը շարժէ «Թշնամի երկրէն ներս, ու անոնք ժամանակ մը կը մնան Հոմսի եւ Համայի մօտակայքը», «Թշնամիին որոշ վնասներ հասցնելով»: Սակայն ռազմական գործողութիւնները յաջողութիւն չեն արձանագրեր: Դէպքերու ժամանակակից Ուիլիբմ Տիւրոսցիի համաձայն՝ « պարսպապատուած աւաններն ու քաղաքներու բերդերը լաւապէս ապահովուած էին պաշարով, եւ իրենց պաշտպանութեան համար բաւարար պահակներ ու զէնքեր ունէին»<sup>54</sup>: Խաչակիր բանակները ապա կը շարժին Հարիմի դէմ, ուր իրենց կը միանայ նաեւ Պոհեմոնտ Գ.ը, որ իր հերթին կը հրաւիրէ Ռուբէն Գ.ը. «... եւ եբեր աղաչանօք զՌուբէն Կիլիկիոյ իշխանն, եւ գնաց ի վերայ Հերմին»<sup>55</sup>: Ժամանակակից հեղինակներէն Անանուն Եղեսացին ալ Հարիմը պաշարողներուն մէջ կը յիշատակէ Ռուբէն Գ.ը: Անոր համաձայն. «Դրանց մէջ էին Երուսաղէմի եւ առափնեայ երկրի զօրքերը, Թրիփոլիի կոմսը, Անտիոքի պրինցը, Կիլիկիոյ իշխան Ռուբէն հայը, եւ ինքը Կոնդֆլանտը (Count of Flanders-Ֆլանտրըրի կոմսը, Ե.Հ.Ք), ինչպէս նաեւ բազմաքանակ աշխարհազօրայիններ, որոնց թիւը հասնում էր երեսուն հազարի»<sup>56</sup>:

1177 թ.ի Դեկտեմբերի սկիզբէն մինչեւ 1178 թ.ի Մարտի վերջը, շուրջ չորս ամիսներ՝ խաչակիր-լատին բանակներն ու Ռուբէն պաշար-

53. William of Tyre, vol. 2. p. 417-420, 422-425. S. Runciman, *A History of the Crusades*, vol. 2, pp. 414-416. Zoé Oldenbourg, *The Crusades*, New York, 1967, pp. 459-460. Marshall M. Baldwin, *Raymond III of Tripolis and the Fall of Jerusalem (1140-1187)*, Princeton, 1936, pp. 32-33.

54. William of Tyre, vol. 2, p. 425.

55. Մ. Ասորի, էջ 485:

56. Անանուն Եղեսացի, էջ 146:

ուած կը պահեն Հարիմը: Հակառակ օգտագործուած «բազմազան պատերազմական մեքենաներու», «չատ ֆրանկներ զոհուեցին ներսից արձակուած քարերից ու նետերից, ինչպէս նաեւ կուպրից, որն այրում էր նրանց»<sup>57</sup>: Տիւրոսցիի վկայութեամբ՝ շրջանի եւ Անտիոքի քրիստոնեայ ժողովուրդը «խանդավառութեամբ աշխատեցաւ անհրաժեշտ պաշարը հասցնելով» կռուողներուն<sup>58</sup>: Անանուն Եղեսացին այլ բան կը պատմէ սակայն, երբ կը գրէ. խաչակիրները «զանազան տուրքերով եւ հարկադրանքներով բռնադատեցին նաեւ Անտիոքի բնակիչներին՝ պարէն հայթայթելու նպատակով, որն անհրաժեշտ էր իրենց եւ իրենց անասուններին ու զբաստներին: Չքաւորներն անգամ տուժեցին այդ նեղութիւնից»<sup>59</sup>: Ինչ որ ալ եղած ըլլայ խաչակիր-լատին բանակներու յարաբերութիւնը շրջանի քրիստոնեայ բնակչութեան հետ՝ այդ չորս ամիսներու ընթացքին, յստակ էր մէկ բան, թէ Հարիմը, որ «ժամանակին ազնուական աւան մըն էր, բայց հիմա իջած էր շատ փոքր ամրոցի մը մակարդակին»<sup>60</sup>, այնքան զոհողութիւն եւ նոր թշնամութեանց գրգռութիւն չէր արժեր:

Հակառակ Անտիոքի եւ շրջակայքի քրիստոնեայ ժողովուրդին զոհողութիւններուն, Հարիմը պաշարող խաչակիր բանակներու առաջնորդները, անշուշտ Ռուբէնն ալ իրենց հետ, տագնապահար օրերու զոհերը ըլլալ չեն թուիր բնաւ: Տիւրոսցիի համաձայն. «Անոնք իրենք զիրենք տուած էին անլրջութեան, ու աւելի շատ ուշադիր էին բախտախաղի եւ այլ յոռի հաճոյքներու, քան զինուորական կարգապահութեան եւ կամ՝ պաշարումի գործողութեանց օրէնքներուն: Անոնք յաճախակի կերպով Անտիոք կ'երթեւեկէին, ուր իրենց ժամանակը կը վատնէին բաղնիքներու եւ խնճոյքներու մէջ, անձնատուր՝ զինով ցոփութիւններու եւ այլ մարմնային հաճոյքներու, մոռացութեան տալով պաշարումի գործը՝ ծուլութեան հաճոյքին համար»<sup>61</sup>:

Հարիմի պաշարումի ընթացքին խաչակիր ու լատին բանակներու առաջնորդներուն կողմէ որդեգրուած նման անփոյթ վերաբերմունք մը՝ հաւանաբար նաեւ հետեւանք էր Սալահ էլ Տինի մէկ ռազմավարութեան յեղակարծօրէն ձախողութեամբ աւարտած ըլլալուն: Այս վերջինը, որ իր մեծաթիւ բանակներով, որոնք որեւէ ատենէ աւելի լաւ զինուած էին հիմա, դուրս եկած էր Եգիպտոսէն ու կը քալէր Երուսաղէմի թագաւորութեան սահմաններուն դէմ: Տիւրոսցիի համաձայն, Սալահ

57. Նոյնը:

58. William of Tyre, vol. 2, p. 426.

59. Անանուն Եղեսացի, էջ 146:

60. William of Tyre, vol. 2, p. 425.

61. Նոյնը, էջ 434:

էլ Տինի ռազմավարութիւնը երկու նպատակ կը հետապնդէր. ան կամ կը ստիպէր որ խաչակիր ու լատին բանակները քակեն Հարիմի պաշարումը, եւ կամ՝ հակառակ պարագային, ինքնաբերաբար ազատ ձեռք կը շնորհեն իրեն՝ կիսապաշտպան մնացած Երուսաղէմի թագաւորութեան դէմ յաղթանակներ արձանագրելու<sup>62</sup>:

1177 թ-ի նոյեմբերի 10-ին, Սալահ էլ Տին, 26,000 զինուոր հաշուող բանակով մը, որուն ութը հազարը իրենց կրօնական հաւատարմութեամբ աչքառու «հոյակապ զինուորներ» էին, իսկ մնացեալ 18,000ը՝ մեմլուքներ, կը մտնէ հարաւային Պաղեստին: Ասքալոնի շրջապատը աւերելէ յետոյ, ծովեզերքի վրայով բանակը կը քալէ էլ-Ռամլայի դէմ, ուր, գլխաւոր զօրքէն անջատուած, իր պահակագունդով անփութօրէն յառաջացող Սալահ էլ Տինը՝ թեւ ձեզըրի մէջ կ'իյնայ Պոլսուին Գ-ի եւ իր զինակիցներուն անակնկալ ու կատաղի հարուածներուն տակ: Մինչ իրեն ընկերակցող պահակագունդը գրեթէ ամբողջութեամբ կը բնաջնջուի, Սալահ էլ Տին՝ գիշերով, արագավազ ուղտի մը ապաւինած, մազապուրծ կը փախչի՝ ետին ձգելով ամէն ինչ, բայց միայն փրկելով իր կեանքը: 1177 թ-ի նոյեմբերի 25-ին, Սալահ էլ Տին կ'արձանագրէր իր զինուորական ասպարէզին ամենէն նուաստացուցիչ օրերէն մէկը<sup>63</sup>:

Յամենայն դէպս, Հարիմի պաշարումը կ'երկարէր, եւ «երկու կողմերն ալ, այսինքն՝ ե՛ւ պաշարուածները ե՛ւ պաշարողները, թուացան ու յոգնեցին կռուից»: Ի վերջոյ պաշարուածները կը դիմեն Հալէպի տիրոջ՝ Մելիք Սալիհին, մտածելով «որ աւելի լաւ է յանձնուիլ իրենց դաւանակից թուրքերին, քան թէ Ֆրանկներին»: Մելիք Սալիհ՝ բերզը պաշարողներու մօտ կը զրկէ պատգամաւոր մը, «որն առանձին-առանձին [հանդիպելով] բոլոր նրանց մեծամեծների հետ, երկպառակութիւն սերմանեց նրանց միջեւ»: Պոհեմոնտ Գ. «յիսուն հազար դինար եւ բերդապատկան գիւղերի կէսը» ստանալու խոստումով կը քակէ պաշարումը եւ իր զօրքերով կը հեռանայ շրջանէն: «Միւսները նոյնպէս ամօթով ետ քաշուեցին՝ դառնալով ամէնքի ծաղր ու ծանակի առարկան»<sup>64</sup>: Սակայն Տիրոսցի գլխաւորաբար կը մեղադրէ Ֆիլիբը, որ «ամէն օր կը յիշեցնէր թէ ինք տուն պէտք է վերադառնայ, եւ թէ ինք Հարիմ կը մնայ հակառակ իր կամքին»: Ու երբ Պոհեմոնտ կը նկատէ թէ Ֆիլիբ որոշած է հեռանալ, իր հերթին կ'ընդունի իրեն առաջարկուած

62. Նոյնը, էջ 426-427:

63. Հակատամարտի ականատեսի մամբասանութեանց համար տես՝ նոյնը, էջ 430-432: Նաեւ տես՝ S. Lane-Poole, *Saladin and the Fall...*, pp.153-155. Philip Hitti, *Makers of Arab History*, pp. 128-129.

64. Անանուն Եղիսացի, էջ 146-147: Նաեւ տես՝ Իպն Խալլիքան, էջ 272:

գումարը, «որուն քանակը անծանօթ կը մնայ», ու կը քակէ պաշարումը<sup>65</sup>:

Բնական է Հարիմէն տուն դարձող բանակներուն մէջ էին նաեւ Հայկական զօրքերը՝ Ռուբէն Գ.ի առաջնորդութեամբ: Սակայն անպատասխան կը մնայ հարցում մը: Ի՞նչ բան մղած էր Ռուբէնը մասնակցելու այս արշաւանքին, որ իր ծրագրումի օրէն իսկ ճակատագրական բնոյթի նպատակներ հետապնդելէ շատ հեռու էր: Արդեօ՞ք միայն կարենալ հաստատելու համար թէ ինք կը ժխտէր իր հօրեղբօր՝ Մլեհի քաղաքականութիւնը, եւ իր այդ ղերբորոշումին լաւագոյն ապացոյցը կուտար Հալէպի սուլթանութեան սահմաններէն ներս կատարած ոտնձգութեամբ՝ զինակցելով լատին ու խաչակիր բանակներուն<sup>66</sup>:

Ռուբէն Գ.ի ռազմա-քաղաքական գործունէութեան յաջորդ դրուագը կը խօսի Սալահ էլ Տինի՝ 1180 թ.ի աշնան Կիլիկիոյ վրայ կատարած արշաւանքին, եւ Ռուբէն Գ.—Սալահ էլ Տին խաղաղութեան դաշինքին մասին: Դէպքերու հետաքրքրական դարգացում մը, որուն մասին եթէ առանց բացառութեան կը խօսին մեզի ծանօթ արաբական ժամանակակից աղբիւրները, Հայկականները, նոյն համեմատութեամբ՝ լուծիւն կը պահեն:

1180 թ.ի Մարտի 11-ին, Պաղտատի մէջ կը մեռնի էլ Մուսթատի խալիֆը, որուն կը յաջորդէ էլ Նասիր էլ Տին Ալլահ (1180-1225 թթ.): Սալահ էլ Տին կը փութայ պատուիրակութիւն մը ղրկել նոր խալիֆին, յայտնելու իր հաւատարմութիւնը անոր, յուսալով որ ան կը վերահաստատէ զինք իր իրաւասութիւններուն մէջ, ու կը վաւերացնէ իր ձեռք բերելիք ապագայ նուաճումները: Նոյն թուականի Յունիսի 28-ին կը մեռնի Մուսուլի էմիրը՝ Սէյֆ էլ Տին Ղազին, որուն փոխարէն անմիջապէս իշխանութեան կը հրաւիրուի Իզ էլ Տինը, որ իր հերթին ղեսպանութիւն մը կը ղրկէ Սալահ էլ Տինի, խնդրելով անկէ որ ան վաւերացնէ Միջագետքի քաղաքներուն վրայ Մուսուլի ունեցած իշխանութիւնը, իրաւունք մը, որ շնորհուած էր 1176 թ.ի դաշինքով: Այյուպի

65. William of Tyre, vol. 2, p. 435.

66. Ռուբէն Գ.ի՝ Հարիմի պաշարումին մասնակցած ըլլալու փաստը միայն քաւարք է ժխտելու Ս. Պ. Պօղոսեանի այն հաստատումը, թէ՛ «... Ռուբէն, որ յաջորդեց Մլեհին, չփոխեց իր հօրեղբօր վարած քաղաքականութիւնը այս կամ այն իշխանութեան, ինչպէս նաեւ սելեուքեան սուլթանութիւնների հետ համագործակցելու հարցում» (Ս. Պ. Պօղոսեան, *Հայ ժողովրդի Պատմութիւն*, Բ. հտր., էջ 123): Հարկ է նշել այստեղ թէ հայկական սկզբնաղբիւրներէն ոչ մէկը կը յիշէ Ռուբէնի՝ Հարիմի պաշարումին մասնակցած ըլլալը: Իսկ հայ նոր պատմագրութեան մէջ միայն Ս. Տէր Ներսեսեանն է որ մէկ քանի տողով կ'անդրադառնայ հարցին (տես՝ S. Der Nersessian, *The Kingdom of Cilician Armenia*, p. 643):

կը մերժէ խնդրանքը, ու կրկին անգամ կը դիմէ խալիֆին, պատճառաբանելով թէ իրեն համար անկարելի է տեւականօրէն ապաւինիլ Եգիպտոսին՝ իր բանակները համալրելու, եւ թէ՛ ինք անհրաժեշտաբար պէտք ունի Միջագետքին, նոյն նպատակին համար: Սալահ էլ Տինի համար նուազ մտահոգիչ չէր Իկոնիոյ սուլթանին վարած ծաւալապաշտական քաղաքականութիւնը: 1176 թ-ին՝ Միրիոքեֆալոնի մէջ Բիւզանդիոնի դէմ տարած իր յաղթանակէն ետք, Գլըճ Արսլան Բ. մնայուն կերպով ընդարձակած էր իր սահմանները, իր մենատիրութիւնը հաստատելով շրջանին վրայ: Մուսուլի եւ Իկոնիոյ հարցերը կը ստիպեն որ Սալահ էլ Տին՝ 1180 թ-ի ամրան, երկու տարիներու համար՝ ծովու ու ցամաքի վրայ խաղաղութեան դաշինք մը ապահովէ Երուսաղէմի թագաւորութեան ու Թրիփոլիի կոմսութեան հետ, ու քալէ Իկոնիոյ վրայ<sup>67</sup>:

Գլըճ Արսլան Բ-ի դէմ Սալահ էլ Տինի ձեռնարկած արշաւանքը եթէ կը թելադրուէր քաղաքական ու ռազմական լուրջ մտահոգութիւններէ (Հոռոմկլայէն հիւսիս՝ Ռապանի ամրոցին շուրջ երկուքին միջեւ ստեղծուած վէճը լաւագոյն զրաւականն էր անոր. Իկոնիոյ սուլթանը փորձած էր զրաւել զայն, սակայն նահանջած էր Դամասկոսէն եկած բանակներուն դիմաց), անմիջական պատճառը սակայն կու գար ընտանեկան ներքին վէճի մը իրր հետեւանք: Հըսն Քայֆայի օրթուքիտ էմիրը՝ Նուր էլ Տին, որ ամուսնացած էր Գլըճ Արսլանի աղջկան հետ, երգչուհիի մը պատճառով կը սկսի անտեսել իր կինը: Իշխանուհին կը գանգատի իր հօր, որ պատերազմ կը յայտարարէ փեսային դէմ: Սակայն Նուր էլ Տին, 1176 թ-ի դաշինքի պայմաններուն հաւատարիմ, կը դիմէ Սալահ էլ Տինի պաշտպանութեան: Այս վերջինը աւելի լաւ պատրուակ մը չէր կրնար յուսալ: Այյուպի իր բանակներով կը շարժի հիւսիս, ճանապարհին՝ սպառնալով զինք դիմաւորող Գլըճ Արսլանի զեսպաններուն, թէ՛ երկու օրէն պիտի մտնէ իրենց մայրաքաղաքը: Սալահ էլ Տին երկրորդ անգամ ըլլալով կ'ընդունի զեսպանները, այս անգամ արդէն Ռապանի մէջ, ուր կը գոյանայ համաձայնութիւն մը, ու հարցերը կը լուծուին բանակցութեան ճամբով<sup>68</sup>:

67. Անանուն Եդեսացի, էջ 143: A. S. Ehrenkreutz, *Saladin*, pp. 164-165. S. Lane-Poole, *Saladin and the Fall...*, pp. 160-161. 1176 թ-ի Հալէպի դաշնագրով՝ Սալահ էլ Տին, իր եղբայրը՝ Թուրան Շահ (իմա՝ Դամասկոսի սուլթանը), Հալէպի ու Մուսուլի Ջենկի էմիրները, ինչպէս եւ Հըսն Քայֆայի ու Մարտինի Օրթուքիտ վասալները կ'երդնուն միացեալ ճակատ մը ստեղծել, միաժամանակ խոստանալով որ բոլորը միատեղ պիտի դառնան անոր դէմ, որ կը փորձէր խախտել համաձայնութիւնը, ու շարքէն դուրս գար (Hamilton H. R. Gibbs, *The Rise of Saladin, 1169-1189*, in: K. M. Setton, *A History of the Crusades*, vol. 1, Philadelphia, 1958, p. 570) .

68. Միխայէլ Ասորի, էջ 487-488: Bar Hebraeus, pp. 309-310. A. S. Ehrenkreutz,

Վերոյիշեալ համաձայնութենէն ետք Սալահ էլ Տին կը քալէ Կիւրիկիոյ վրայ: «Սալահ էլ Տինը մտաւ Կիւրիկիա, որովհետեւ թագաւորը (Ռուբէն Գ., Ե.Ն.Ք.) դրժել էր իր խոստումը թուրքմէն խաչնարածների նկատմամբ, որոնց թոյլատրել էր մտնել իր երկիրը՝ հօտերն արածելու համար, բայց յետոյ նրանց գերի էր վերցրել»<sup>69</sup>, կը գրէ Ապու Շամաթ: Իսկ ժամանակակից Իբն Ասիրի համաձայն, «... հայազգի Լեւոնի որդին մի խումբ թուրքմէնների հրաւիրել էր իր երկիրը, դրամական նուէրներ տուել ու հրամայել, որ իրենց հօտերը արածացընեն իր երկրում, իսկ իր երկիրը ամրակուռ էր, ամբողջովին ծածկուած անառիկ բերդերով եւ այնտեղ մտնելը դժուար էր, քանզի [չըրջապատուած էր] լեռնանցքերով ու անանցանելի լեռներով: Սակայն յետոյ նա դաւաճանեց նրանց, կանանց գերեզարեց, ունեցուածքը խլեց, իսկ տղամարդկանց՝ տարիքաւորներին կոտորելուց յետոյ, մի մասին գերեզարեց»<sup>70</sup>:

Անհասկնալի կը մնայ Իբն Ասիրի վերագրումը, թէ՛ «Լեւոնի որդին մի խումբ թուրքմէնների հրաւիրել էր ու դրամական նուէր տուել (ընդգծումը մեզմէ, Ե.Ն.Ք.) ու հրամայել, որ իրենց հօտերը արածացնեն իր երկրում...», բացի այն պարագայէն, երբ «Լեւոնի որդի» արտայայտութիւնը այստեղ հասկնանք բառացի իմաստով, եւ ընդունինք թէ ակնարկութիւնը Լեւոնի որդի Մլեհի համար է: Արդարեւ Մլեհի քաղաքականութեան հաշտ էր թուրքմէններու հանդէպ բարեացակամ վերաբերմունք մը: Սակայն Ռուբէն Գ., որ Հարիմի պաշարումին մասնակցելով՝ արդէն իսկ դիրքորոշուած էր արար-իսլամական ճակատին դէմ, այնտեղէն վերազարձին, հաւանաբար նախ դրամական նուէրներով փորձած էր համոզել թուրքմէնները որ հեռանան Կիւրիկիոյ սահմաններէն, եւ ապա՝ ղիմած էր հալածանքի ու գերեզարութեան<sup>71</sup>:

Saladin, p. 165. S. Lane-Poole, *Saladin and the Fall...*, pp. 161-162. H. Gibbs, *The Rise of Saladin*, pp. 574-575.

69. Արաբական Աղբիւրները Հայաստանի եւ Հարեան Երկրների Մասին [Ա.], (կազմեց՝ Հ. Թ. Նալբանդեան), Երեւան, 1965, էջ 301, ծան. 5:

70. Իբն Ասիր, Արաբական Աղբիւրներ, Բ., (թարգմանութիւն բնագրից, առաջարկ եւ ծանօթութիւններ՝ Արամ Տեր-Ղեւոնդեանի), Երեւան, 1981, էջ 266:

71. Սիրարփի Տեր Ներսէսեան երբ կը գրէ թէ՛ «ժամանակէ մը ի վեր Անատոլիոյ բուրժմէն ցեղայնութիւնը կը թափանցէին [Կիւրիկիոյ] հիւսիսային սահմաններէն ներս: Ռուբէն փորձեց ազատել իր երկիրը ասպատակող այս խումբերէն: Մեծ թիւ մը սպաննեց անոնցմէ, բազմաթիւ գերիներ վերցուց, ինչպէս՝ նկատառելի աւար» (S. D. Nersessian, *The Kingdom of Cilician Armenia*, p. 643), փաստորէն կը տարբերի մեզի ծանօթ սկզբնաղբիւրներէն, իսկ ինք իր հերթին ոչ մէկ աղբիւր կը յիշատակէ: Ալիշան (տես՝ Միսուս, էջ 58) հարազատ է մեր օգտագործած աղբիւրներու բովանդակութեան հետ:

Սալահ էլ Տին կը մտնէ Կիլիկիոյ սահմաններէն ներս, ու կը հասնի մինչեւ Մսիս<sup>72</sup>, ճանապարհին ասպատակելով ու աւարելով երկիրը, մինչեւ որ Ռուբէն կը փութայ խաղաղութեան խնդրանքով ու խոստանալով ազատ արձակել գերիները: Կիլիկիոյ սահմաններէն ներս Սալահ էլ Տինի կատարած արշաւանքի մասին իրենց մանրամասնութիւններով հետաքրքրական են Ապու Շամաթի եւ Իբն Ասիրի հետեւեալ տեղեկութիւնները.

«Սալահ էլ Տինը մտաւ Կիլիկիա...: Հայերը տեղի տուեցին եւ վախից այրեցին Մենաքիր կոչուած բարձր բերդը, եւ մուսուլմանները այնտեղ գտնուող գինամթերքն ու հացահատիկը շտապ վերցնելուց յետոյ աւարտեցին բերդի լրիւ քանդումը: Այնտեղ նրանք գտան մի ջրհոր՝ լիքը շատ հին պղնձեայ, արծաթեայ ու ոսկեայ իրերով: Հայոց թագաւորը առաջարկեց սուլթանին, որ իրեն թողնի այդ գանձի մի մասը, որի փոխարէն նա խոստանում էր ազատ արձակել իր մօտ գտնուող բոլոր մուսուլման գերիներին: Սուլթանը մերժեց այդ առաջարկը եւ պահանջեց մի աւելի խոշոր գումար, միաժամանակ վերագնեց 500 գերի մուսուլմանների: Թագաւորը հաւանեց եւ պատանդներ տուեց»<sup>73</sup>:

«Սալահ էլ Տինը իջաւ Ասուաղ (Սել) գետի մօտ եւ սկսեց նրա երկիրը ասպատակել: Լեւոնի որդին անհանգստացաւ լեռան գլխին գրտնուող իր մի բերդի համար [վախենալով], որ կը գրաւուի, ուստի քանդեց ու հրկիզեց այն: Երբ Սալահ էլ Տինը այդ մասին լսեց, շտապեց նրա մօտ եւ հասաւ նախ քան նա կը հասցնէր գանձերն ու պարէնը տեղափոխել: Նա կողոպտեց, եւ մահմետականները աւար վերցրեցին: Լեւոնի որդին լուր ուղարկեց, [խոստանալով] ազատ արձակել իր մօտ եղած գերիներին, գերեվարած [կանանց] եւ վերադարձնել փողերը, պայմանով, որ հեռանային իր երկրից: Սալահ էլ Տինը ընդունեց եւ դրուիթիւնը կարգաւորուեց: Գերիներն արձակուեցին եւ ունեցուածքը վերադարձուեց, իսկ Սալահ էլ Տինը այնտեղէն հեռացաւ Ջումադա Բամասին (23 Հոկտեմբեր-20 Նոյեմբեր)»<sup>74</sup>:

Իբն Ասիրի մօտ մեզ հետաքրքրող բառերը հետեւեալներն են. «... խոստանալով... եւ վերագարձնել փողերը...»: Ի՞նչ «փող» էր զոր «կը վերագարձնէր» Ռուբէն: Իր գերեվարած թուրքմէններուն մօտ եղած «փող»ն էր, զոր կողոպտած էր ինք, եւ հիմա՝ հարկադրաբար «կը վերագարձնէր», թէ՛ թուրքմէն ցեղախումբերը իրենք դրամ վճարած էին Ռուբէնի, իրենց հօտերը Կիլիկիոյ սահմաններուն մէջ արածելու

72. S. Lane-Poole, *Saladin and the Fall...*, p. 162. S. Der Nersessian, *The Kingdom of Cilician Armenia*, p. 643

73. Արարական Աղբիւրները... [Ա.], էջ 301, ծան. 5:

74. Իբն Ասիր, էջ 266:

համար, իսկ Ռուբէն «փողեր»ը գանձելէ յետոյ, դարձած էր անոնց դէմ: Այս վերջին ենթադրութիւնը տրամաբանական կը թուի ըլլալ, եթէ փորձենք Իբն Ասիրը կարդալ այսպէս. «... Լեւոնի որդին մի խումբ թուրքմէններ չրաւիրել էր իր երկիրը, դրամական նուէրներ ստացել (փոխան «տուելի»ի, Ե. Հ. Ք.) ու հրամայել, որ իրենց հօտերը արածացընեն իր երկրում...», քանի որ կարելի չ'ըլլար հասկնալ թէ Ռուբէն ինչո՞ւ դրամական նուէր պիտի տար ու «հրամայէր» որ անոնք իր երկրի սահմաններուն մէջ իրենց հօտերը արածեն:

Անհաւանական չէ որ Սալահ էլ Տին Կիլիկիոյ դէմ իր արշաւանքը կազմակերպած ըլլար Գլըճ Արսլանի թելադրութեամբ: Բայց երբ ՍիրարփիՏէր ներսէսեան կը գրէ թէ՛ «Գլըճ Արսլան գանդատեցաւ Սալահ էլ Տինի, որ, 1180 թ.ի աշնան Կիլիկիա մտաւ»<sup>75</sup>, կը ստեղծէ այն տպաւորութիւնը թէ Սալահ էլ Տին Եգիպտոսէն ուղղակի Կիլիկիոյ վրայ արշաւեց՝ Գլըճ Արսլանի հրաւերով: Արարական սկզբնաղբիւրներէն միայն մէկը՝ Ապու Շամաթ նման տպաւորութիւն կը ստեղծէ, երբ կը գրէ. «... Գլըճ Արսլանը օգնութիւն խնդրեց Սալահ էլ Տինից՝ հայոց թագաւորի դէմ: Սալահ էլ Տինը մեկնեց Եգիպտոսից եւ իր ուժերը կեդրոնացրեց Նահր էլ Ազրակի վրայ, Բեհեսնիի եւ Հիսն Մանսուրի միջեւ եւ ուղղուեց դէպի Նահր էլ Ասուազը...»<sup>76</sup>: Մինչդեռ Իբն Ասիր կը գրէ. «Այդ տարում Սալահ էլ Տինը յարձակուեց հայազգի Լեւոնի որդու երկիրը, Գլըճ Արսլանի հետ գործը վերջացնելուց յետոյ (ընդգծումը մեզմէ, Ե. Հ. Ք.)»<sup>77</sup>: Իբն Շատտատի համաձայն, «Սուրհանդակ հասաւ Գլըճ Արսլանի կողմից, որը քախանձում էր սուլթանին՝ նրա հետ համաձայնութիւն կնքել (ընդգծումը մեզմէ, Ե. Հ. Ք.), միաժամանակ գանդատում էր հայերից»<sup>78</sup>: Իսկ Սալահ էլ Տին «իմանալով որ խառնակ վիճակի մատնուած է Սուրիա, որոշեց հոն վերադառնալ եւ արշաւանքի ծրագիրներով հետաքրքրուեցաւ: Այս պահուն կը հասնէր յունական երկիրներու (Ռումի) տիրոջ Գլըճ Արսլանի պատգամաւորը, որ հաշտութիւն խնդրելով (ընդգծումը մեզմէ, Ե. Հ. Ք.) միանգամայն տրտունջ կը յայտնէր հայերուն դէմ»<sup>79</sup>: Իսկ Ապու էլ Ֆիզա կը գրէ. «Հիճրի 576 թուականին (1180 Մայիս 28—1181 Մայիս 16) սուլթան Սալահ էլ Տինը յարձակուեց Գլըճ Արսլանի որդի: Մասուտի որդի Գլըճ Արսլանի՝ Ռումի երկրի տիրոջ վրայ եւ հասաւ

75. S. Der Nersessian, *The Kingdom of Cilician Armenia*, p. 643.

76. Արարական Աղբիւրները... [Ա.], էջ 301, ծան. 5:

77. Իբն Ասիր, էջ 266:

78. Իբն Շադադ, Այյուբեան Սալահեղդինի Կենսագրութիւնը (տես՝ Արարական Աղբիւրները... [Ա.], էջ 293:

79. Իսկ Սալահ էլ Տին, էջ 272-273:

մինչեւ Ռարան եւ հաշտութիւն կնքուեց: Այնուհետեւ Սալահ էլ Տինը արշաւեց Լեւոն-հայի որդու երկրի վրայ եւ ասպատակ սփռեց: Լեւոնի որդին հաշտութիւն խնդրեց՝ դրամական տուգանք վճարելով եւ գերիներ վերագործնելով»<sup>80</sup>:

ԺԳ. դարու ասորի հեղինակ Ապուլ Ֆարաճ (Պար Հեպրաոս) հետեւեալ ձեւով կը ներկայացնէ դէպքերու ընթացքը. 1180 թ.ին, Սալահ էլ Տին քալեց Լուկասու գետէն «եւ գնաց ու բանակ զարկաւ Ուքամա գետին վրայ: Եւ իր բանակները զացին ասպատակելու Կիլիկիոյ երկրորդ, քանի որ Ռուբէն, Կիլիկիոյ կառավարիչը, բազմաթիւ թուրքմէն հովիւներ սպաննած էր, որոնք իր երկրին մէջ էին, ու գերեվարած անոնց կիներն ու զաւակները, ու բռնագրաւած՝ անոնց ստացուածքը:

«Յետոյ՝ Ռուբէն խոնարհութեան ու հնազանդութեան խօսք զրկեց Սալահ էլ Տինի, ու անոր շատ ոսկի տուաւ եւ ազատ արձակեց 500 թուրք բանտարկեալներ: Յետոյ՝ խաղաղութիւն գոյացաւ, ու Սալահ էլ Տին հեռացաւ»<sup>81</sup>:

Բնական է, Սալահ էլ Տինի համար՝ իր հեղինակութեան տարածման համար իսկ, շահաւէտ էր Կիլիկիոյ վրայ նման արշաւանք մը, մանաւանդ երբ իր բանակներով կը գտնուէր անոր սահմաններուն վրայ, եւ ապահոված՝ շրջանի գլխաւոր ախոյեանին՝ Գլըճ Արսլանի հաւատարմութիւնը: Այլապէս՝ թուրքմէն մէկ քանի ցեղախումբերու ենթարկուած հալածանքը նկատի առած միայն, քաղաքական ու ռազմագիտական ոչ մէկ արդարացում կրնայ ստանալ Սալահ էլ Տինի՝ Եգիպտոսէն մինչեւ Կիլիկիա կազմակերպած արշաւանքը: Իսկ Նիքըլսընի այն հաստատումը, թէ՛ «վտանգը, որ Սալահ էլ Տինի կը սպառնար Ռուբէն Գ. ի նուաճողական ռազմավարութեան պատճառով, զինուորական արշաւանքի մը պահանջքը ստեղծեց»<sup>82</sup> Կիլիկիոյ վրայ, պատմական ու վաւերական ոչ մէկ հիմք ունի:

1180 թ.ի Հոկտեմբերի 2-ին, Սամոսատի մօտ՝ Սանճայի ափին, Սալահ էլ Տին կը նախագահէ ժողովի մը, որուն կը մասնակցին Մուսուլի, Ճեզիրէի, Իրպիլի, Քէյֆայի եւ Մարտինի իշխանները, Իկոնիոյ

80. Արու - 1 - Ֆիդայի ժամանակագրութիւնը (տես՝ Արաբական Ազդերները ... [Ա.]), էջ 222:

81. Bar Hebraeus, p.310. Հայր Սահակ Տեր-Մովսէսեանի՝ «Ռուբէն Գ. առաջին ու վերջին իշխանն էր որու օրով արտաքին քշմամիները Կիլիկիա ռոտ չկոխեցին» (Հ. Ս. Տեր-Մովսէսեան, Պատմութիւն Հայոց... , Մասն Բ., էջ 467) յայտարարութիւնը զուրկ կը դառնայ ամէն հիմք: Իսկ Օրմանեանի՝ «... Ռուբէն յաջողած էր ընկրկել Սալահ էլ Տինի արշաւանքը» (Մ. Արք. Օրմանեան, Ազգապատում, Ա. հոր., սիւն. 1483) եզրակացութիւնը միայն զարմանք կը պատճառէ:

82. R. L. Nicholson, *Joscelyn III and the Fall of the Crusader States 1134-1199*, Leiden, 1973, p. 103.

սուլթանը եւ Կիլիկիոյ Ռուբէն Գ.ը: Բոլոր ներկաները կ'երդնուն յաջորդ երկու տարիներուն համար խաղաղութիւն պահել իրարու միջեւ<sup>83</sup>: Սթիվընսընի ու Նիքըլսընի համաձայն 1180 թ.ի Հոկտեմբերի 2-ի վերոյիշեալ դաշինքէն ետք է որ Սալահ էլ Տին կը յարձակի Կիլիկիոյ վրայ, եւ Ռուբէնի հետ խաղաղութեան դաշինք մը կը կնքէ նոյն թուականի Նոյեմբերին<sup>84</sup>:

1180 թ. յատկանշական պիտի մնար նաեւ մէկ քանի ալլ իրադարձութիւններով:

1180 թ.ի Սեպտեմբերի 24-ին, յիսուն ութ տարեկան հասակին մէջ կը մեռնէր Բիւզանդիոնի կայսրը՝ Մանուէլ Կոմնենոս, գահը ժառանգ ձգելով իր տասներկու տարեկան տղուն՝ Ալեքսիոս Կոմնենոս Բ.ի (1180-1183 թթ.), իր կնոջ՝ կայսրուհի Մարիայի (Անտիոքի Պոհմոնտ Գ.ի քոյրը) խնամակալութեան տակ, թէեւ՝ պետութեան իրաւ ղեկավարութիւնը ձեռք կ'առնէր Մանուէլի հօրեղբորորդին՝ Ալեքսիոս Կոմնենոս, որ նաեւ կը վայելէր կայսրուհիին համակրանքը<sup>85</sup>:

1180 թ.ին Փոքր Ասիոյ մէջ կ'աւարտէր Դանիշմենտ-Սելճուք պայքարը, Իկոնիոյ վերջնական յաղթանակով: Դանիշմենտ զլիսաւոր կեդրոններէն Սերաստիան գրաւելէն ետք (1174 թ.)<sup>86</sup> Գլըճ Արսլան՝ 1178 թ.ին, չորս ամիսներ պաշարուած պահելէ ետք, մուտք կը գործէ Մելիտինէ՝ Դանիշմենտ վերջին կայանը, ու անով փաստօրէն իր վախճանին կը հասցնէ իրեն մրցակից տունը<sup>87</sup>: Բայց դեռ քանի մը տարի եւս եթէ անոնք իրենց գոյութիւնը կը քաշկուտեն, արդէն «չուրջ 1180 թ.ին, դանիշմենտներ դուրս նետուած էին ասպարէզէն, եւ իրենց հետ Փոքր Ասիայէն անհետացած էր անկայունութեան տարրը, որուն աջակցութեան ապաւինած էին բիւզանդացիք»<sup>88</sup>: Ասով՝ Բիւզանդիոնի համար

83. S. Lane-Poole, *Saladin and the Fall...*, p. 163. A. S. Ehrenkreutz, *Saladin*, p. 166. Համիլթըն Կիպ առ հասարակ կասկածի տակ կ'անուէ 1180 թ.ի Հոկտ.ի 2-ին կայացած դաշինքին իրաւութիւնը (H. Gibbs, *The Rise of Saladin*, p. 575).

84. W. B. Stevenson, *The Crusaders in the East*, Beirut, 1968, p. 224. R. L. Nicholson, *Josceline III...*, p. 103. Սալահ էլ Տին-Ռուբէն Գ. դաշինքին՝ Նոյեմբերի մէջ կնքուած ըլլալուն ի նպաստ կը վկայէ մաւր Իբն Ասիր (էջ 266):

85. Հ. Գեյցեր, *Համառոտութիւն Բիւզանդական կայսրների Պատմութեան*, էջ 356. A. A. Vasiliev, *History of the Byzantine Empire*, vol. 2, pp. 432-433.

86. Գեբրայ. Անդրէաս Վ. Աղեքսանդրեան, *Պատմութիւն Ականաւոր Քաղաքին Սերաստիոյ*, Վենետիկ, 1911, էջ 186-187:

87. Bar Hebraeus, p. 308. Ամանուն Եղիսացի, էջ 143-144: Ա. Ալպոյաքեան, *Պատմութիւն Մալաթիոյ Հայոց*, Պէյրութ, 1961, էջ 262-263:

88. P. Wittek, *The Rise of the Ottoman Empire*, p. 23.

փաստորէն ամէն ճամբայ կը փակուէր Փոքր Ասիոյ մէջէն Կիլիկիա հասնելու:

1180 թ.ին, Մանուէլ Կոմնենոս կայսեր մահով՝ շուրջ տասնը-հինգ տարիներէ ի վեր շարունակուող «Յոյներու հետ [եկեղեցական] միութենական բանակցութիւնները վերջնականապէս փակուեցան: ... Բանակցութեանց վերջանալուն հետ, Հայ իշխաններուն յանկալութիւնն ալ վերջացաւ՝ յունական հովանաւորութեամբ զօրանալու մասին, եւ զլիսաւորաբար Կիլիկիոյ իշխանապետն Ռուբէն՝ Լատիններուն կողմ դարձուց իր մտադրութիւնը»<sup>89</sup>:

Բիւզանդիոնի մեկուսացումով, ու Սալահ էլ Տիւնի յաջորդական երկու դաշինքներով՝ 1180 թ.էն սկսած երկու տարիներու համար ապահովուած խաղաղութիւնը նոր էջ մը կը բանար շրջանի բոլոր պետութիւններուն համար, եւ ուրեմն՝ Կիլիկիոյ:

Ռուբէն արդէն բոլորած էր երեսուն հինգ տարիները, երբ կ'որոշէ ամուսնանալ: Եւ հաւատարիմ իր նախորդներուն խնամիական քաղաքականութեան<sup>90</sup>, ան կ'որոշէ իրեն համար կին առնել օտար ազնուական ընտանիքի աղջիկ մը: 1181 թ.ին «զնաց պարոն Ռուբէն յԵրուսաղէմ բազում ծախիւք, եւ առ իւր կին զղուստր տեառն Քարաքոյ եւ դարձաւ»<sup>91</sup>:

Ի՞նչ էր որ Ռուբէնը Երուսաղէմ կ'առաջնորդէր առաջին հերթին. ուխտագնացութեան որոշում մը, թէ՛ արդէն իսկ որոշուած Կիլիկիոյ ապագայ իշխանուհիին հետ ամուսնութիւնը: Սմբատի լուսթեան ղիմաց, Ռուսսիմանի տողերը, թէ՛ Ռուբէն «1181 թ.ի սկիզբը ուխտի գընաց Երուսաղէմ, եւ հոն ամուսնացաւ Թորոնի Լէյտի Իզապէլին հետ»<sup>92</sup>, ենթադրել կու տան թէ ամուսնութիւնը տեղւոյն վրայ, Երուսաղէմի մէջ կարգադրուած էր: Նման պարագաներու մէջ երբ անբնա-

89. Մ. Արք. Օրմանեան, *Ազգապատում*, Ա. հտր., սիւն. 1482: Հայ եւ յոյն եկեղեցական-միութենական բանակցութիւններուն քաղաքական նշանակութիւնն ու հետապնդած նպատակները առանձին սերտողութեան նիւթ են, գորս զանց կ'առնենք այստեղ:

90. Ռուբէն Գ.ը նախորդող Ռուբինեան վեց իշխաններէն՝ Ռուբէն Ա.ի կինը կը մնայ անծանօթ (հաւանաբար հայուհի մը, Ե.Լ.Ք.), Կոստանդին Ա. եւ Թորոս Ա. ամուսնացած էին յոյն կիներու հետ: Լեւոն Ա. առաջին անգամ իրեն կին առած էր յոյն մը, իսկ երկրորդ ամուսնութեան՝ լատին մը: Թորոս Բ. նոյնպէս ամուսնացած էր երկու անգամ, եւ երկու պարագաներուն ալ՝ լատին կնոջ մը հետ: Եարթին մէջ միայն Ռուբէն Գ.ի հօրեղբայրը՝ Մլեհն էր որ ամուսնացած էր հայուհիի մը հետ (տես՝ W. H. Rüdiger-Collenberg, *The Rupenides...*, p. 32. Ալիշան, *Սխուան*, էջ 371):

91. Սմբատ Սպարապետ, էջ 193:

92. S. Runciman, *A History of the Crusades*, vol. 2, p. 422.

կան չէ քաղաքական շահագրգռութեան մը առկայութիւնը, Ռուսիմանի յայտարարութիւնը, թէ՛ «Ռուբէն Հայ իշխանը նախանձախնդիր էր իր զինակցութիւնը ամրապնդելու Ֆրանկներուն հետ»<sup>93</sup>, ծայրայեղ ըլլալ կը թուի, երբ յիշենք թէ մէկ քանի ամիսներ առաջ Ռուբէն խաղաղութիւն խնդրած էր Սալահ էլ Տինէն, եւ այդ ալ բաւական ծանր գինով:

Բարունիի հետեւեալ տողերը Ռուբէնի ամուսնութեան առիթով՝ «Հռոմայեցւոցն (լատիններ, Ե. Հ. Ք.)՝ զնա սիրեալ, «Եւ ամուսին՝ նմա տուեալ»<sup>94</sup>,

ու ձաշոցի Յիշատակարանի վկայութիւնը, թէ՛ «... ել համբաւ անուան նորա (Ռուբէն, Ե. Հ. Ք.) ընդ ամենայն աշխարհ: Վասնորոյ Հըռոմայեցիքն զնա պատուեալ յազգէ թագաւորութեանն կին ետուն նմա»<sup>95</sup>, աւելի շատ մտածել կու տան թէ լատիններն էին, որոնք ամէն կերպ կը փորձէին ապահովել Ռուբէնի զինակցութիւնը, զոր ձեռք բերելու համար խնամիական կապերը բաւական խոստմնալից ճանապարհ կը թուէին ըլլալ:

Ռուբէն իր կնքած ամուսնութեամբ կը խնամիանար ոչ միայն Թորոնի ազնուական, հարուստ եւ ազդեցիկ ընտանիքին, այլ եւ՝ Երուսաղէմի թագաւորին՝ Պոլտուին Դ. ի: Արզարեւ, 1180 թ. ի Հոկտեմբերին, Պոլտուին, իր թագաւորութեան ազնուապետական երկու ընտանիքներու վէճերը հարթելու մտահոգութեամբ կը դիմէր խնամախօսութեան ծանօթ ռազմավարութեան, ու իր քոյրը՝ Իզապէլը կնութեան կու տար Թորոնի Հըմֆրի Դ. ին (Onfroi = Humphry)<sup>96</sup>: Բայց քանի որ

93. Նոյնը: Նմանօրինակ դատումներու համար տես՝ R. Grousset, *Histoire des Croisades*, t. 2, p. 683. T. S. R. Boase, *The Cilician Kingdom of Armenia*, p. 14.

94. Վահրամ Բարունի, էջ 211:

95. *Ձաշոցի Յիշատակարան* (տես՝ Սամուէլ Անեցի, Յաւելուածներ), էջ 218–219:

96. Ստորեւ կու տանք այն հատուածը, զոր ժամանակակից հեղինակը՝ Տիրոսցի կ'արձանագրէ Թորոնի Հըմֆրիներու մասին: Սակայն անհրաժեշտ է զգուշացնել ընթերցողը որ շփոթ մը գոյութիւն ունի Տիրոսցիի մօտ. անոր նշած Հըմֆրի Գ. ը՝ չորրորդն է շարքին մէջ, ինչ որ կը բացատրուի դէպքերու եւ անձերու ժամանակագրական գուգահեռը կատարելով: Հըմֆրի Գ. շփոթուած է իր հօրը հետ (տես՝ R. Grousset, *Histoire des Croisades*, t. 2, p. 683, f. n. 2): Պատմական ոչ մէկ կարեւոր դէպք արձանագրուած է Հըմֆրի Գ. ի անուան դիմաց, մինչ անոր հայրը՝ Հըմֆրի Բ., իր ժամանակին Արեւելի ամենէն աշխոյժ ու գործօն դէմքերէն մէկն է: Ուրեմն՝ Տիրոսցիի քանչքան Հըմֆրի Գ. ը՝ չորրորդն է շարքին մէջ, Հըմֆրի Բ. ը՝ երրորդը, եւ երէց Հըմֆրիին՝ երկրորդը:

1180 թ. ի Հոկտեմբերին «Բագաւորը ամուսնացուց իր քոյրը՝ այն ատեն հազիւ ուրբ տարեկան, երիտասարդի մը՝ Հըմֆրի անունով: Այս Հըմֆրի Գ. ը գաւակն էր Հըմֆրի Բ. ի եւ Նապուսի Ֆիլիպի աղջկան՝ Ստեֆանիի: Հըմֆրի Բ. ի հայրը Թորոնի մեծ Հըմֆրիին էր, բագաւորին աստուապետը: Նապուսի Ֆիլիպը՝ մօրենական մեծ հայրը Հըմֆրի Գ. ի, Երկրորդ Արաբիայի տերն էր, որ Բեդրան է, հիմա ծանօթ Քերաֆ ա-

իշխանուհին ութը տարեկան էր միայն, պսակադրութիւնը կը յետաձգուէր երեք տարիով<sup>97</sup>:

Ռուբէն Գ.ի կինը՝ Թորոնի Իզապէլը, Թորոնի Հըմֆրի Դ.ի քոյրն էր, ու աղջիկը՝ Թորոնի Հըմֆրի Գ.ին: Սակայն հայ պատմագրութեան մէջ նաեւ յիշատակուած է թէ Ռուբէնի կինը՝ «դուստրն էր Ռենալտայ տը Շատիյեան փռանգ իշխանին»<sup>98</sup>: Այս շփոթը անոր համար որ երբ 1181 թ.ին Ռուբէն կ'ամուսնանար Թորոնի Իզապէլին հետ, Ռէյնալտ տը Շատիյեոն, Իզապէլի մօր՝ Ստեֆանիի ամուսինն էր: Հըմֆրի Գ.՝ Իզապէլի հայրը մեռած էր շուրջ 1170 թ.ին: Կինը՝ Ստեֆանին, երկրորդ անգամ ամուսնացած էր Փլանսի Մայլզին, որ Երուսաղէմի Ամօրի թագաւորին բարձրագոյն պաշտօնատարներէն մէկն էր, ըլլալով պետութեան ներքին գործերուն եւ արդարադատութեան պատասխանատուն: Մայլզ՝ 1174 թ.ին դաւադրարար սպաննուած էր Աքրայի մէջ: Սակայն Ստեֆանի երկար ժամանակ այրի չէր մնար: Իր երրորդ ամուսնութիւնը կը կնքէր Ռէյնալտ տը Շատիյեոնի հետ<sup>99</sup>:

Ռէյնալտ տը Շատիյեոն, որ Արեւելք եկած էր Երկրորդ Պաշակոթեան բանակներուն հետ՝ հետեւելով Ֆրանսայի Լուի Է. թագաւորին, որոշած էր մնալ այնտեղ ու իր բախտը փորձել: Ան եղած էր Արեւելքի ամենէն արկածախնդիր խաչակիր ազնուականներէն մէկը: 1154 թ.ին՝ ամուսնանալով Անտիոքի Գոնսթանս իշխանուհին հետ, գրաւած էր Անտիոքի գահը, ու վաստկած՝ «Անտիոքի Աղուէսը» ծաղրանունը<sup>100</sup>, ապա՝ Մանուէլ կայսեր զրդուամով թշնամացած Կիլիկիոյ Թորոս Բ.ին հետ, բայց յետոյ յուսախար Մանուէլէն, Թորոսի հետ համաձայնարար արշաւած էր Կիպրոսի վրայ, հուսկ՝ 1160 թ.ին գերի ինկած Նուր էլ Տինի ձեռքը, ու ամբողջ տասնվեց տարիներ մոռացու-

նունով, ինչպէս եւ տէրը Սուրիա Սորայի, հիմա ծանօթ Մոնթբէյլ անունով: Ան յետոյ ողջագուրեց կրօնական կեանքը ու դարձաւ Տաճարական Ասպետներու մեծաւորը:

«... [Երիտասարդ] Հըմֆրի, որ հիմա հասած էր հասունութեան հանգրուանին, եւ անոր ամբողջացումով՝ Հըմֆրիի եւ [թագաւորին] բոշ ամուսնութիւնը կատարուեցաւ Երուսաղէմի մէջ:

«Իր հօրեական մեծ հօր մահով, Հըմֆրի՝ ժողովուրդեամբ որոշ հողամասեր ստացած էր Տիրոսի շրջանին մէջ, մասնաւորապէս՝ Թորոնը, Քասք էլ Նեոֆը եւ Պանիս քաղաքը իրենց քոյր իրաւասութիւններով» (William of Tyre, vol. 2, pp. 451-452.

97. S. Runciman, *A History of the Crusades*, vol. 2, pp. 424-425.

98. Մ. Ասորի, էջ 490, ծան. 1: Նաւի տես՝ Աստուածատուր Եպս. Յովհաննէսեանց, *Ժամանակագրական Պատմութիւն Ս. Երուսաղէմի*, Ա. հտր., Երուսաղէմ, 1890, էջ 144: Տիգրան Զ. Թ. Սաւալանեան, *Պատմութիւն Երուսաղէմի*, Ա. հտր., Երուսաղէմ, էջ 399:

99. William of Tyre, vol. 2, p. 452. S. Runciman, *A History of the Crusades*, vol. 2, pp. 405-406.

100. Richard Gale, *Kings at Arms*, London, 1971, p. 34.

թեան մատնուած Հալէպի բանտին մէջ: Ազատ արձակուելէն մէկ քանի ամիսներ ետք Ռէյնալտ ամուսնացած էր Թորոնի Ստեֆանիին հետ, որուն ժառանգութեանց մէջ կ'իյնար Քերաքն ու Մոնթրէալը: Ռէյնալտ՝ միշտ անընդունակ Արեւելքի իրադարձութիւնները իրապաշտօրէն գնահատելու, Անդրյորդանան հաստատուելէ ետք կը դիմէ նոր արկածախնդրութիւններու: 1181 թ.ի ամրան, խախտելով 1180 թ.ի Սալահ էլ Տինի եւ Պոլտուին Դ.ի միջեւ կնքուած խաղաղութեան դաշինքին պայմանները, կը յարձակի դէպի Մեքքէ գացող առեւտրական կարաւանի մը վրայ, ու կը կողոպտէ անոր հարստութիւնը: Ան մինչեւ իսկ կը մտածէ քալել Մետինէի դէմ, սակայն Սալահ էլ Տինի կողմէ Անդրյորդանան զրկուած բանակը նահանջի կը ստիպէ զինք: Հակառակ՝ աւարը վերադարձնելու Սալահ էլ Տինի պահանջին ու Պոլտուինի միջամտութեան, Ռէյնալտ կը մնայ անդրդուելի: Քանի մը ամիսներ ետք, երբ վատ եղանակի պատճառով հազար հինգ հարիւր ուխտաւորներ Եգիպտոսի մօտ՝ Տամիեթա կը խարսխեն<sup>101</sup>, անտեղեակ 1180 թ.ի դաշինքի ճակատագրին, Սալահ էլ Տին շղթայի կը գարնէ բոլորը, ու անոնց ազատ արձակման համար պայման կը դնէ Մեքքէի ճանապարհին կողոպտուած հարստութեան վերադարձը: Ռէյնալտ կը մերժէ ամէն համախոհութիւն: Պատերազմի ամպերը կը սկսին կուտակուիլ<sup>102</sup>:

Ռուբէն Գ.ի եւ իր եղբոր՝ Լեւոնի փոխ յարաբերութեան մէկ հանգրուանին մասին մեզի հասած տեղեկութիւնը կը մնայ անորոշութեան մէջ: Սմբատ կը գրէ թէ, 1181 թ.ին, երբ Ռուբէն կը վերադառնայ Երուսաղէմէն, ոմանք իր մօտ «կը չարախօսեն» Լեւոնը, ըսելով թէ ան «կը խորհի» ապստամբիլ իր դէմ: Իսկ Լեւոն վախնալով եղբոր վրէժխնդրութենէն, «գնաց փախստական ի Տարսուս, եւ անտի նաւեաց գնաց ի Կոստանդնուպօլիս», ուր սիրով ու մեծարանքով կը դիմաւորուի կայսրին կողմէ, «եւ զօրութիւն աստուածային պահեաց գնա անդ»<sup>103</sup>:

Որեւէ հիմք ունէ՞ր «չարախօսութիւնը»: Ռուբինեան իշխանական տան մէջ անձանօթ չէին նմանօրինակ յարաբերութիւններ: Միշտ չէ որ իրարու հետ հաշտ ապրած էին Կոստանդին Ա.ի (1091/2-1100 թթ.) զաւակները՝ Թորոս Ա. (1100-1129 թթ.) եւ Լեւոն Ա. (1129-1137

101. Bar Hebraeus, p. 312.

102. S. Runciman, *A History of the Crusades*, vol. 2, pp. 345-346, 431. J. W. Thomson and E. N. Johnson, *An Introduction to Medieval Europe 300-1500*, N. York, 1937, p. 538. S. Lane-Poole, *Saladin and the Fall...*, p. 16. A. Ehrenkreutz, *Saladin*, p. 167. G. H. Hill, *A History of Cyprus*, vol. 1. Cambridge, 1949, p. 306.

103. Սմբատ Սպարապետ, էջ 193-194:

թթ.)<sup>104</sup>, եւ կամ՝ Լեւոն Ա.ի զաւակները՝ Թորոս Բ., Ստեփանէ եւ Մլեհ<sup>105</sup>:

Օրմանեան տողով մը միայն կը յիշատակէ զէպքը<sup>106</sup>: Ալիշան կ'ենթադրէ թէ Լեւոն, որ «ծանր եւ կշռադատ» էր «'ի գործս եւ 'ի խօսս», չէր կրնար «անխտիր եւ հաւան աչօք» դիտել իր եղբօրը շայլութիւնները, — որուն մէկ փաստը Ռուբէն տուած էր իր «մեծահանդէս արքայակերպ» հարսանիքին, որ կազմակերպուած էր ե'ւ Երուսաղէմի ե'ւ Կիլիկիոյ մէջ, — ինչ որ խորհիլ տուած էր ոմանց թէ ան կը մտածէ Ռուբէնը տապալել «պետական գահէն» եւ ինքնին բազմիլ<sup>107</sup>: Տէտէեան՝ Սըմբատի իր թարգմանութեան մէջ՝ իր կողմէ կատարուած ներքին բաժանումներէն մէկը, որ կը բովանդակէ մէջբերուած վերոյիշեալ հատուածը, կը խորագրէ «Թիւրիմացութիւն Ռուբէնի եւ իր Եղբօր՝ Լեւոնի Միջեւ» բառերով: Բայց քիչ անդին հաւանական կը նկատէ թէ Լեւոն կրնար «գործիք ծառայել» Բիւզանդիոնի, անոր իշխանութիւնը տարածելու եւ ամրապնդելու համար Կիլիկիոյ մէջ<sup>108</sup>:

Ռուբէնի ու Լեւոնի միջեւ եղած «Թիւրիմացութիւնը» շատ աւելի բարդ իրադարձութեանց հետեւանք էր, քան կ'ենթադրուի:

Մանուէլ Կոմնենոս կայսեր մահէն ետք, Ալեքսիոս Բ.ի գահին շուրջ ստեղծուած դժգոհութիւնները, որոնք գլխաւորաբար կը ներշնչուէին հակա-լատին տրամադրութիւններէ, ճամբայ կը հարթեն յեղափոխութեան փորձի մը, որ սակայն կը քողարժուի 1181 թ.ի Մարտի 1-ին: Դաւին մասնակից էին պալատական ազնուականներ, ու մինչեւ իսկ կայսերական տան անդամներ, որոնց մէջ նաեւ Մանուէլի քոյրը՝ Մարիան: Սակայն «կայսեր ճակատը, որ մասնաւորապէս կ'ապաւինէր լատիններու օգնութեան», կը յաջողի զսպել ապստամբութիւնը, եւ Մարիա, որ իր ամուսնոյն հետ ապաստանած էր Այա Սոֆիա, եւ ինքզինք յանձնած եկեղեցիի պաշտպանութեան, ներումի կ'արժանանայ արքունիքին կողմէ ու կը վերահաստատուի իր իրաւունքներուն մէջ<sup>109</sup>:

Այս շրջանին է որ Անտիօքի իշխանը՝ Պոհեմոնտ Գ. կը թողու իր օրինաւոր կինը՝ Թէոտորան, եւ հակառակ եկեղեցիի ընդդիմութեան,

104. Sbu՝ Երուանդ 2. Քասուցի, Կիլիկիոյ Հայկական Իշխանապետութիւնը ..., էջ 151-152, 165-167:

105. Sbu՝ Սմբատ Սպարապետ, էջ 174-175, 186-187:

106. Sbu՝ Մ. Արք. Օրմանեան, Ազգապատում, Ա. հար., սիւն. 1483:

107. Ալիշան, Սրտուան, էջ 439:

108. *La Chronique Attribuée au Connétable Smbat* (introduction, traduction et notes par Gérard Dédéyan), Paris, 1980, p. 57 et p. 57, n. 44.

109. William of Tyre, vol. 2, p. 453.

կ'ամուսնանայ անտիոքացի կնոջ մը՝ Սիպիլի հետ<sup>110</sup>, որ «կախարդութեան արուեստով կը զբաղէր»: Թէոտորա, որուն Պոհեմոնտ ամուսնացած էր 1177 թ.ին, Մանուէլ կայսեր զարմուհին էր: Սիպիլ, անկախ իր ունեցած «մեղկ կնոջ» համբաւէն, նաեւ կասկածանքով ու զայրոյթով կը դիտուէր Անտիոքի ազնուականներուն կողմէ, որոնք զինք կը ճանչնային իբրեւ Սալահ էլ Տինի լրտեսը, որ նիւթական մասնաւոր վարձատրութեան փոխարէն՝ լատին-խաչակիր բանակներու թիւին ու շարժումներուն մասին տեղեկութիւններ կը փոխանցէր անոր<sup>111</sup>:

Եթէ հաստատուած խնամիրական կապերն ու կնքուած ամուսնութիւնները յաճախ կը թելադրուէին քաղաքական մտահոգութիւններէ, ամուսնալուծումները՝ տարբեր չէին կրնար ըլլալ: Պոհեմոնտի՝ Թէոտորան ձգելու որոշումը պէտք է տեսնել իբրեւ հակազդեցութիւն Կ. Պոլսոյ մէջ բարձրացող հակա-լատին տրամադրութիւններուն: Պոհեմոնտ հոս կանգ չէր առնէր սակայն: Ան պիտի փորձէր Արեւելքի մէջ Անտիոք-Կիլիկիա նոր զինակցութիւն մը ստեղծել՝ Բիւզանդիոնի հակա-լատին ուժերուն դէմ: Իր այս ծրագրին համար ան իրեն զլիաւոր գործակից կ'ունենար Կիլիկիոյ մէջ Բիւզանդիոնի կառավարիչը՝ Իսահակ Կոմնենոս, որ Տարսոն կը նստէր<sup>112</sup>: Իսկ երկուքով՝ իրենց պիտի հրապուրէին Լեւոնը, որուն փառասիրութիւնը կարելի կ'ըլլար շոյել՝ իրեն խոստանալով Կիլիկիոյ գահը: Ռուբէնի Երուսաղէմ այցելութեան պատճառով երկրէն բացակայութիւնը կրնար մեծապէս նպաստել ծրագրին գործադրութեան<sup>113</sup>:

110. Տիրոսցի՝ Պոհեմոնտի՝ իր կնոջմէն անջատուելու պարագան կը յիշատակէ երկու անգամ. նախ՝ Մանուէլի մահը արձանագրելէ անմիջապէս ետք, եւ ապա՝ Կ. Պոլսոյ մէջ, 1181 թ.ի Մարտի 1-ին բացայայտուած ապստամբութեան մանրամասնութիւնները տալէ ետք, ու երկու պարագաներուն ալ, յաջորդաբար կը գրէ. «Այս նոյն ժամանակին», եւ «Այս ժամանակին» (William of Tyre, pp. 452, 453): Ժամանակագրելու եղանակ մը, որ իրապէս կը դիւրացնէ ճշդորոշելու թուականը:

111. William of Tyre, vol. 2, pp. 452-453. Bar Hebraeus, pp. 310-311. S. Runciman, *A History of the Crusades*, vol. 2, pp. 419, 429-430.

112. Իսահակ Կոմնենոս ամուսնացած էր Ռուբէն Գ.ի հորեղբոր՝ Թորոս Բ.ի աղջրկան հետ (տես՝ W. H. Rudt-Collenberg, *The Rupinides...*, table I (Rup.).

113. Պոհեմոնտ-Մանուէլ, Պոհեմոնտ-Իսահակ Կոմնենոս համերաշխ գործակցութեան մը հետեւանքը պէտք է նկատել շփոթը, որ ստեղծուած է այն մասին թէ այդ թուականներուն որո՞ւն կը պատկանէր Տարսոնը: Տիրոսցի գայն Անտիոքի տիրապետութեան տակ կը դնէ (William of Tyre, vol. 2, p. 491), ինչպէս եւ Ալիշան (*Սիսուան*, էջ 267), մինչ Կրուսէ գայն քիւզանդական տիրապետութեան տակ կը կարծէ (*Histoire des Croisades* t. 2, p. 684, n. 1), ինչպէս եւ Չամչեանց (*Պատմութիւն Հայոց*, Գ. հտր., էջ 141) եւ Օրմանեան (*Ազգապատմութիւն*, Ա. հտր., սիւն. 1482): Սիրարփի Տէր Ներսէսեան կը գրէ. «Տարսոնը, տակաւին 1181 թ.ին, քիւզանդական ձեռքերու մէջ էր, ապա՝ փոխանցուած Պոհեմոնտի» (*The Kingdom of Cilician Armenia*, p.644): Տէտեանի

Սակայն Պոհեմոնտ իր ծրագիրները պիտի չկարենար անխափան իրագործել: Միպիլի հետ իր ամուսնութիւնը շատ աւելի մեծ աղմուկ պիտի բարձրացնէր, քան ինք կը յուսար հաւանաբար: Անտիոքի պատրիարքը կը բանադրէ Պոհեմոնտը, ու քաղաքը կը դնէ արգելագիրի տակ: Քաղաքացիական կռիւի մը նախանշանները ի յայտ կու գան, ինչ որ կը նշանակէ թէ Պոհեմոնտի ամուսնալուծումն ու ամուսնութիւնը եկեղեցական օրինականութեանց հետ առընչուած հարց մը ըլլալէ աւելի եւ առաջ, քաղաքական էր: Պոհեմոնտ ամենաբուռն կերպով կը հակազդէ եկեղեցիին, կը բռնագրաւէ անոր կալուածները ու կը հալածէ անոր պաշտօնեաները: Պատրիարքն ու իր համախոհները կը փախչին ու ապաստան կը գտնեն իրենց սեփականութիւնը եղող ամրոցի մը մէջ: Անհրաժեշտ կ'ըլլայ Երուսաղէմի միջամտութիւնը: Բանակցութիւններու աւարտին կը վերադարձուին եկեղեցական կալուածները: Պատրիարքը կը վերցնէ քաղաքին արգելագիրը, բայց ոչ՝ իշխանին դէմ արձակուած բանադրանքը: Բայց Պոհեմոնտ հոս կանգ չ'առնէր: «Ան քաղաքէն կը վտարէ, — իրականութեան մէջ իր ամբողջ տէրութեան սահմաններէն, — լաւագոյնները իր հաւատարիմ ազնուականներուն՝ մեծ շնորհքի մարդիկ, միայն այն պատճառով որ անոնք համաձայն չէին իր վարքին: . . . Այս ազնուականները, քանի որ դատապարտուած էին հեռանալու Անտիոքէն, կ'երթան հաստատուելու Ռուբէնի՝ հայոց ազնուական իշխաններէն մէկուն մօտ»<sup>114</sup>:

Վերոյիշեալ մանրամասնութիւնը իմաստ կը զգենու երբ փորձենք հարց տալ թէ ո՞վ կամ որո՞նք էին Ռուբէնի մօտ Լեւոնը «չարախօսողները»: Անհաւանական պէտք չէ նկատել թէ Ռուբէնի Կիլիկիա վե-

համաձայն, Միրիոֆֆալոնի (1176 թ.) աղէտէն ետք, Պոհեմոնտ, որ ազգական էր Մանուէլի, Դաշտային Կիլիկիոյ մէջ հայերու ասպատակութիւններուն դէմ՝ կայսերական գահին շահերուն պաշտպան կը կենար (*La Chronique...*, p. 58, n. 46): Իրողութիւնը հետեւեալն էր սակայն. Անտիոքի մէջ խաչակիր-նորման իշխանապետութեան հիմնադրութենէն առիւն, բուն վէճ մը սկսած էր Բիզանդիոնի եւ Անտիոքի միջեւ, Անտիոքի եւ Կիլիկիայի որոշ շրջաններուն վրայ հովանաւորութիւն տարածելու իրաւունքին մասին: Հակառակ 1108 թ. ին՝ Ալեքսիոս Ա. Կոմնենոսի (1081-1118 թթ.) եւ Պոհեմոնտ Ա. ի (1098-1104/10 թթ.) միջեւ կնքուած դաշնագրին, որուն յօդուածներէն մէկը կ'ըսէր. «—Տարսնը, Ատանան, Մսիսը, Անարգարան եւ Կիլիկիոյ այդ շրջանի հողերը վերադարձնել Բիզանդիոնի, ինչպէս նաեւ Լաթաքիան, Յըպէյը...» (տես՝ Ե. Հ. Քասունի, *Կիլիկիոյ Հայկական Իշխանապետութիւնը...*, էջ 121-123), Անտիոքի՝ իւրաքանչիւր պատեհ առիթի, որ կը նշանակէր՝ երբ Բիզանդիոնի բանակները չէին կրնար հասնիլ իր սահմաններուն, Կիլիկիոյ վերոյիշեալ շրջաններուն վրայ իր իշխանութիւնը կը փորձէր տարածել, այնքան ատեն որ Կիլիկիոյ Հայկական Իշխանապետութիւնը ի գորտ չէր իր կամքը պարտադրելու այդ տեղերուն վրայ:

114. William of Tyre, vol. 2, pp. 455-457.

բաղարձէն (արդեօ<sup>օ</sup>ք աւելի կանուխ քան կ'ակընկալուէր) ետք, իր մօտ ապաստանած անտիոքացի ազնուականներն էին որ պիտի բացայայտէին իրեն դէմ կազմակերպուած դաւը, ակամայ ստիպելով որ Լեւոն դիմէր փախուստի, շտապելով Տարսոն՝ «իբրեւ անկասկած տեղի»<sup>115</sup>: Տարսոնը ապահով էր, քանի որ անիկա դուրս կը մնար Ռուբէնի իշխանութեան սահմաններէն, եւ ուր իբր կառավարիչ կը նստէր Իսահակ Կոմնենոս:

Տարի մը ետք, 1182/3 թ.ին, Լեւոն Կ. Պոլսէն կը վերադառնայ Կիլիկիա, ուր իր եղբայրը՝ Ռուբէն, ոչ միայն «սիրով ընկալաւ զնա», այլ եւ անոր կու տայ Կապան բերդը<sup>116</sup>:

Որքան ալ Ալիշան գրէ թէ՛ «Ռուբէն... ետ գտեղին ՚ի կալուած քաջի եւ բարեբաղդ եղբոր իւրիւմ Լեւոնի Մեծի, իբրեւ գերագոյն իմն վիճակ, սակս ամբութեան բերդին, լեռնային եւ ջրային անցիցն»<sup>117</sup>, շեշտելով Կապանի կարեւորութիւնը, կարելի չէ անտես առնել այն իրողութիւնը թէ Կապանը՝ Կիլիկիոյ հիւսիսային սահմանին մօտ, շա՛տ հեռու էր գահանիստ Սիսէն, ինչ որ ակամայ մտածել կու տայ թէ Ռուբէն իր եղբայրը «սիրով» դիմաւորելով հանդերձ, տակաւին ամբողջական վստահութիւն չունէր անոր հանդէպ: Լեւոնի՝ Կապան տեղափոխումը, զայն մեկուսացնել կը նշանակէր պարզապէս:

Լեւոնի վերադարձը պատահականութեան կարելի չէ վերագրել: Կ. Պոլսոյ մէջ հակա-լատին տարբերը ի վերջոյ կը յաջողին/իրենց առաջնորդը գտնել յանձինս նշանաւոր Անդրոնիկոս Կոմնենոսի՝ Մանուէլ կայսեր զարմիկին, որուն արկածախնդրութիւնները Արեւելքի մէջ, արդէն ներուած՝ հմայք մը ստեղծած էին իր անուան շուրջ: Անդրոնիկոս՝ Պոնտոսի իր առանձնութեան մէջ կը ստանայ Կ. Պոլիս վերադառնալու հրահրը, զոր կ'ընդունի մեծ խանդավառութեամբ: Անդրոնիկոս «բարբարոսներու բանակով մը» ճամբայ կ'ելլէ, ու հազիւ մայրաքաղաքին մատոյցներուն հասած, Կ. Պոլսոյ եւ Վոսփորի յոյն բնակչութիւնը սարսափելի ջարդ մը կը սարքէ տեղի լատին բնակչութեան դէմ: Անդրոնիկոս Կ. Պոլիս կը մտնէ 1182 թ.ի Մայիսին՝ իբրեւ պաշտպանը Ալեքսիոս Բ.ի: Սակայն շուտով ան կը պարզէ իր հարազատ դիմագիծը: Նախ կը բանտարկէ ու կուրցնել կու տայ կայսերական գահին հովանաւորը՝ Ալեքսիոս Կոմնենոսը: Ապա՝ խորհրդաւոր պայմաններու մէջ կը սպաննուին Մանուէլ կայսեր քոյրը՝ Մարիան եւ ամուսինը: Աւելի ուշ՝ խեղդամահ կը մեռնի մայր կայսրուհին՝ Մա-

115. Ալիշան, Սիսուան, էջ 267:

116. Սմբատ Սպարապետ, էջ 194:

117. Ալիշան, Սիսուան, էջ 191:

րիան: Կը սպաննուին աւելի քան հազար ազնուականներ, որոնց զիակները կը կորսուին բոցերու մէջ: 1183 թ.ի Սեպտեմբերին Ալեքսիոս Բ. կը դատապարտուի ստորագրել հրամանագիր մը, որ Անդրոնիկոսը գահակից կայսր կը հռչակէր: Երկու ամիսներ ետք, 1183 թ.ի Նոյեմբերին, պատանի կայսրը ինք եւս խեղդամահ կը սպաննուի: Անդրոնիկոս, վաթսուն երկու տարեկան հասակին մէջ կ'ամուսնանայ այրիացած կայսրուհիին՝ տասներկու տարեկան Ակնէսին, որ Ֆրանսայի Լուի Է. թագաւորին դուստրն էր<sup>118</sup>:

Անդրոնիկոս Կոմնենոս (1183-1185 թթ.) արդէն բացարձակ տէրն էր կայսրութեան: Մինչ այդ ցուցաբերած իր վայրագութեանց փոխան, իշխանութեան ղեկը ձեռք առնելէ ետք, ան կը փորձէ կարգի դնել պետութեան գործերը, ու սիրաշահիլ ժողովուրդը: Բայց ի՞նչ կրնար ըլլալ Անդրոնիկոսի դիրքը Կ. Պոլիս գտնուող Լեւոնի հանդէպ: Նոր կայսրը անձանօթ՝ մը չէր Հայկական Կիլիկիոյ: Ծուրջ երեսուն տարիներ առաջ Մանուէլ կայսեր կողմէ ան առաքուած էր Կիլիկիա, Թորոս Բ.ի դէմ, սակայն ծանրօրէն պարտուած՝ հակառակ իր յօտրտանքին, թէ այն շղթան, որմով կայանած ու գերի տարած էին Թորոսի հայրը՝ Լեւոն Ա.ը, բերած էր իրեն հետ, նոյն այդ շղթայով տղան գերեվարելու<sup>119</sup>: Լեւոն փախած էր Կ. Պոլսէն, թէ՛ արտօնուած վերադառնալու: Հաւանաբար երկրորդը: Յաջորդ ամիսներու եւ տարիներու Լեւոնի գործընթացը այդպէս մտածել կու տայ: Ռուբէնի հետ հաշտութիւն մը՝ կը նշանակէր Պոհեմոնտի եւ Իսահակ Կոմնենոսի դէմ ճակատ ստեղծել:

Կ. Պոլսոյ մէջ ստեղծուած նոր կացութեան դէմ առաջին ըմբոստացողը կ'ըլլայ Կիլիկիոյ կառավարիչը՝ Իսահակ Կոմնենոս, որ կը փորձէ տապալել Ռուբէնը եւ իր տիրապետութիւնը հաստատել Կիլիկիոյ մէջ: Իր այս ծրագիրը իրականացնելու համար Իսահակ կը դիմէ Պոհեմոնտի, որուն բանակները շուտով կը հասնին Տարսոն: Սակայն Անտիոքի իշխանը անմիջապէս կը դառնայ իր որոշումէն, ու Տարսոնը կը ծախէ Ռուբէնի: Քաղաքին հետ անոր ձեռքերուն կը մատնէ Իսահակ Կոմնենոսը<sup>120</sup>:

**Պոհեմոնտ-Իսահակ Կոմնենոս-Լեւոն զինակցութեան գաղափարըն ու ծրագիրը տապալած էին վերջնականօրէն: Լեւոն վերադարձած**

118. William of Tyre, vol. 2, pp. 461-467. Bar Hebraeus, p. 312. Joan M. Hussay, *Byzantium and the Crusades, 1081-1204*, in: K. M. Setton, *A History of the Crusades*, vol. 2, p. 145. S. Runciman, *A History of the Crusades*, vol. 2, pp. 427-428.

119. Սմբատ Սպարապետ, էջ 170:

120. William of Tyre, vol. 2, p. 491. S. Runciman, *A History of the Crusades*, vol. 2, p. 490. Ալիշան, *Սիսուան*, էջ 267:

էր տուն: Պոհեմոնտ կը հետամտէր նոր քաղաքականութեան մը փընտառութիւն: Բայց Իսահակ Կոմնենոս պիտի շարունակէր արկածախնդրութիւնը, ի վերջոյ Կիպրոսի մէջ իր «կայսրութիւնը» հռչակելու համար:

Իսահակ Կոմնենոս իր առաջին յանդուգն քայլը պիտի առնէր Կիլիկիոյ մէջ, որուն, Բիւզանդիոնի կողմէ նշանակուած կառավարիչն էր ինք: Ասկէ սակայն նաեւ կը սկսի շփոթն ու անորոշութիւնը ղէպքերու զարգացման մասին:

Սըր Ճորճ Հիլ իր տեղեկութիւնները քաղելով Նիկիդաս Գոնիա-ղէսէն, եւ սակայն առանց ըսելու թէ ինչո՞ւ, կը գրէ թէ Իսահակ Կոմնենոս «ձերբակալուեցաւ հայոց կողմէ ու նետուեցաւ բանտ»<sup>121</sup>: Ալիշան, հետեւելով «մերձաժամանակ» պատմիչներու, կը գրէ. «... յամի 1183 [Իսահակ Կոմնենոս] խիզախեալ ընդդէմ սուլտանին Իկոնիոնի իսկ Ռուբէնի կանխեալ քան զղաշնակից դրացին այլազգի, վանեալ մարտիւ եւ կալեալ զՍահակ»<sup>122</sup>:

Առաջին՝ չբացայայտուած պատճառով, Իսահակի ձերբակալութիւնը Ռուբէնի կողմէ կարելի է ըլլայ միայն ենթադրաբար բացատրել, այն է՝ Պոհեմոնտ-Իսահակ-Լեւոն համագործակցութեան քողագերծումը Ռուբէնի կողմէ, եւ Լեւոնի՝ Կապանի մէջ մեկուսացուելէն ետք, Իսահակի դէմ կազմակերպուած պատժական արարք մը Ռուբէնի ձեռքով: Եթէ այս բացատրութիւնը հաւանականութեան սահմանէն անդին չի կրնար անցնիլ, երկրորդը, թէ՛ Իսահակ, Իկոնիոյ Գլըճ Արսլան Բ. սուլթանին դէմ արշաւանք մը կը կազմակերպէր Կիլիկիոյ մէջէն, ոչ մէկ պատճառաբանութեան կրնայ դիմանալ:

Իսահակ Կոմնենոսի հետագայ գործընթացէն դատելով, միակ տրամաբանական եզրակացութիւնը կը մնայ այն, որ ան՝ Բիւզանդիոնի նոր կայսր Անդրոնիկոս Կոմնենոսի հետ ալ ոչ սիրալիր յարաբերութեան մէջ<sup>123</sup>, յանդգնած էր Կիլիկիոյ մէջ անկախ իշխանութիւն մը հաստատելու փորձը ընել, որուն սակայն Ռուբէն պատասխանած էր ամենէն խիստ միջոցառումով<sup>124</sup>:

121. G. H. Hills, *A History of Cyprus*, vol. 1, p. 312.

122. Ալիշան, *Սիսուան*, էջ 57: Նոյն տեղեկութիւններուն համար նաեւ տես՝ G. H. Hill, *A History of Cyprus*, vol. 1, p. 312, f. n. 1, ուր իբր աղբիւր կը յիշուին անգլիացի ժամանակագիրներ՝ Պենետիկ Փիթըրպորոյ եւ Հովետըն:

123. G. H. Hills, *A History of Cyprus*, vol. 1, p. 312.

124. Հետաքրքրական է նշել որ երբ նման եզրակացութիւն մը անտեսուած է գիտնականներու կողմէ, անցած դարու վերջերուն Կիպրոսի մասին գրուած յուշագրական գիրքի մը մէջ, ուր նաեւ հատուած մը խորագրուած է «Ակնարկ մը Կիպրական Պատմութեան», կը կարդանք. «Այդ ժամանակ (1191 թ., Ե.Ղ.Բ.) Կիպրոս կը գտնուէր Իսահակ

Կիլիկիոյ մէջ Իսահակ Կոմնենոսի ձախողութեան գլխաւոր պատճառը պէտք է նկատել Պոչեմոնտի՝ վերջին պահուն կատարած նահանջը: Առաջին պահ Պոչեմոնտ համաձայնած էր օգնել Իսահակի, եւ մինչեւ իսկ իր բանակները զրկած էր Տարսոն<sup>125</sup>, եւ սակայն ան յանկարծ ետ քաշած էր որոշումը, ու մինչեւ իսկ հրաժարած Տարսոնի վրայ իր իրաւասութենէն, զայն ծախելով Ռուբէնի: Պոչեմոնտը նման որոշումի մը մղող արտաքին ազդակ մը գոյութիւն ունէր այդ օրերուն:

1182 թ.ի սկիզբներուն, Հալէպի տիրոջ՝ Մելիք Սալիհի մահը կը խախտէր արաբ-իսլամական աշխարհի ներքին հաւասարակշռութիւնը՝ ի վնաս Սալահ էլ Տինի: Պար Հեպրաոս կը գրէ թէ Սալիհ, մահամերձ վիճակի մէջ, լուր կը զրկէ Մուսուլի Իզ էլ Տինին, ու կը խնդրէ անկէ որ անմիջապէս Հալէպ գայ, որպէսզի ինք քաղաքը իրեն յանձնէ, եւ ոչ թէ Սալահ էլ Տինի: Սալիհ իր ազնուականները կը հրաւիրէ ու անոնցմէ հաւատարմութեան երդում կ'առնէ: Իզ էլ Տին կը հասնի Հալէպ, կ'ամուսնանայ Սալիհի կնոջ հետ, ապա՝ Նուր էլ Տինի ու Սալիհի կուտակած ամբողջ հարստութիւնը կը կողոպտէ ու կնոջը հետ կը զրկէ Մուսուլ: Հալէպ կը մնար Զենկիներու ձեռքին մէջ: Սակայն Իզ էլ Տին քաղաքը կը յանձնէ իր եղբորը՝ Իմատ էլ Տինի, փոխարէնը անկէ ստանալով Սինճարը, ու ինք կը վերադառնայ Մուսուլ: Սալահ էլ Տին չէր կրնար իր պետութիւնը պատկերացնել առանց Հալէպի ու Մուսուլի: 1182 թ.ի Սեպտեմբերին ան կը քալէ հիւսիս. քանի մը օր Հալէպը պաշարուած պահելէ ետք կը շարժի Մուսուլի դէմ, որուն ամրակուռ պարիսպները տեղի չեն տար Այյուպիի զօրքերուն դիմաց: Սալահ էլ Տին կը քակէ Մուսուլի պաշարումը, ու կը քալէ հիւսիսային Միջագետքի քաղաքներուն դէմ: Յաջորդաբար կը գրաւէ Սինճարը, Ամիդը, Ոււհան, Այնթապը ու կրկին կ'իջնէ Հալէպ, որուն նոր տէրը՝ Իմատ էլ Տին, խաչակիր-լատին ուժերու հետ համաձայնաբար Սալահ էլ Տինի տիրոջթնեւորուն մէջ աւեր կը սփռէ: Սակայն երբ Այյուպիի բանակները կը հասնին Հալէպի դռներուն, այս անգամ քաղաքը վար կը դնէ իր գէնքերը: Սալահ էլ Տին Հալէպ կը մտնէ 1183 թ.ի Յունիսի 12-ին: Կը գոյանայ

Կոմնենոս անուն մէկու մը իշխանութեան տակ, որ վերջերս փորձած էր Հայաստանի (իմա՝ Կիլիկիա, Ե.Հ.Ք.) մէջ անկախ բազաւորութիւն մը ստեղծել, բայց ձախողելով՝ փախած էր Կիպրոս: Հոս ան աւելի յաջող եղած էր» (W. M. Mallock, *In An Enchanted Island or A Winter Retreat in Cyprus*, London, 1892, p. 180): Նորագոյն հրատարակութեան մը մէջ, կրկին առանց յիշելու թէ ինչո՞ւ էր կոխը, կը կարդանք. «Իսահակ Կոմնենոս, Տարսոնի կառավարիչը, Կիլիկիոյ մէջ հայոց դէմ մղած կոխի մը ընթացքին ձեռքաւորուած էր» (John Munro and Zahi Khuri, *Cyprus, Between Venus and Mars*, Beirut, 1984, p. 40):

125. S. Runciman, *A History of the Crusades*, vol. 2, p. 430.

համաձայնութիւն մը, ըստ որուն, Հալէպի փոխարէն Սալահ էլ Տին Սինճարը իր շրջապատով կը յանձնէ իմատ էլ Տինի, որ իր հերթին կը մտնէ Այյուպի վասալական ծառայութեան մէջ: Տիրելով Հալէպին, Սալահ էլ Տին կը դառնար իսլամական աշխարհի անմրցակից ախոյ-եանը<sup>126</sup>:

Պոհեմոնտ, որուն զօրքերը հաւանաբար իմատ էլ Տինի հետ ապատակեր էին Սալահ էլ Տինի սահմանները, սարսափած անոր յաղթական Հալէպ մուտքէն, կ'աճապարէ Աքրա, Երուսաղէմի թագաւորէն օգնութիւն խնդրելու: Պոհեմոնտ «իր հետ կ'առնէ փոքրաթիւ պահակազունդ մը, որպէսզի [Անտիոքը] չզրկուի պաշտպաններէն. իր հետ էր նաեւ Թրիփոլի կոմսը: Հոն, թագաւորութեան իշխաններուն ներկայութեան, [Պոհեմոնտ] օգնութիւն կը խնդրէ Սալահ էլ Տինի դէմ. կ'որոշուի որ իր խնդրանքը ունկնդրուի իր փափաքին համաձայն»<sup>127</sup>: Ժողովականները կ'որոշեն երեք հարիւր ասպետներ տալ Պոհեմոնտի: Սպառնացող վտանգին դէմ, տրուած աջակցութիւնը նշանակալից չէր: Սակայն իրաւունք կ'ունենանք մտածելու թէ տրուած զինուորական օգնութիւնը նաեւ առանց պայմանի չէր: Երուսաղէմի թագաւորը չէր կրնար համաձայնիլ որ Պոհեմոնտ Անտիոքի իր զօրքերը ղրկէր Տարսոն՝ Ռուբէնի վրայ, եւ իր հերթին Երուսաղէմէ օգնութիւն խնդրէր Սալահ էլ Տինի դէմ: Ու եթէ ասոր վրայ աւելցնենք Ռուբէն-Պոլտուին Դ. խնամիական կապով ամրապնդուած համերաշխութիւնը, պարզ կը դառնայ թէ Երուսաղէմի օգնութիւնը պայմանաւորուած էր Անտիոքին՝ Տարսոնէն քաշուելովը:

Սակայն Աքրայէն Անտիոք մեկնած օգնական ուժերը կը վերադառնան շուտով: Պոհեմոնտ «ժամանակաւոր զինադուլ մը կնքած էր Սալահ էլ Տինի հետ, եւ ըստ երեւոյթին ինքզինք ապահով կը զգար [ձեռք բերուած] խաղաղութեամբ»: Սակայն ժամանակաւոր խաղաղութիւն մը վերջնական ապահովութեան մը գրաւականը չէր: Պոհեմոնտ «որպէսզի նուազ տաղտուկ ունենայ, եւ կարենայ աւելի ուշադիր հսկել Անտիոքի տիրոջ ինքն վրայ, ան՝ մեծ գումարի մը փոխարէն կիլիկիոյ մայրաքաղաքը՝ (իմա՝ Բիւզանդիոնի կողմէ նշանակուած կառավարչին նստավայրը, Ե.Ղ.Ք.) Տարսոնը փոխանցեց Ռուբէնին, հզօր հայ սաղրար մը, որ տէրն էր այդ երկրին այլ քաղաքներուն: [Պոհեմոնտ] մեծ իմաստութիւն ցոյց տուաւ իրականացնելով այս. Տարսոնը՝ Ռու-

126. Մ. Ասորի, էջ 488: Անանուհ Եղիսացի, էջ 149-152: Bar Hebraeus, pp. 311, 313-316. William of Tyre, vol. 2, pp. 489-490. Philip Hitti, *Makers of Arab History*, pp. 130-131. S. Lane-Poole, *Saladin and the Fall...*, pp. 169-174.

127. William of Tyre, vol. 2, pp. 490-491.

բէնի տիրոյթներով բաժնուած, շատ հեռու էր Անտիոքէն: Ուրեմն շատ դժուար եւ ծախսալից էր [Պոհեմոնտի] համար զայն հոգալը»<sup>128</sup>:

Տիրոսցիէն կատարուած վերոյիշեալ մէջբերումին վերջին տողերը յստակօրէն կը մատնեն Երուսաղէմի թագաւորութեան ժամանակագիրին գոհունակութիւնը Պոհեմոնտի առած քայլերուն ի լուր, ինչ որ կրկին մտածել կու տայ թէ Պոհեմոնտ կը գործադրէր Պուտուին Դ-ի պատուէրները. — հրաժարիլ Կիլիկիայէն ու կեդրոնանալ Անտիոքի պահովութեան գործերուն:

Իսահակ Կոմնենոսի ձերբակալութենէն ետք, իրեն ճակատագրուած բախտին մասին ալ տարակարծիք են աղբիւրները: Սըր Ճորճ Հիլ, միշտ հետեւելով Նիկիդաս Գոնիադէսի, կը գրէ. Ռուբէն Իսահակը «վաճառեց Տաճարական ասպետներուն, . . . Անդրոնիկոս [կայսրը] . . . գնեց զինք Տաճարականներէն եւ արտօնեց վերագարձը՝ երկու ծանօթ անձնաւորութիւններու՝ Կոստանդին Մակրոդուկասի եւ Անդրոնիկոս Դուկասի երաշխաւորութեամբ: Իսահակ իրեն ղրկուած ղրամը գործածեց Իսաւրայի մէջ իրեն համար զօրք մը ոտքի հանելու, ու անցաւ Կիպրոս: Հոն՝ իշխանութեան ցոյց տուաւ կեղծ նամակներ, որոնք կը վկայէին իր՝ Կիպրոսի կառավարիչ նշանակուիլը»<sup>129</sup>:

Իսկ անգլիացի ժամանակագիրներուն համաձայն, Ռուբէն՝ կալանաւոր Իսահակը «կը մատուցանէ» սուլթանին, բայց երբ այս վերջինը «չկամեցաւ» ընդունիլ, Ռուբէն զայն կը յանձնէ Պոհեմոնտի<sup>130</sup>: Հիլի մօտ կը կարդանք շարունակութիւնը. Պոհեմոնտ «60,000 բիզան պահանջեց որպէս փրկագին: Իսահակ դիմեց Կիպրոսի մեծահարուստներուն, որոնք իրեն ղրկեցին պահանջուած գումարին կէսը, զոր ինք փոխանցեց [Պոհեմոնտի], եւ մնացեալ կէսին համար իր մանչն ու դուստրը թողուց որպէս երաշխաւորութիւն: Իսահակ իբրեւ իշխան դիմաւորուեցաւ Կիպրոսի մէջ, Մանուէլ կայսեր հետ ունեցած իր ազգականական կապին համար: Երբ [Պոհեմոնտ] մնացեալ գումարը պահանջեց, Իսահակ մերժեց զայն յանձնել իշխանի պատուիրակներուն, այլ՝ ան գումարը վստահեցաւ Տաճարականներուն, որոնք սակայն ճա-

128. Նոյնը, էջ 491. Պոհեմոնտ-Սալահ էլ Տիմ գիմադուլին համար նաեւ տես՝ Մ. Ասորի, էջ 491: Bar Hebraeus, p. 321. Ս. Անեցի, էջ 140: Երբ Ալիշան կը գրէ թէ «վասն հեռաւորութեան բաղաժիմ (Տարսոն, Ե.Հ.Ք.) յիւրմէ ոստանէն՝ ոչ կարելով Անտիոքացոյն պահել զայն դիւրաւ, . . . ինքնակամ վաճառեաց Ռուբէնի՝ ծանր գնով» (Սիւուան, էջ 57), իրողութեան մէկ մասը արձանագրած կ'ըլլայ միայն:

129. G. H. Hill, *A History of Cyprus*, vol. 1, pp. 312-313. S. Runciman, *A History of the Crusades*, vol. 1, p. 430.

130. Ալիշան, Սիւուան, էջ 57:

նապարհին կողոպտուեցան ծովահաններուն կողմէ: Իսահակ կատարուածը Անտիոքի կողմէ կազմակերպուած դաւ մը նկատեց, ու մերժեց գումարը երկրորդ անգամ վճարել»<sup>131</sup>:

Իսկ նորագոյն ուսումնասիրութեան մը մէջ կը կարդանք. «Կայսրը՝ Անդրոնիկոս Ա., արտօնեց որ Իսահակ զնէ ազատութիւնը Անտիոքի Պոհեմոնտ իշխանէն (որուն ան յանձնուած էր հայոց կողմէ)՝ կրպարական աղբիւրներէ ձեռք բերուած փրկագինի մը վճարումով: Փրկագինին կէսը ստանալէն ետք Պոհեմոնտ արտօնեց որ Իսահակ Կրպրոս երթայ՝ մնացեալ կէսը ապահովելու համար»<sup>132</sup>:

Կրպրոսի մէջ իր իշխանութիւնը ամրապնդելէ ետք, Իսահակ կը մերժէ ճանչնալ Բիւզանդիոնի հովանաւորութիւնը Կրպրոսի վրայ, եւ ինքզինք կը հռչակէ «Սրբազան կայսր Կրպրոսի»<sup>133</sup>:

Որո՞ւն յանձնած էր Ռուբէն իր կալանաւորը՝ Իսահակը. Տաճարական Ասպետներո՞ւն, թէ՛ Պոհեմոնտի: Այս շփոթը կը փարատի, եթէ ընդունինք թէ Տաճարական Ասպետները միջնորդի եւ երաշխաւորի դերին մէջ էին ընդմէջ Ռուբէնի, Պոհեմոնտի եւ Անդրոնիկոսի: Տաճարականներ Իսահակը կը յանձնէին Պոհեմոնտի, ու կ'երաշխաւորէին անոր ազատ արձակումը՝ փրկագինի մը փոխարէն: Մեր այս ենթադրութիւնը իր համոզիչ բացատրութիւնը կը գտնէ անով որ Իսահակ Կրպրոս անցնելէ յետոյ, իր փրկագինին կէսը՝ 30,000 բիզան, կը մերժէ յանձնել Պոհեմոնտի կողմէ զրկուած պատուիրակներուն, ու գումարը կը վստահի միայն Տաճարական Ասպետներուն: Հոս անհրաժեշտ է աւելցնել նաեւ այն, որ Տաճարական Ասպետներու Կարգը<sup>134</sup> իր գոյառումէն քիչ ժամանակ ետք, ոչ միայն զինուորական, այլ եւ տնտեսական հզօր ոյժ մը կը ստեղծէր: Տաճարականները մինչեւ իսկ տնտեսական գործառնութեանց կը ձեռնարկէն, ստանձնելով միջնադարեան դրամատուներու դերը՝ կատարելով փոխառումներ ու փոխանցումներ, եւ յանձանձնելով երաշխաւորութիւններ<sup>135</sup>:

Ռուբէնի ու Պոհեմոնտի միջեւ կատարուածը փոխանակութիւն մըն էր պարզապէս: Անտիոքի տէրը Կրիկիտայէն կը քաշէր իր զօրքերը ու կը համակերպէր վաճառել Տարսոնը, պայմանով որ Իսահակը իրեն

131. G. H. Hill, *A History of Cyprus*, vol. 1, p. 313, f. n. 1.

132. J. Munro, Z. Khuri, *Cyprus*, p. 40.

133. G. H. Hill, *A History of Cyprus*, vol. 1, p. 313, f. n. 1. J. Munro, Z. Khuri, *Cyprus*, p. 40.

134. Տաճարականներու Կարգին հիմնադրութեան պարագաներուն մասին տես՝ Ե. Հ. Քասունի, *Կրիկիտայ Հայկական Իշխանապետութիւնը ...*, էջ 157-158:

135. Albert Ollivier, *Les Templiers*, Paris, 1958, pp. 21-23. S. Runciman, *A History of the Crusades*, vol. 2, p. 313.

յանձնուէր: Համաձայնութեան գործադրումով, հարեւան երկու իշխաններու միջեւ խաղաղութիւնը կը վերահաստատուէր: «Ռուբէն, — կը գրէ Ալիշան, — ետ զնա (Իսահակ, Ե.Ղ.Ք.) ի ձեռս Բրնձին (Պոհեմոնտ, Ե.Ղ.Ք.)՝ ընդ որում ունէր ինչ խէթ, եւ հաշտեցաւ այսու»<sup>136</sup>: Հաշտութիւնը երկար պիտի շտեւէր սակայն: Պոհեմոնտ «չուտով պիտի զղջար»<sup>137</sup> եղածին համար: Սալահ էլ Տինի հետ «գինադուլ» մը շատ աւելի հեշտութեամբ ձեռք բերուած էր, քան ինք կը կարծէր: Բայց ան շատ թանկ վճարած էր Կիլիկիոյ մէջ: Հարկ էր վերագտնել հոն կորսուածը, բայց եւ անհրաժեշտ էր պատեհ առիթին սպասել:

Ռուբէն՝ ձերբազատուած Իսահակի եւ Պոհեմոնտի միջամտութիւններէն, իր ուշադրութիւնը կը կեդրոնացնէ Կիլիկիոյ գործերուն: Տարսոնը զնած էր արդէն: Ան հիմա իր զէնքերը կը դարձնէ Մսիսի եւ Ատանայի դէմ, ու զանոնք կ'առնէ Ռուբինեան տիրապետութեան տակ<sup>138</sup>:

Անհրաժեշտ կ'ըլլայ երկու հարց պարզել այստեղ: Առաջինը, թէ՛ Ատանան, Մսիսն ու Տարսոնը, որոնք 1172 թ. ի վերջ կամ 1173 թ. ի սկիզբ գրաւուած էին Մլեհի կողմէ<sup>139</sup>, ինչո՞ւ եւ ի՞նչպէս կրկին անգամ ինկած էին Բիւզանդիոնի տիրապետութեան տակ: Ալիշան, որ ոչ մէկ

136. Ալիշան, *Սիսուան*, էջ 57-58:

137. S. Runciman, *A History of the Crusades*, vol. 2, p. 430.

138. Մմբատ՝ հայոց ՌԴ = 6 Փետրուարի, 1175-6 Փետրուարի, 1176 թ. ի տակ կը դնէ վերոյիշեալ երեք քաղաքներուն գրաւումը. Ռուբէն «քաջապէս մղէր զնոյս բշնամեացն, որով էառ զՄսիս, զԱտանա, եւ զՏարսուս» (էջ 191-192): Մմբատի կը հետեւի Ալիշան (*Սիսուան*, էջ 57), նաեւ Մ. Զուլայեան, որ կը գրէ. «Ռուբէն Գ. ն ազատագրեց քիւզանդացիների ձեռքում մնացած Ատանան ու Տարսունը» (*Հայկական Իշխանութեան Հիմնումը Կիլիկիայում*, էջ 685), մոռացութեան տալով, կամ՝ դուրս ձգելով Մսիսը: Միայն Ատանայի ու Տարսունի գրաւուելուն մասին կը խօսի նաեւ Գ. Միքայելեան, սակայն իբր բուսկան կը յիշատակէ «1180 թ. Մանուէլի մահէն ետք» (*Կիլիկիայի Հայկական Պետութեան Պատմութիւն*, էջ 130 (ոուսերէն)): Զամչեանց՝ 1182 թ. ի (*Պատմութիւն Հայոց*, Գ. հտր., էջ 141), Օրմանեան՝ 1181 թ. ի (*Ազգապատում*, Ա. հտր., սիւն. 1482) եւ Ա. Սուքիասեան 1182 թ. ի (*Կիլիկիայի Հայկական Պետութեան եւ Իրաւունքի Պատմութիւն*, էջ 45) տակ կը խօսին Ռուբէնի կողմէ Տարսունի զինուորական ուժով գրաւուելուն մասին, եւ ոչ թէ՛ Պոհեմոնտէ գնուած ըլլալուն: Իսկ Ս. Պ. Պօղոսեան կը գրէ. «օգտագործելով քիւզանդական իշխանութիւնների եւ Իկոնիայի սուլթանութեան միջեւ եղած բշնամամբը եւ օժանդակութիւն ստանալով Իկոնիայի սուլթանից, կարճ ժամանակում Կիլիկիայի արեւմտեան մասերը ազատագրեց քիւզանդական տիրապետութիւնից» (*Հայ Ժողովրդի Պատմութիւն*, Բ. հտր., էջ 123), առանց բի ու բուսկան յիշելու:

139. Ալիշան, *Սիսուան*, էջ 57: S. Runciman, *A History of the Crusades*, vol. 2, pp. 389-390.

աղբիւր կը յիշէ իր ունեցած տուեալներուն մասին, կը գրէ: «... դարձեալ միւսանգամ անկեալ էին քաղաքքդ Կիլիկիոյ (Ատանա, Մսիս, Տարսոն, Ե-Ղ-Ք.) ՚ի ձեռս Յունաց, բայց ոչ սպրդեալք ՚ի մագլաց Մլեհի, այլ կամովի եւ դաշամբք ինչ տուեալ ՚ի նմանէ առ Անտիոքայ իշխանն»<sup>140</sup>: Իսկ Սիրարփի Տէր ներսէսեան կը գրէ. 1182 թ. ի վերջերուն՝ «Ռուբէն վերստին տիրացաւ Ատանայի եւ Մամեստրայի, որոնք անգամ մը եւս գրաւուած էին Բիւզանդիոնի կողմէ: Գալով Տարսոնի, ան յոյներու ձեռքն էր մինչեւ 1181 թ., ապա՝ փոխանցուած էր Պոհեմոնտի, որ զայն Ռուբէնի ծախեց 1183 թ. ին»<sup>141</sup>:

Մլեհի կողմէ գրաւուած վերոյիշեալ քաղաքներուն նոյն Մլեհին կողմէ «կամովի եւ դաշամբք ինչ» Բիւզանդիոնի կամ Պոհեմոնտի փոխանցուած ըլլալը տրամաբանական բացատրութիւն չունի: Ոչ մէկ սկզբնաղբիւր կը խօսի նման դաշինքի մը մասին, որ գալով Մլեհէ, անոր մտրոզը քաղաքականութեան ժխտումն իսկ պիտի ըլլար: Հասկնալի եւ ընդունելի միակ բացատրութիւնը կը մնայ այն, որ Մլեհի սպանութենէն ետք, Բիւզանդիոն կրկին անգամ գրաւած էր զանոնք: Չենք ուզեր անտեսել նաեւ այլ հաւանականութիւն մը: Մլեհի դէմ գործադրուած ոճիրին մէջ իր ունեցած մասնակցութեան որպէս հատուցում, Բիւզանդիոն՝ Կիլիկիոյ մէջ իրեն համախոհ իշխանական տուներէն կը ստանայ Ատանան, Մսիսն ու Տարսոնը:

Իսկ Սմբատէ սկսած մինչեւ մերօրեայ կարգ մը պատմաբաններուն այն ենթադրութիւնը, թէ՛ Ռուբէն՝ Ատանան, Մսիսն ու Տարսոնը կը գրաւէ 1175/6 թ. ին, դժուար ընդունելի եզրակացութիւն մըն է: Նման դատումի ենթահոգ կը ծառայէ Միրիոքեֆալոնի մէջ Մանուէլ կայսեր կրած պարտութիւնը Գլըճ Արսլան Բ. ի դիմաց, ինչ որ կը փակէր Փոքր Ասիոյ մէջէն Բիւզանդիոնի ճանապարհը դէպի Կիլիկիա, եւ ուրեմն ազատ ձեռք կը պարզեւէր Ռուբէնի՝ յիշեալ քաղաքները գրաւելու: Բայց եթէ Սմբատի յիշած տարին կ'իյնայ 6 Փետրուարի, 1175— 6 Փետրուարի, 1176 թ. ի միջեւ, Միրիոքեֆալոնի ճակատամարտը տեղի կ'ունենար 1176 թ. ի Սեպտեմբերի 17-ին: Տակաւին՝ այդ ճակատամարտի իրաւ տարողութիւնը երկար ժամանակ ետք միայն ըզգալի կը դառնար: Իսկ Բիւզանդիոն Փոքր Ասիոյ մէջ անշարժութեան կը դատապարտուէր միայն 1178—1180 թթ. ուն՝ զանիշմենտներու վերջնականօրէն ասպարէզէն դուրս քշուելէն ետք<sup>142</sup>:

140. Ալիշան, Սիսուան, էջ 57:

141. S. Der Nersessian, *The Kingdom of Cilician Armenia*, pp. 643-644.

142. Հայր Ներսէս Ակիմեան, խօսելով Կիլիկիոյ օրէնսդրական հարցերու մասին, կ'ընէ հետեւեալ ուշագրաւ սահմանումը. «Հայկական Կիլիկիա մինչեւ 1180 Բիւզանդիոն»:

Ատանայի ու Մսիսի անկումէն ետք, Ռուբէն իր աչքերը կը սեւեռէր Լամբրոնի դէմ, որուն տէրերը՝ Հեթումեաններ, էին «յամառագոյն եւ յերկարագոյն հակառակորդ տանն Ռուբինեանց»<sup>143</sup>: «... Վաղուց հետէ Ռուբինանք եւ Հեթումնք մախային ընդ միմեանս»<sup>144</sup>, քանի որ Կիլիկիոյ մէջ Ռուբինեան ամբողջական տիրապետութիւն մը հաստատելու ճիգերուն դէմ գլխաւոր խոչընդոտը կը բարձրանար Հեթումեաններու կողմէ: Իրենց սեփական անկախութեան ջատագով՝ Լամբրոնի տէրերը, միշտ ալ ապաւինած բիւզանդական հովանաւորութեան, Հայկական Կիլիկիոյ մէջ Բիւզանդիոնի շահերուն անզիջող պաշտպաններն էին: Ու հետեւողական այս զիրքորոշումին մէջ, անոնք նաեւ կ'ապաւինէին իրենց ամբողջին եզակի դիրքին:

Լամբրոնը, «հեռաւոր ու մեկուսի, անառիկ էր ու կը ներկայացընէր պաշտպանողական սքանչելի դիրք մը: Տաւրոսեան լեռներու խորը, Տարսոնէն հիւսիս, Պուլկար Տաղէն իջնող գօտիի մը հրուանդանին, մատչելի էր միայն նեղ ձորերու ընդմէջէն: Լամբրոնը բանալին էր Կիլիկեան Դռներուն: Ամենէն կարճ ճանապարհով, ան կը կենար մէկ օրուան հեռաւորութեան վրայ՝ Անատոլուի բարձրաւանդակէն դէպի Կիլիկիա եւ Միջին Արեւելք»<sup>145</sup>:

1183 թ.ի դէպքերու զարգացումը ամենէն պատե՛ առիթը կը ստեղծէր Ռուբէնի՝ Լամբրոնի դէմ Ռուբինեաններու երազը իրականացնելու: Ու եթէ որեւէ պատրուակ պէտք էր նման ծրագիր մը գործադրութեան դնելու, բիւզանդական հովանաւորութեան տակ գտնուող քաղաքներուն ու շրջաններուն դէմ Ռուբէնի վարած նուաճողական ռազմավարութեան հանդէպ Լամբրոնի տիրող՝ Հեթումի (1170–1200 թթ.) ցուցաբերած դժգոհութիւնը բաւարար էր արդէն<sup>146</sup>:

1183 թ.ին Ռուբէն կը քալէ Լամբրոնի դէմ, ու կը պաշարէ զայն: Հեթումեաններ՝ ամբողջ տարի մը, հաւանաբար մինչեւ 1185 թ.ի սկիզբը<sup>147</sup>, ապաւինելէ ետք իրենց ամբողջ անխոցելիութեան, կը դիմեն

դական Կայսրութեան սահմանին մէջ էր» (Հ. Ներսէս Ակիմեան, *Ներսէս Լամբրոնացի*, Վիեննա, 1956, էջ 257):

143. Ալիշան, *Սիսուան*, էջ 57:

144. Սմբատ Սպարապետ, էջ 190:

145. F. C. R. Robinson and P. C. Huches, *Lampron-Castle of Armenian Cilicia*, «Anatolian Studies», vol. XIX, 1969, p. 183. 1967 թ.ին Լամբրոնին տրուած այցելութեան մը մասին տես՝ Շաւարշ Քեմ. Պալըմեան, *Ու Նս Կ'երթամ... Լամբրոնի դղեակը*, «Ձարթօնֆ» (օրաթերթ), Պէյրութ, 14 Յուլիսի, 1967:

146. Հ. Մ. Չամչեանց, *Պատմութիւն Հայոց*, Գ. հտր., էջ 141: Մ. Արք. Օրմանեան, *Ազգապատում*, Ա. հտր., սիւն. 1482:

147. Հ. Ն. Ակիմեան, *Ներսէս Լամբրոնացի*, էջ 42:

Անտիոքի Պոհեմոնտին, խնդրելով անոր աջակցութիւնը: Այս վերջինը, որ արդէն զղջացած էր իր հապճեպ որոշումներուն, ու Կիլիկիոյ մէջ կատարած զիջումներուն համար, առիթը պատեհ կը սեպէ կորսընցուցածը վերագրուելու: 1183 թ.ին Սալահ էլ Տինի հետ կնքուած զինադուլը չորս տարիներու համար<sup>148</sup> ապահոված էր Անտիոքի արեւելեան սահմաններուն խաղաղութիւնը, իսկ Ռուբէնի հետ իր վերջին համաձայնութիւնը՝ համերաշխ մթնոլորտ մը ստեղծած երկու իշխանապետութիւններուն միջեւ: Պոհեմոնտ հիմա կրնար Ռուբէնի եւ Հեթումի միջեւ խաղաղութեան բանազնացի դեր ստանձնել: Պոհեմոնտ, Անտիոք՝ «ճաշի» (իմա՝ խորհրդակցութեան) կը հրաւիրէ Ռուբէնը, որ իր վերջին յաջողութիւններուն ապաւինած, աներկմիտ կ'ընդառաջէ կոչին: Սակայն Պոհեմոնտ շուտով վար կ'առնէ իր դիմակը: Անտիոքի իշխանը ոչ միայն պիտի փորձէր քակել տալ Լամբրոնի շուրջ նետուած օղակը, այլ եւ՝ վերահաստատել իր դիրքը Կիլիկիոյ մէջ:

Անեցիի ու Ճաշոցի Յիշատակարանին վկայութիւնները վերոյիշեալ դէպքերու ընթացքին մասին շատ պարզորոշ են: Անեցի կը գրէ. « Ի ՈԼԴ ԹՎԻՆ (= 1185) Բրինձն Անտաքու Պէմունտ՝ արար սէր ընդ Սալահատնին՝ որ տիրեաց բազում աշխարհաց. եւ ի սաղրելոյ իշխողի Լամբրոնին նենգիւ որսաց զՌուբէնն՝ զորդին Ստեֆանէի՝ զտէրն Կիլիկիոյ, զի յղեաց առ նա եւ խաբանօք ի սէր եւ ի ճաշ կոչեաց, եւ իբրեւ եկն ըմբռնեաց եւ ի բանտ եղ յԱնտաք, եւ Պէմունդն յայն վստահեացեալ եկն մինչեւ ի Թիլն Համտնոյ՝ կարծեաց թէ եւ զԿիլիկիա զքոամբ ածէ»<sup>149</sup>: Իսկ Ճաշոցի Յիշատակարանին մէջ կը կարդանք. «... ի տէրանց Լամբրոնի եղեւ դաւ նմա. զի սղարեալ էր Ռուբէն զԼամբրուն, եւ նոքա նեղեալ յղեցին առ բրինձն Անտիոքու զի ելս հնարեսցէ իրացն. իսկ բրինձն խաբանօք ի ճաշ կոչեալ զՌուբէնն՝ արգել զնա յԱնտիոք, վստահանալով թէ կարասցէ այնու զԿիլիկիա առնուլ»<sup>150</sup>:

148. Alfred Duggan, *The Story of The Crusades*, London, 1963, p. 146.

149. Սամուէլ Անեցի, էջ 140:

150. *Ճաշոցի Յիշատակարան* (տես՝ Սամուէլ Անեցի), էջ 219: 'տես տես' Մ. Ասորի, էջ 491-492: Վահրամ Բարունի, էջ 212: Սամուէլ Ալեւոացի, *Հեթմեանք Կամ Լամբրունացիք*, Յորոց Ս. Ներսէս Սաղմոսամեկնիչ (տես՝ Հ. Անունդ Ալիշան, *Հայագատում Պատմութիւն Հայոց*, Բ. հտր., Վեներիկ, 1901), էջ 410: Սմբատ Սպարապետ, էջ 193: Ալեւոացիի մօտ բացայայտ է հակառուսիեան տրամադրութիւնը: Ներսէս Լամբրոնացիի աշակերտն ու միաժամանակ անոր կենսագիրը, դառնութեամբ կ'արձանագրէ թէ Ռուբէն «ազահութեամբ որպէս զԱբայաբ զայգին 'նարովբայ' բռնադատէր զայս աստուածատուր ամրոցս...» (Ակնարկուած 'նարովբի այգիին պատմութեան համար տես՝ *Հին Կտակարան, Երրորդ Գիրք Թագաւորաց*, Գլ. ԻԱ.): Սմբատ, ինք այ ծնունդով Հեթումեան մը, բոլորովին տարբեր կը ներկայացնէ դէպքերու ընթացքը, իրարմէ անջատելով Լամբրոնի պաշարման, ու Ռուբէնի՝ Անտիոքի մէջ

**Ռուբէն Անտիոք կը մեկնի շքախումբով մը, ինչ որ ընդունուած սովորութիւնն է նման պարագաներու<sup>151</sup>: Սակայն հազիւ դաւը քողա-**

դաւադրաբար ձերբակալման պարագաները: Ռուբէնի կողմէ Լամբրոնի պաշարումը ան կը դնէ 1175/6 թ.ին, ու կ'ըսէ թէ երեք տարի տեւեց պաշարումը, ու աւարտեցաւ ձախողութեամբ. «Ու իբրեւ հաստատեցաւ յիշխանութիւն իւր Ռուբէն՝ սկսաւ նեղել զԼամբրոնն պատերազմաւ եւ սղարի զամս ք եւ յոյժ տառապեցոյց զնոսա վասն հին մախանացն զոր նախնի ունէին ընդ միմիանս այլ ոչ կարաց առնուլ» (Սմբատ, էջ 192-193): Իսկ Ռուբէնի՝ Անտիոքի մէջ ձերբակալութիւնը կ'արձանագրէ 1182/3 թ.ի տակ, ու հետեւեալ պայմաններու մէջ. «... Իսկ Ռուբէն պարապեալ վաւաշ ցանկութեանց եւ պոռնկական խորհրդոց, եւ այնր աղագաւ գնաց յԱնտիոք, եւ բրինձ Պեմունդն կալաւ զնա եւ եղ ի բանտի...» (Սմբատ, էջ 194): Լամբրոնի պաշարումը չէր կրնար 1175/6 թ.ին եղած ըլլալ այն պատճառաբանութեամբ, զոր ներկայացուցիմք նոյն թուականին Ռուբէնի կողմէ Մսիսը, Ատանան ու Տարսոնը գրաւուած ըլլալու Սմբատի վկայութեան դէմ: Թէեւ Լամբրոնի պաշարումի մասին Սմբատի նշած թուականին հաւատարիմ է Տոբ. Յ. Տէր Ղազարեան, իր հետեւեալ պատճառաբանութեամբ. «Մանուէլ կայսրը 1176-ին ստուարաբիւ բանակով նամբայ ելաւ Իկոնիոյ սուլթանութիւնը ու Կիլիկիոյ իշխանապետութիւնը ի սպառ ջնջելու մտադրութեամբ: Ռուբէն առ ի կանխագգուշութիւն ուզեց գրաւել Լամբրոնը, որուն իշխանը... կրնար դիւրութիւններ ընծայել կայսերական բանակին Կիլիկիա մուտքը ապահովելու համար» (*Հայկական Կիլիկիա*, էջ 269): «Կիլիկիոյ իշխանապետութիւնը ի սպառ ջնջելու մտադրութիւնը» շատ ենթակայական ըլլալ կը թուի, եւ գուրկ է պատմական տուեալներէ: Սմբատի հաստատումը թէ Ռուբէն երեք տարի պաշարուած պահեց Լամբրոնը, կիսով միչդ կը մնայ: Ռուբինեան զօրքերը երեք տարի մնացին այնտեղ, քայց ոչ Ռուբէնը ինք: Իսկ Սմբատի կողմէ տրուած պատճառաբանութիւնը՝ Ռուբէնի Անտիոք երթալու մասին, պարզապէս փորձ մըն է Հեթում-Պոհեմոնտ դաւադիր գործակցութիւնը ծածկելու: Թէ Անտիոք «գուարնատէրներու նշանաւոր ժամադրավայր» էր ու «ասպարէզը ֆրանգ ազնուականներու մոլութեանց» (Բակուրան, *Մի Տեսութիւն Կիլիկիոյ...*, էջ 119), ոչ ոքի գաղտնիք էր: Նուագագոյն կասկածանքով կարելի է խօսիլ այն մասին թէ 1177-1178 թթ. Հարիմի պաշարման ամիսներուն, Ռուբէն՝ խաչակիր-լատին իշխաններուն հետ յանախակի կերպով այցելած էր Անտիոք՝ գուարնաւալու համար (տես՝ Աստ, էջ 128): Բայց 1185 թ.ի<sup>151</sup>ն: Սմբատի լուրքիւնը այն մասին թէ ինչո՞ւ Պոհեմոնտ կը ձերբակալէր Ռուբէնը, առաւել եւս կը համոզէ ընթերցողը թէ անոր՝ «Ռուբէն պարապեալ վաւաշոտ ցանկութեանց եւ պոռնկական խորհրդոց, եւ այնր աղագաւ գնաց յԱնտիոք» բառերը միայն այլ իրողութիւն մը սփռելու կը ծառայեն: Սմբատ եպս. Սաստեթեան, ապաւինելով միայն Սամուէլ Սկեւուացիի ու Սմբատի վկայութիւններուն, կը գրէ. «...մեծաւ մասամբ իրաւացի պիտի համարեմք Լամբրոնեանց բողոքն առ Բրինձն Անտիոքայ, ինչ որ դաւանանական փոքրիկ երեսոյթ մ'իսկ չունենալէ զատ, պարզապէս հաշտութեան միջնորդ մը ընելու հրաւերին անմեղ կերպարանքն միայն ունի իւր վրայ: Եւ ամենայն վստահութեամբ կարող եմք ըսել թէ Պեմունդ եթէ խաբէական հնարքներ ի գործ դրաւ ընդդէմ Ռուբէնի, մի միայն իւր մտաց արդիւնքն էին անոնք, եւ ոչ թէ Լամբրոնի բնակչաց բեւադրութեամբ կատարուած գործողութիւններ» (Սմբատ եպս. Սաստեթեան, *Ներսէս Լամբրոնացի*, Անթիլիաս, 1981, էջ 48-49): Սաստեթեանի եզրակացութիւնը կը մնայ միակողմանի, ու պաշտպանութեան կարելիութենէ զուրկ:

151. Փըրսիվըլ Պէլլի, իր «Սիսուանի Փառքերը» խորագրուած յօդուածին մէջ, առանց որեւէ աղբիւր յիշատակելու, ու աւելի շատ թափ տալով իր երեւակայութեան, կը

գերծուած Անտիոքի մէջ, Ռուբէնի ընկերակցող մէկ քանի իշխաններ «մազապուրծ գերծեալք գնացին»<sup>152</sup> Կիլիկիա, իրենց հետ տանելով Ռուբէնի հրահանգները իր եղբոր՝ Լեւոնի. իր բացակայութեան ըստանձնել երկրի իշխանի պաշտօնը, հոգատար ըլլալ Կիլիկիոյ ապահովութեան եւ սեղմել Լամբրոնի պաշարումը: Ճաշոցի Յիշատակարանն է որ կու տայ մանրամասնութիւնը. «Ռուբէն յղեաց առ եղբայր իւր Լեւոն, նստել յաթոռ Պարոնութեան, եւ պահել զերկիրն, եւ պնդել զսղար բերդին Լամբրոնի»<sup>153</sup>:

Պոհեմոնտ, ըստ երեւոյթին՝ անկարող գերեզմարուած Ռուբէնէն զիջումներ կորզելէ, «ոտքի կը հանէ բանակ մը» ու կը քալէ Կիլիկիոյ վրայ. կը հասնի մինչեւ Թիլ Լամտուն, ուր կը յամենայ «ամառն մի բովանդակ», եւ սակայն ոչինչ կը յաջողի իրագործել, քանի որ Լեւոն «կորովի կերպով կը դիմադրէ», ու «քաջութեամբ ունէր իշխանութիւնը» եւ «իմաստապէս վարէր զիշխանութիւնն երկրին»: Պոհեմոնտ «ամօթով» կը հեռանայ Կիլիկիայէն, ու գրաւը կը դնէ գերեզմարուած Ռուբէնի վրայ: Լեւոն եւ հայ իշխաններ «կամաւ իւրեանց» կը համաձայնին բանակցութեան: Անտիոքի տէրը կը համակերպի «ի բանս վաճառելոյ. զոր հաւանեալ Պարոն Լեւոն, եւ իշխանք» կու տան «գանձ ու երկիր», ու կ'ազատեն Ռուբէնը<sup>154</sup>: Լեւոն նաեւ համաձայնած պիտի ըլ-

գրէ. «Ռուբէն Գ. կորովի բայց անտակ (գեխ) իշխան մըն էր: Անտիոքի հանրատունն ունէր իր ծպտեալ մէկ այցելութեան ընթացքին, ան անակնկալ կերպով կը ձերբակալուի Պոհեմոնտ Գ.ի կողմէ» (Percival Baily, *The Splendors of Sisvan*, «Ararad», Winter, 1981, p. 43):

152. Մմբատ Սպարապետ, էջ 194:

153. *Ճաշոցի Յիշատակարան* (տես՝ Ս. Անեցի), էջ 219: Վահրամ Բարունի, էջ 212:

154. Մամուէլ Անեցի, էջ 140-141: *Ճաշոցի Յիշատակարան* (տես՝ Ս. Անեցի), էջ 219: Վահրամ Բարունի, էջ 212: Մ. Ասորի, էջ 492: Bar Hebraeus, p. 312. Ռուբէնը ազատելու համար տրուած «գանձին ու երկրին» մասին աղբիւրները կը տարբերին: Անեցիի համաձայն Պոհեմոնտի կը յանձնուին Թիլ Լամտունը, Մսիսը, Սարվանդիֆարը եւ ձիւ դեկան: Միխայէլ Ասորի կը գրէ թէ Պոհեմոնտի տրուեցաւ Թիլը, Ատանան, եւ ոսկի (ատանց բանակը յիշելու): Մմբատ բոյորովից այլ կերպ կը ներկայացնէ Ռուբէնի ազատութեան պարագաները: Ռուբէն կը դիմէ Բեռիին՝ Բակուրանի, որ ան պատանդներ դրկէ Անտիոք, որպէսզի ինք կարենայ դուրս գալ բանտէն եւ իր փրկագինը ապահովել: Ռուբէնի մայրն ու ազգականները կու գան իբր պատանդներ մնալու Անտիոքի մէջ: Ռուբէն իրեն համար փրկագին կը նշանակէ Սարվանդիֆարը, Թիլը, ձոբըրը եւ 1000 դահեկան («Ոսկի դրամն՝ սովորաբար *Դահեկան* կոչի առ մեզ, եւ ռամկօրէն *դեկան*...» Ալիշան, *Միսուան*, էջ 378): Պոհեմոնտ ազատ կ'արձակէ հայ իշխանապետը, որ կը յարգէ իր խոստումը, կը վճարէ փրկագինը, ու ազատ կ'արձակուին պատանդները (Մմբատ, էջ 114): Մմբատ պարզապէս հաւատարիմ է իր ուղեգծին: Զրկելով Ռուբէնի բանտարկութիւնը իր քաղաքական ու ռազմագիտական պատեհադրանութենէն, գայն կը պահէ կենցաղային հարցերու նեղ ու անձնական սահմաններուն մէջ:

լար քակել Լամբրոնի պաշարումը, որ հաշուած 1183 թ. էն, իր երրորդ տարին կը բոլորէր արդէն:

Ռուբէն կը վերադառնայ երկիր ու կրկին «յինքն առեալ զպարոնութիւն»<sup>155</sup>: Իշխանութեան վերադառնալուն՝ Ռուբէն եթէ երբեք կը համակերպի Լամբրոնի անկախութեան, անպատասխան չի թողուր սակայն Պոհեմոնտը: Առաջին իսկ առիթով ան կը վերագրուէ Անտիոքին զիջած հողերը ու անգամ մը եւս Ռուբինեան տիրապետութիւնը կը վերահաստատէ անոնց վրայ: «Յետ այնորիկ», կը գրէ Ասորի, հայերը «առին զտեղիս իւրեանց եւ արհամարհեցին զբրինձն [Պոհեմոնտ]»: Իսկ Պար Հեպրատսի մօտ կը կարգանք. «Ռուբէն, փրկազինով ազատ արձակուելէ ետք, վերագրուեց այս տեղերը (Մսիս եւ Ատանա, Ե. Հ. Ք.)»<sup>156</sup>:

Ներքին ճակատի վրայ իր դիրքերն ու հեղինակութիւնը ամրապնդելէ, եւ Անտիոքի Պոհեմոնտին հետ իր վէճը ի նպաստ իրեն աւարտելէ ետք, Ռուբէն՝ ինչ որ բախտով կը փրկուի Սալահ էլ Տին-Բիւզանդիոն նոր համագործակցութենէ մը սպառնացող վտանգէն, որուն զոհերէն մէկը՝ համաձայն ծրագրին, Կիլիկիան պիտի ըլլար:

Արեւմտեան ժամանակագիրի մը համաձայն, 1185 թ. ին, իր մահէն քիչ առաջ, «ցաւէն ու տառապանքէն բռնադատուած, [Անդրոնիկոս Կոմնենոս] կ'ապաւինի Սալահ էլ Տինի թելադրութեան եւ օգնութեան»: Երկուքին միջեւ երդումով կնքուած զինակցութիւն մը կը զոյանայ, որուն համաձայն, եթէ Սալահ էլ Տին՝ կայսեր խորհուրդով եւ օգնութեամբ յաջողի գրաւել Երուսաղէմը, Սալահ էլ Տին իրաւունք պիտի ունենայ իրեն վերապահել զայն եւ ամբողջ ծովեզերքը, բացի Ասքալոնէն, որ ազատ պիտի մնայ: Սալահ էլ Տին այս երկրամասը պիտի պահէ

155. Ճաշոցի Յիշատակարան (տես՝ Ս. Անեցի), էջ 219:

156. Մ. Ասորի, էջ 492: 'տես տես' Սամուել Անեցի, էջ 141: Bar Hebraeus, p. 321. Մախիբ, առանց աղբիւր յիշատակելու կը գրէ թէ «Լեւոն ստիպեց Պոհեմոնտին Լեբումը Ռուբէնի հետ հաշտութիւն գոյացնելու» (F. Maclair, *Armenia*, p. 171): Թումանով, նոյնպէս առանց աղբիւր յիշատակելու, կը գրէ. «Լեւոն նահանջի մատնեց Անտիոքացին եւ ստիպեց Լեբում Լամբրոնացին ձեռք բերելու Ռուբէնի ազատ արձակումը: Ատանան ու Մամեստրան, իր փրկագինէն մաս մը, վերագրուեցան» (C. Toumanoff, *Armenia and Georgia*, p. 631): Փլըսիվը Պէյի, իր վերոյիշեալ յօդուածին մէջ, խօսելով Ռուբէնի՝ Անտիոքէն ազատուելուն, ու Պոհեմոնտի նահանջին մասին, կը գրէ. «Սակայն Ռուբէն յաջողեցաւ հրապուրել Սիպիլը (Պոհեմոնտի երրորդ կինը), որ Անտիոքի իշխանը մատնեց Լեւոնի ձեռքը: Լեւոն՝ Պոհեմոնտը չարչարանքներէ խնայելու համար Անտիոք բազմաբար պահանջեց, մերժելով ամէն տարբեր զիջում» (P. Baily, *The Splendors of Sisvan*, pp. 43-44): Պէյի մեծ շփոթի մը մէջ է: Պոհեմոնտի դէմ կազմակերպուած Սիպիլ-Լեւոն դաւը, որուն մասին կը խօսի ան, տեղի ունեցած է 1193 թ. ին, Ռուբէն Գ. ի մահէն տարիներ ետք (տես՝ Սմբատ, էջ 204: Մ. Ասորի, էջ 501):

Անդրոնիկոսի հովանաւորութեան ներքեւ: Իսկ կայսրը պիտի տիրանայ Իկոնիոյ սուլթանէն գրաւուած բոլոր հողամասերուն, մինչեւ Կիլիկիա եւ Անտիոք, եթէ նոր զինակցութիւնը յաջողի գրաւել զանոնք: Սակայն «մահուան պատճառով խափանուած, Անդրոնիկոս չի յաջողիր այդ ծրագիրը գործադրութեան դնել»<sup>157</sup>:

Ռուբէնի վերջին երկու տարիները ռազմա-քաղաքական ճակատի վրայ նորութիւններ չեն արձանագրեր: Ուղղադութեան կարճատեւ նոր շրջան մը կը բոլորէ երկիրը, երբ, ենթադրաբար, ճիգերը պիտի կեդրոնանան շինարարական աշխատանքներու վրայ:

Պատմական իրողութիւն է թէ Ռուբէնի իշխանութեան տասներկու տարիները խաղաղութեան երկարատեւ ժամանակաշրջաններ չեն յայտնաբերեր: Հակառակ այս փաստին սակայն, հայկական սկզբնաղբիւրներ կը խօսին Ռուբէնի «աշխարհաչէն» եւ «առատութեամբ» երկիրն կառուցանելու մասին<sup>158</sup>: Չամչեանց կը մանրամասնէ. «Սոյն այս Ռուբէն . . . նորոգեաց ՚ի բազում տեղիս զբազում աւանս եւ զբերդըս»<sup>159</sup>: Նոր պատմագրութեան մէջ պատկերը աւելի կը գունազարդուի. «Ռուբէն Գ. իր երկիրը վերադառնալով (Անտիոքի գերեզմարութենէն, Ե. Հ. Ք.), ի յայտ եկաւ ինչպէս անցեալին մէջ, անհուն բարութեան տէր վեհապետ մը . . . : Ռուբէն Գ. շինեց քաղաքներ ու վանքեր եւ բազմաթիւ նուիրատուութիւններ ըրաւ»<sup>160</sup>: Առանց հարցադրելու վերոյիշեալ մէջբերումներու ստուգութիւնը՝ զանոնք նկատելով ընդհանուր բնոյթի արտայայտութիւններ, արժէր սակայն արծարծել այլ խնդիր մը: Ռուբէնի վերագրուած շինարարական այս աշխատանքները, որոնք նաեւ տնտեսական աշխոյժ կեանքի մը գրաւականը պէտք է ըլլան, արդեօ՞ք կարիքը ստեղծած էին սեփական դրամահատութեան մը:

Վերոյիշեալ հարցով՝ խնդրոյ առարկայ է դրամ մը, որուն շուրջ տարբեր կարծիքներ զարգացած են ժամանակի ընթացքին: Ոսքը կը վերաբերի պղինձ դրամի մը, որ կը գտնուի Վենետիկի Միսիթարեան թանգարանին մէջ, եւ զոր Ալիշան վերագրած է Կոստանդին Ա. ի կամ թորդս Ա. ի<sup>161</sup>: Բասմաջեան՝ իր հերթին որդեգրած է Ալիշանի երկրնտրանք արտայայտող կեցուածքը<sup>162</sup>: Պտուկեան, դեռ 1962 թ. ին, միայն

157. A. A. Vasiliev, *History of the Byzantine Empire*, vol. 2, p. 437.

158. *Ճաշոցի Յիշատակարան* (տես՝ Ս. Անցի), էջ 218: Վահրամ Բարունի, էջ 211:

159. Հ. Մ. Չամչեանց, *Պատմութիւն Հայոց*, Գ. հտր., էջ 140:

160. Հ. Պաստրմանեան, *Հայոց Պատմութիւն*, Ա. հտր., էջ 253:

161. Ալիշան, *Սրտուան*, էջ 378:

162. Կ. Բասմաջեան, *Հայկական Ընդհանուր Դրամագիտութիւն*, էջ 138:

արտագրել է ետք Ալիշանի վերոյիշեալ կարծիքը խնդրոյ առարկայ պղինձ դրամի մասին<sup>163</sup>, եւ ընդունելով հանդերձ թէ Ռուբէն Գ.ի կողմէ հատանուած «ոչ մէկ դրամ գտնուած է ցարդ», կը շարունակէ. «Յամենայնդէպս, մէկը չի կրնար ամբողջութեամբ բացառել հաւանականութիւնը թէ Ռուբէն կարգ մը դրամներ հատանեց, որովհետեւ թէ՛ իր նախորդը եւ թէ՛ իր յաջորդը դրամներ հատանեցին»<sup>164</sup>: Սակայն 1965 թ.ին Պտուկեան կը մերժէ Ալիշանի յայտնած կարծիքը վերոյիշեալ պղինձ դրամի մասին, ու զայն կը վերագրէ Ռուբէնի, բնական է յառաջ քաշելով իր պատճառարանութիւնը: Պտուկեանի համաձայն, «... դրամին մէկ կողմին վրայի բերդի կամ դուռի պատկերը կ'ապացուցանէ, որ այս դրամը կը պատկանի տասնութերկու-երրորդ դարու վերջի շրջանին եւ ոչ թէ առաջին մասին: Գրեթէ ձեւերը շատ գեղարուեստական են ... կը նմանին Լեւոն Բ.ի (1187-1198) պղինձներու վրայ գտնուած գրերուն, եւ տրամաբանական է այս դրամը վերագրել Լեւոն Բ.ի շրջանին: Յիշենք նաեւ որ այս դրամին վրայ այն տեսակ բերդեր կը տեսնուին, որոնց կը հանդիպինք Երուսաղէմի Ամօրի թագաւորին դրամներուն վրայ (1163-1173). իսկ այս թագաւորը կ'իշխէր Ռուբէնի ժամանակամիջոցին:

«Այս նկատումներով մենք արդարացի կը գտնենք այն կարծիքը թէ այս դրամը կը պատկանի Ռուբէն [Գ.]ի: Թէեւ այս դրամը շատ մաշած վիճակի մէջ է եւ վրայի գրութիւնը կարելի չէ որոշապէս կարդալ, սակայն կը փորձուինք հետեւեալ ձեւով կարդալ: Բերդի կողմը, (ՌՈՒԲ)ԷՆ ՈՐ(ԴԻ) (ՍՏ)ԵՓ(ԱՆԷԻ), եւ խաչի կողմը (ԿԱՐՈՂՈՒԹԲ)Ն ԱՅ Է»<sup>165</sup>:

Անտիոքէն վերադարձէն երկու տարիներ ետք, քառասուն երկու տարեկան հասակին, Ռուբէն «ի վախճան կենաց հասեալ», «կրօնաւորեալ» կը հեռանայ իշխանութենէն, Ռուբինեան գահը յանձնելով իր եղբոր՝ Լեւոնի<sup>166</sup>: Երկար չի տեւեր Ռուբէնի կրօնաւորի կեանքը: Ան կը մեռնի 1187 թ.ի Մայիսի 6-ին<sup>167</sup>:

Անբնական ոչինչ կար Ռուբէնի կրօնաւորի սքեմը հագնելու ո-

163. Paul Z. Bedoukian, *Coinage of Cilician Armenia*, New York, 1962, p. 67.

164. Նոյնը, էջ 8:

165. Զ. Պտուկեան, *Ռուբինեան իշխաններու Դրամները*, սիւն. 263-264: Նաեւ տես՝ P. Z. Bedoukian, *Medieval Armenian Coins*, Paris, 1971, p. 10.

166. Ս. Անեցի, էջ 142: *Ճաշոցի Յիշատակարան* (տես՝ Ս. Անեցի), էջ 219: Վահրամ Բարունի, էջ 212: Ամբաս չի խօսիր Ռուբէնի աշխարհական կեանքէն հրաժարած ըլլալուն մասին:

167. Ալիշան, *Սրտուան*, էջ 58, ծան. 4:

րոշումին մէջ: Ալիշանի եզրակացութիւնը, թէ ան «զգաստացեալ եւ զղջացեալ ՚ի վերայ շոայութեանցն, խնդրեաց ներումն եւ ՚ի Հեթմեանցն՝ վասն քինուն եւ տառապանացն... արկեալ զիւրեաւ սքեմ կրօնաւորական...»<sup>168</sup>, բարի ցանկութեան մը արտայայտութիւնը ըլլալէ անդին չի կրնար անցնիլ: Այդքան երիտասարդ՝ Ռուբէնի քաղաքական կեանքէն հրաժարելուն ու կրօնաւորի զգեստով մահը զիմաւորելուն մէջ՝ հայ իշխանապետին անողոք ու անբուժելի հիւանդութեան մը զոհը դարձած ըլլալու փաստը միայն կարելի կ'ըլլայ տեսնել: Թէ Ռուբէն «բարեպաշտ» մարդ էր, այդ մասին կը վկայեն նաեւ ժամանակակից գրիչներ ու հետագայ պատմիչները: 1181 թ.ի ձեռագրի մը գրիչը՝ Թորոս, կը գրէ. «Եւ գրեցաւ սա յանապատիս Դրազարկ կոչեցեալ... յիշխանութեան այսմ գաւառի Ռորենի բարեպաշտ իշխանի»<sup>169</sup>: 1183 թ.էն հասած ձեռագրի մը մէջ կը կարդանք. «Արդ եղեւ գրչութիւն սորա ի թուարբերութեանս Հայոց ՈԼԲ ( 1183) ... գրեցաւ Աւետարանս ձեռամբ իրմով անարժանիս Յովսէփայ՝ ... առ սահմանաւք Տարսոն քաղաքի եւ ընդ իշխանութեամբ մեծազար եւ բարեպաշտ պարոնին Ռաւբինայ, ...»<sup>170</sup>: Իսկ Հեթում Պատմիչ կը վկայէ. «Ռովբէն որդի Ստեֆանէի, այր բարբարոյ եւ իմաստուն»<sup>171</sup>: Արդ՝ «բարեպաշտ» Ռուբէնի համար շատ բնական պիտի ըլլար իր կեանքի կանխահաս վերջալոյսին կրօնաւորի զգեստ հագնիլը, ինչ որ եւ միջնադարեան արքունիքներու մտայնութեանց եւ աւանդութեանց հետ հաշտ էր:

Ռուբէն արու գաւակ չունէր: Իզապէլի հետ իր ամուսնութիւնը իրեն չնորհած էր երկու դուստրեր՝ Ալիծ եւ Ֆիլիպինէ, որոնց ապագան ան նոյնպէս կը յանձնէ իր եղբորը: Բայց ինչ որ աւելի կարեւոր էր, Ռուբէնի կողմէ Լեւոնի փոխանցուած այն կտակն էր, որուն, դժբախտաբար գրեթէ չանդրադառնար հայ նոր պատմագրութիւնը՝ սկսած Հայր Միքայէլ Չամչեանցէն<sup>172</sup>:

Իր իշխանութեան հետ իր դուստրերն ալ Լեւոնի յանձնած պահուն, Ռուբէն «խրատեաց զեղբայրն իւր բազում իմաստութեամբ եւ բարութեան խրատով»<sup>173</sup>: Սակայն Անեցի կը խօսի ոչ միայն «խրատ»ի

168. Նոյնը, էջ 58:

169. Գարեգին Ա. Կաթողիկոս, Յիշատակարանք Ձեռագրաց, Ա. հտր., Անթիլիաս, 1951, սիւն. 485:

170. Նոյնը, սիւն. 1029:

171. Հեթում Պատմիչ, Պատմութիւն Ազգին Ռովբինանց (տես՝ Մանր ժամանակագրութիւններ, Բ. հտր.), էջ 103:

172. Միայն Օրմանեանն է որ տողի մը մէջ բառացի կը մէքեքեք գայն, առանց ծանրամալու հարցին (տես՝ Ազգապատում, Ա. հտր., սիւն. 1483-1483):

173. Ճաշոցի Յիշատակարան (տես՝ Ս. Աճեցի), էջ 219:

մը, այլ եւ «պատուէր»ի մը մասին, որ աւելի շատ քաղաքական ծանրակշիռ կտակի մը բնոյթը ունի: Անեցի կը գրէ. Ռուբէն «զԼեւոն զեղբայրն իւր բազում բանիւ խրատեալ՝ եւ ի յաթոռ իւրոցն նախնեաց եղեալ՝ եւ պատուէր ետ նմա՝ ո՛չ յօտարուստ փեսայ ածել եւ ոչ հարսն, զի մի տիրեսցեն չալոց . . . (ընդգծումը մեզմէ, Ե. Հ. Ք.)»<sup>174</sup>: Ռուբէնի ընտանեկան ներքին կեանքը ոչինչով բացատրող այս կտակը կը վկայէ սակայն խորադատ ու հեռատես իշխանապետի մը մասին, որ միջազգային քաղաքական թատերաբեմին վրայ իր ապրած աւելի քան տասնամեայ փորձառութենէն մեկնած՝ կ'եզրակացնէր թէ հայկական գահ մը օտար ամուսնութիւններով կարելի չէ պահել:

Լեւոն կը ժառանգէր կտակը, բայց անոր գործադրութիւնը՝ ուրիշ պատմութիւն է արդէն:

174. Ս. Անեցի, էջ 142: Վ. Բարունիի մօտ կը կարդանք.

«ԶԼեոն բազում՝ քանիւ խրատեալ,

«Եւ ի յաթոռ՝ նախնեաց եղեալ.

«Զիւր գղստերսն՝ ի նա տուեալ,

«Եւ պատուիրան՝ գայս աւանդեալ:

«Ոչ արտաբուստ՝ փեսայ ածեալ,

«Զի մի՛ չալոց՝ լիցիւն տիրեալ . . .» (էջ 212–213): Սմբատ լուռ է այս մասին:

**PRINCE RUPEN III AND HIS WILL**

YERVANT H. KASSOUNY

**(Summary)**

The twelve-year reign of Prince Rupen III (1175-1187) of Cilician Armenia has never been studied in detail. The author has made a thorough study of this period using extensively primary and secondary sources. He is mainly concerned with the internal struggles of the principedom and its international relationships with Byzantium and the crusading and moslem powers of the East. The following topics are discussed in the article in their chronological order: Rupen's coming to power (1175); the siege of Harim by the crusaders and Rupen (1177); Salah el-Din's raid of Cilicia (1180); Rupen's marriage to Isabelle of Thorone in Jerusalem (1181); the conflict with his brother Levon (1181); the power struggle between Cilicia's Greek governor Issac Comnene, Bohemond III of Antioch and Rupen for Cilicia (1182); the conflict between Rupen and the Hethumids of Cilicia (1183); the capture and imprisonment of Rupen by Bohemond III (1185); the release of Rupen and his return to Cilicia; and his will where he advises his brother and successor Levon not to bring in Cilicia a foreign spouse so that will not usurp power over the Armenians.